# ԳՈՐԾ

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՒ

## ԱԶԳԱՅԻՆ

### ԱՄՍԱԳԻՐ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ—ԱՊՐԵԼ

№ 1

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Վարդանեանի Եւ ընկ.

1884

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I Ընթերցողներին . . . . . .—1
II Երևումեն (Պատկեր) . . . . Շիրվանզադէ.—8
III Բժիշկ կանայք Հնդկաստանում . Ս. Թաթէոսեան.—21
IV Սիրոյ Երգ (Ոտանաւոր) . Պատահական Երգիչ։—27
V Սիմոնի Հայրը (Դիւի դը-Մոպասանի) Տ. Մատոյեան.—29
VI Գեղջուկի յոյսը (ոտանաւոր) . . . . Սրինգ.—40
VII Բուրժուազիան մեր գրականութեան մէջ-Հ. Առաքելեան.42
VIII Խրիմեան Հայրիկ . . . Յ. Տէր-Մովսէսեան.—47
IX Անձնազոհ Նապաստակ (Շչեդրինից) Շիրվանզադէ.—71
X Նամակներ իմ ընկերին . . . . . Ընկեր.—79
XI Մի Պատասխան . . . . . Ս. Հախումեան.—84
XII Մամուլի Տեսութիւն . . . . . .—90
XIII Յայտարարութիւններ . . . . . —

*Տեղի սղութեան պատճառով «Գործի» «Ներքին տեսութիւնը» չկարողացանք մտցնել ներկայ համարի մէջ։*

Հարգելի Միհրան Աֆրիկյան
Հարգելի Գրիգոր Գրիգորյան
Հ. Սահակյան

# ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

---

Հրատարակելով «Գործ»-ի III հատորը, ընթերցող հասարակութեան հետ մի կապ պահպանած լինելու համար, մինչև նրա կանոնաւոր հրատարակութիւնը՝ մենք թոյլ ենք տալիս մեզ մի քանի խօսք ասել։

Ծանր է ընդհանրապէս գրական անձի պաշտօնը, մանաւանդ հայ գրական անձինը. և առաւել ծանր է հայ ամսագրի խմբագրի վիճակը, եթէ այդ խմբագիրը կամ ամսագիրը հրատարակող անձինք իրենց այդ հրատարակութեան մէջ տեսնում են ոչ թէ մի արհեստ, եկամտի մի աղբիւր, եթէ նոքա չեն մղվում յառաջ, որտեղից որ քամին փչում է, այլ ազատ կամքով ընտրելով իրենց համար մի նպատակ, հիմնուած որոշ, հաստատ և անխախտ համոզմանց ու իդէալների վրայ՝ ձգտում են հասնել նրան։ Ծանր և յուսահատական է նրա համար, որ մինչդեռ շահադիտական սկզբանց վրայ հիմնուած հրատարակութիւնները յաջողութեամբ յառաջանում են և հասարակութիւնից օգնութիւն են գտնում, առաջին տեսակի հանդէսները ստիպուած են լինում ասպարիզից խոյս տալ՝ նիւթական միջոցների պակասութեան պատճառով։ Թէև ճշմարիտ է, որ «Գործ» ամսագրի անյաջողութեան և անկանոնաւոր հրատարակութեան պատճառները մասամբ եղել են և արտաքին, բայց գլխաւոր պատճառն այն է եղել, որ ընթերցող հասարակութիւնը պլացել է տալ ամսագրին և իւր նիւթական օժանդակութիւնը։ Իսկ հասարակութեան բարոյական խրախուսանքը մեր ամսագիրը վայելել է և դա պակաս չէ կոզդուրել մեզ, անյողդողդ պահել մեր ցանկութիւնը՝ շարունակել «Գործը»։

Հանգամանքների շնորհիւ, ի հարկէ, «Գործ»-ի բաժանորդների թիւը հազիւ հասնում է 70-ի. դրա մեծ մասը

Լաս անվճար են։ Թէև իր առատաձեռնութեամբ յայտնի Աղէքսանդր Մելիք-Հայկազեան, «Գործ»-ի հրատարակութիւնը պահպանելու համար, նուիրեց միանուագ 100 ռուբլի. բայց այդ գումարը հազիւ բաւականացաւ առաջին համարի հրատարակութեան ծախքի դէֆիցիտը ծածկելու։ Միւս կողմից, «Գործ»-ի Խմբագիրը—հրատարակիչը, խաբուելով իր յոյսերի մէջ, երկար ժամանակ առանց գլաղմունքի մնալով և յոյսը կտրելով հասարակութեան օգնութիւնից, ստիպուեցաւ ուսուցչական պաշտօնով մինչև Պարսկաստան հասնել։ Հասկանալի է ուրեմն՝ որ այդպիսի պայմանների մէջ, անկարելի է գէթ առ այժմ կանոնաւորապէս ամսագիրը հրատարակելուստի «Գործ»-ի Խմբագրութիւնը ստիպուած է երբեմն երբեմն մի համար հրատարակել, և դադարեցնել առ այժմ բաժանորդագրութիւնը, մինչև այն օրը, երբ կարելի կը լինի կանոնաւորապէս և անխափան ամսէ-ամիս հրատարակել և որի մասին, ի հարկէ, իր ժամանակին կը յայտարարուի ընթերցող հասարակութեան։ Այդ պատճառով, թող այն բաժանորդները, որոնք վճարել են բաժանորդագինը կամ սպասեն այդ օրին, բաւականանալով մերթ մերթ հրատարակուող համարներով, կամ եթէ չեն ցանկանում, դիմեն Խմբագրութեան՝ իրենց բաժանորդագինը յետ ստանալու։ Այս կարճ բացատրութիւնը տալուց յետոյ, մենք կամենում ենք մի քանի խօսքով պարզել, թէ ինչ շարժառիթներից դրդուած, «Գործ»-ի Խմբագրութիւնը կազմող անձինք ձեռնարկեցին մի նոր ամսագրի հրատարակութեան։ Մեր դիտաւորութիւնը չէ մանրամասն խօսել «Գործ»-ի նպատակի, ուղղութեան մասին. նպատակը և ուղղութիւնը ինքն ամսագրի ընթացքը ցոյց կը տայ։

Ամեն մի գրականական նոր երևոյթ պիտի ունենայ իր ծագման և գոյութեան արտայայտիչ պատճառը—raison d'être-ը։

«Գործը» Լաս կարող է ապրել և շարունակուել, եթէ նա ունի հայոց գրականութեան մէջ իւր յայտնի դերը, իւր raison d'être-ը։

Տեսնենք նախ և առաջ, թէ ինչ է պահանջվում ամեն մի

օրինաւոր և որոշ նպատակի ու համոզմանց ծառայող դրականական օրագրից։

Ժողովրդի յառաջադիմութիւնը պէտք է ամեն գործիչի և հասատատութեան ձգտումն ու հոգացողութեան առարկան լինի։ Բայց յառաջադիմութիւնը պտուղ է միայն խորին մըտածողութեան և առանց ամբողջ ազգաբնակութեան մտածողութեան՝ նա չէ կարող ծնուել. ուստի, նախ և առաջ պէտք է ժողովրդին անկախ մտածել սովորեցնել։ Այդ մեծ գործի մէջ, օրագիրն էլ իւր պատուաւոր տեղն է բռնում՝ ժողովրդի, անկախ, ինքնորոյն մտածող մասի օրգանը, մտքի արտայայտիչը դառնալով։ Այդ տեսակէտը հիմն ընդունելով, իւրաքանչիւր լուրջ օրագիր իրեն նպատակ է դնում՝ ժամանակակից կարևոր, քաղաքական, տնտեսական, գեղարուեստական, սոցիալական և այլ հարցերի պարզելուն նպաստել և նրանց խելացի լուծմանն օգնել։

Մի խօսքով, օրագրի պարտքն է զգայուն լինել և խօսել այն բոլոր կարևոր խնդիրների մասին, որոնց արտադրել և առաջ է բերել նոյն իսկ կեանքը։ Նա պէտք է ուշադրութեամբ հետևէ ժողովրդի բնական զարգացման ընթացքին. գծագրէ նրա հոգեբանական, հասարակական և տնտեսական կեանքի նշանաւոր իրողութիւնները, այն սկզբունքը աչքի առաջ ունենալով՝ թէ որ և իցէ մի երկրի իրական յառաջադիմութիւնը նրա բնակիչների հոգեկան և նիւթական ոյժերի ազատ զարգացման մէջ է կայանում։ Այդ կարևոր խնդիրը իրագործելու համար, օրագիրը պէտք է քննէ գիտնական տեսակէտից հայրենիքի և ժողովրդի մտաւոր և տնտեսական վիճակի մասին նոր ծագած հարցերը և տեղեկութիւնները։ Այդ նպատակին կարելի է հասնել միայն 1.) յօդուածներով՝ վերաբերեալ ժողովրդական կեանքի մասնաւոր հարցերին և պահանջմունքներին, 2.) մեր հայրենիքի մէջ տեղի ունեցած նշանաւոր դէպքերի տեսութեամբ։

Միւս կողմից, հայրենիքի մէջ ծագած խնդիրների լիապէս և բազմակողմանի լուծելու համար՝ պէտք է ուշադրութիւն դարձնել և ուրիշ երկրների ու պետութիւնների կեանքի վրայ, մանաւանդ ներքին Ռուսիայի և ռուս ժողովրդի կեան-

քը. նորա հասարակական կազմակերպութիւնը, նորա կեանքի նշանաւոր երևոյթների ուսումնասիրութիւնը մեզ համար անհրաժեշտ պիտի լինին։ Այդ կողմից, մեր մամուլի վարմունքը խիստ պարսաւելի է. Ռուսաստանի կեանքը շատ սերտ կապ և յարաբերութիւն ունի մերինի հետ, բայց այդ երկրի հասարակական կազմակերպութիւնը, ներքին կեանքը մեզ համար terra incognita է (անյայտ երկիր է). մեր մամուլը չէ ծանօթացրել մինչև այսօր ներքին Ռուսաստանի տեղական ինքնավարչական, այսպէս կոչուած՝ զեմսկի հաստատութեանց հետ, Ռուսաստանի հողային խնդրի հետ և այլն։ Նոյն իսկ ռուս գրականութիւնը, որից մեր մանուկ և աղքատ գրականութիւնը շատ օգուտներ կարող էր քաղել՝ մեզ ծանօթ չէ. մինչև անգամ այդ գրականութեան հզօր և փայլուն արտադրութիւնները, օրինակ՝ Գոգոլի, Տուրգենեվի, Տոլստոյի, Դաստայեւսկու, Շչեդրինի պէս առաջնակարգ գրողների երկասիրութիւնքը, դեռ մինչև այսօր, մնում են առանց թարգմանելու. մինչդեռ զանազան եւրոպական միջակ հեղինակների աննշան շարադրութիւնները անդադար թարգմանվում են։ Դա մի աններելի սխալ է, որ գործել են մեր մամուլին և գրականութեան ներկայացուցիչները. ի հարկէ, դա էլ իւր պատմական պատճառներն է ունեցել. այդ պատճառները այս տեղ բացատրելը անյարմար է, ուստի՝ լռում ենք.... Բայց այդ պատճառներին մենք աւելի ենք նշանակութիւն տալիս, քան հարկաւոր է. պէտք է անկեղծութեամբ որոշել մեր յարաբերութիւնը ռուս գրականութեան, մամուլի և առ հասարակ ռուս, ինչպէս և եւրոպական գրականութեան և քաղաքակրթութեան հետ։

«Մեր միակ փրկութիւնը, ազատութիւնը, երջանկութիւնը՝ եւրոպական լուսաւորութիւնը ընդունելու մէջ է կայանում».—ահա՛ ինչ որ մենք լսում ենք ամեն կողմից։ Եւ հաւատարիմ այդ մօդայական դաղափարին, ամեն մի համբակ, թերուս թղթակից, որոնցով վխտում է մեր լրագրութիւնը, իրեն իրաւունք է համարում գոչել. «Հայե՛ր, թողէ՛ք ձեր ասիականութիւնը. խաւարասէր, յետադէմ, ասիացի հայն ե՞րբ պէտք է եւրոպական լուսաւորութիւնը ըմբռնէ և այլն»։

Մենք փոքր ինչ ուրիշ կարծիք ունինք այս մասին.—մենք

գտնում ենք, որ եւրոպական լուսաւորութեանը կուրօրէն հետեւելը և նրան կուրօրէն ընդունելը՝ չէ կարող ազգին մի մեծ բարիք լինել։ Համաձայն և ջերմ ջատագով ինք այն մտքին՝ թէ մեր ժողովուրդը պէտք է օգուտ քաղէ եւրոպական մտաւոր և հոգեկան ահագին ժառանգութիւնից. բայց այդ ժառանգութիւնը ընդունելիս՝ պէտք է միշտ քննել, թէ եւրոպական կուլտուրայի մէջ ինչ բան ճշմարիտ ընդհանուր մարդկային է, ինչ բան պտղաբեր է, ինչ բան կարևոր է մեր հայրենիքի զարգացման և բեղմնաւորութեան համար և ինչ բան նրա մէջ մասնաւոր է, անցողական՝ մինչև անգամ կեղծ և վնասակար։ Այդպիսի կրիտիկական յարաբերութիւնը կարևոր է, նա մանաւանդ այժմ, երբ Եւրոպան սարսափելի ճգնաժամի մէջ է գտնվում և մենք հաւատալով կուրօրէն Եւրոպայի խօսքին՝ «շատ հեշտութեամբ կարող ենք հիւանդ երևոյթները և պատալօգիկական գործողութիւնները նոր, ընդհանուր—մարդկային և արարչական սկզբունքի տեղ ընդունել։» Եւրոպական քաղաքակրթութիւնը մեր բարոյական անձնաւորութեան և մեր ստեղծագործական ոյժերի զարգացման միջոց պիտի դառնայ. բայց այդ կուլտուրայի իւրացնելու դժուար գործողութեան մէջ պիտի կարողանանք հաստատել և պահպանել մեր մտաւոր ազատութիւնը և հոգևոր անկախութիւնը, այնքան՝ի հարկէ, որքան նա արգելք չէ ընդհանուր համամարդկային առաջադիմութեան։

Այն ժամանակ միայն և այդ կերպով սեպհականած արևմտեան քաղաքակրթութիւնը կարող է մեր փրկութեան նշանաբանը համարուել։

Մ՚իևնոյն կարծիքը ունենք և ռուս քաղաքակրթութեան և գրականութեան վերաբերմամբ։ Մենք պէտք է ծանօթանանք ռուս գրականութեան այն արտադրութեանց հետ, որոնք թէև նկարագրում են ռուսաց կեանքը իր բոլոր գեղեցիկ և յոռի, մխիթարական և անմխիթար կողմերով, բայց որոնց մէջ միևնոյն ժամանակ երևում են հանրամարդկային գծեր, որոնք համահաւասար կերպով սիրելի են բոլոր մտածող և ամեն ազգի լաւագոյն մարդկանց համար։ Այդ տեսակից են, օրինակ՝ Տուրգենեվի, Տոլստոյի գրուածները և հէնց դրա համար է, որ ամբողջ Եւրոպան այնքան սիրում

էր Տուրգենեվին, թէև նա նկարագրում էր ըստ մեծի մասին ռուս դիպեր։ Եթէ մինչև այսօր մեր գրականութիւնը՝ մամուլը չէ հետաքրքրուել ռուսաց գրականութիւնով, եթէ փոխանակ Տուրգենեվի, Գոգոլի գրուածքների՝ թարգմանուել են եւրոպական լեզուների անհամ ըսմաններ և միջակ երկասիրութիւններ, դրա պատճառն պէտք է որոնել նրա մէջ, որ մեր գործողները, ինչպէս հարկն է, չեն հասկացել մեր ունենալի յարաբերութիւնը դէպի եւրոպական և ռուսական կուլտուրան— մշակութիւնը։ Մեզ հարկաւոր է ընդօրինակել, թարգմանել այդ երևելի նկարիչների գործերը, որոնք կարողացել են մասնաւոր, ազգային տիպերը հանրամարդկային շինել,—ամեն մարդի համար հասկանալի և սիրելի։ Այդ տեսակ ուղղութիւն մտցնելը մեր գրականութեան մէջ և ներշնչելը՝ գրականութեամբ զբաղուողների և պարբերական մամուլի պարտքն և գլխաւոր գործերից մինն պիտի լինի։

Այժմ, երբ չունենք մենք հաստատապէս այդ ուղղութեամբ ընթացող և այդ նպատակին ծառայող մի ամսագիր՝ «Գործ»-ի հրատարակութիւնը անտեղի չէ և անօգուտ։ Մենք ասելինք, որ ամեն մի գրականական երևոյթ պէտք է իր գոյութեան իրաւունքը, արդարացուցիչ պատճառն ունենայ։ Եթէ որ և է մի նոր ամսագիր կարողացաւ ազգի, հասարակութեան միջից նոր ոյժեր ստեղծել, նոր ոյժեր 'ի գործունէութիւն հրաւիրել և այդ ոյժերի ստեղծագործական ընդունակութեան սատար լինել՝ նա արդէն դրանով գոյութեան և շարունակութեան մի հզօր իրաւունք է ձեռք բերում։ «Գործ»-ի մէջ աշխատողները բոլորն էլ նոր, թարմ ուժեր են։ Հէնց այդ հանգամանքը և ազատում է «Գործ»-ին դիմել ըէկլամների, որից մենք միշտ փախուստ պիտի տանք։ Այդ չէ նշանակում թէ «Գործը» պիտի խոյս տայ մեր մի երկու հռչակաւոր գրողների աշխատութիւններով զարդարելու իր էջերը, եթէ միայն այդ ամենիս համակրելի գրողները արժանացնեն մեզ իրենց աշխատակցութիւնով։

Ի վերջոյ հարկաւոր ենք համարում մեր շնորհակալութիւնքը յայտնել այն անձանց, որոնք յայտնելով մեզ իրենց համակրութիւնը, խորհուրդ էին տալիս մեզ (ի նկատի ունենալով Գործի I համ. տպած մեր աշխատակիցներից մէկի յօդուածը Ա. Յ. դէմ) աւելի ներողամտութիւն և սէր

մտցնել մեր բանակռուի մէջ։ Որովհետև այսուհետև և՝ մենք կարող ենք կռիւների (գրականական) մէջ մտնել, ուստի անօգուտ չենք համարում բացատրել այստեղ մեր հայեցուածքը այդ խնդրի մասին։ Փոխանակ մեր սեպհական խօսքերը բերելու, մենք աւելի համոզեցուցիչ ենք գտնում յառաջ բերել այստեղ ռուս ամսագիր Рус. Богат. անցեալ տարուայ Դեկտ. համարում տպած հետևեալ խօսքերը նոյն խնդրի մասին, որովհետև այդ կտորը ճիշտ համապատասխանում է մեր հայեցուածքին և մեր դրութեանը։—

«Մենք միշտ ընդունել ենք, ընդունում ենք և պիտի ընդունենք մեր գործունէութեան իբրև հիմն՝ խելացի սիրոյ (սէր և միտք) սկզբունքը, բայց բացարձակ ներումն չարութեան՝ դա ուղղակի թշնամութիւն կը լինէր խելացի սիրոյ սկզբունքին։ Ով շատ է սիրում, նա ամենից շատ և զօրեղ է և ամենից սաստիկ է պատերազմում չարութեան դէմ։ Բացարձակ ամենաներումն — այդ կամ յանցանք է կամ վնասակար անտարբերութիւն։ Խօսելով սիրոյ ուսուցչի խօսքերով, այդ տեսակ ամենաներումն կարող են թոյլատրել միայն նոքա, որոնք ոչ տաք են, ոչ ցուրտ։ Ուրիշ բան է հարկաւոր. հարկաւոր է, որ նոյն իսկ չարութեան դէմ պատերազմողը իրեն առաջնորդ ունենայ միայն խելացի սէրը և ոչ որ և է անձնական հաշիւ։ Մենք ճանաչում ենք այդ սկզբունքը. նրա վերայ պիտի հիմնուենք և ապադայում, բայց ոչ ամենաթողութեան պրինցիպի վերայ։»

# ԵՐԵՒՈՒՄԵՆ

—Օրը մթնեց։ Ծանր, վշտալի օր. նա անցաւ... գիշեր է. կ'լուսանայ, արեգակը դուրս կ'գայ եւ դարձեալ կ'սկսուի նոյն տաղտկութիւնը, նոյն ձանձրալի կեանքը, որը ահա ուղիղ հինգ տարի է որ ինձ մաշում է։ Այդպէս շարունակել այլ եւս անհնարին է. այդ արդէն չափազանցութիւն է, ստորութիւն է եւ վերջապէս անբարոյականութիւն է։ Դառն է այդ ճշմարտութիւնը, բայց նա ճշմարտութիւն է եւ ես այժ չունեմ նրա երեսին ուղիղ նայելու։ Ի՞նչ եմ անում, ո՞ւր եմ գնում, ինչո՞ւ համար եմ ապրում։ Այո՛, հէնց խնդիրը կայանում է այդ չորս բառերի մէջ-«ինչո՞ւ համար եմ ապրում». ի՞նչ է իմ գոյութեան նպատակը։ Մի՞թէ միայն ապրելը։ Բայց լոկ ապրելը մի՞թէ բարոյական մարդու կեանքի նպատակ է։—Ամենեւին։ Ապրել՝ միայն ապրելու համար—այդ ստոր եւ զզուելի կեանք է, որը արժանի է միայն անբան կենդանուն։ Բայց ի՞նչ ասել է կեանքի նպատակ։—Սա մարդկային կեանքի յենարանն է։ Սուտ է, որ ասում են թէ կան մարդիկ առանց նպատակի. ես չե՛մ հաւատում։ Աննպատակ կեանքը մահ է. նա չկայ։ Հարուստի եւ աղքատի, տգէտի եւ իմաստունի, բարոյական մարդու եւ անբարոյականի կեանքը ունի որեւէ մի յենարան։ Ամեն մարդ ձգտում է հասնել իր ցանկացածին եւ ահա այդ ցանկացածին հասնելու յոյսն է, որ պահում է ամեն մարդու գոյութիւնը. հակառակ դէպքում, մարդ չի կարող ապրել, նա կ'անհետանայ, կ'շոգիանայ իր անբովանդակ կեանքի անբովանդակ տարածութեան մէջ։ Բայց ես ի՞նչ եմ։—Ոչինչ. դատարկ տարածութիւն, եթերական էութիւն։ Սակայն

կար ժամանակ երբ ես եւս մի բան էի, երբ ես եւս, ինչպէս ուրիշները՝ ունէի նպատակ, որը պաշտում էի, փայփայում էի եւ որը ինձ յոյս էր տալիս ապրելու, խրախուսում էր իմ գոյութիւնը։ Իսկ այժմ ո՞ւր է այդ յոյսը, ո՞ւր է իմ նպատակը. ինչո՞ւ նա անհետացաւ, կորաւ...

Քամալեանը այդ խօսքերը արտասանում էր բարձր ձայնով, չնայելով որ բացի իրանից՝ սենեակում ուրիշ ոչ ոք չկար։

Նա վերջին խօսքերը արտասանելու ժամանակ, բարձրացաւ աթոռից, որը դրած էր փոքրիկ, հնամաշ գրասեղանի շուրջը։ Այդ սեղանի վրա դարսած էին անկանոն կերպով զանազան բովանդակութեան, մեծ եւ պստիկ, կազմած եւ անկազմ գրքեր, լրագրների թերթեր, մի քանի գրչակոթեր, մի հայելի եւ ուրիշ հարկաւոր եւ անպէտք իրեղէններ։ Իսկ սեղանի առաջի կողմում, աթոռի դէմ ընկած էր մի բաց ձեռատետր։

Սա Քամալեանի յիշատակարանն էր։

Փոքրիկ ապակեայ հասարակ կանթեղը աղօտ կերպով լուսաւորում էր նեղ եւ ցածր առաստաղով սենեակը։ Ձեռները դնելով անդրավարտիկի գրպանը, գլուխը թեքած դէպի կուրծքը, Քամալեանը սկսեց քայլել սենեակի այս անկիւնից դէպի միւսը՝ յետ ու առաջ։ Նրա դէմքը դատնաթափ էր, նրա առաջուայ հարթ ու պայծառ ճակատը կորցրել էր իր պարզութիւնը եւ ծածկուել այնպիսի կնճիռներով, որոնք երեւում են միայն տարիքը լրացած ծերունիների ճակատի վերայ։ Բարակ, սեւագոյն յօնքերի տակից նայող մուգ աչքերը, զրկուելով իրանց նախկին կրակոտ փայլից՝ ընկել էին խորը խորշերի մէջ։ Երկու կամարաձեւ խոշոր գծերը այդ աչքերը բաժանում էին ոպրտնած երեսի միւս մասից։ Մի քանի րոպէ լուռ ու մունջ շրջելուց յետոյ, Քամալեանը կրկին մօտեցաւ սեղանին։ Նա սկսեց թերթել սեղանի վրա դրած ձեռատետրը, երբեմն ձեռը տանելով ճակատին եւ յետ դարսելով երկար, փայլուն եւ կակուղ մազերը, որոնք շուտ շուտ ցրվում էին առաջ։

—Դնա՛, կորի՛ր, հեռացի՛ր աչքիցս—ասաց նա յանկարծ յիշատակարանը ձգելով սեղանի մի անկիւնը։ Դու աւելի կրկնապատկում ես իմ վշտերը, երբ ես կարդում եմ քեզ։ Դու յիշեցնում ես ինձ իմ պախարակելի անցեալը, պատկերացնում ես իմ առաջ մի դատարկ, յիմար կեանք, եւ դու ինքդ քննադատում այդ կեանքը։ Պիտի չորանար այն ձեռը, որը գրել է քեզ, որը անշունչ առարկայիդ բերանը լեզու է դրել, որ դու այսօր այդ լեզուով անէծք կարդաս նոյն այդ ձեռը բանացնողի դէմ։ Եւ ի՞նչ ես դու, զզուելի թղթի կտոր։ Ի՞նչ ես դու եւ ի՞նչ են ահա սրանք (նա ձեռը մեկնեց մեծակազմ գրքերին), որոնք խաբում են մարդկութիւնը եւ բաղդաւորութիւն են խոստանում իսկ յետոյ դառնութիւն եւ կսկիծ են տալիս այդ բաղդաւորութեան փոխարէն։ Բայց ո՛չ, դուք թղթեր, մեղաւոր չէք. մեղաւոր են դարձեալ ինձ նման զզուելի կենդանիները, մեղաւոր է մարդ կոչուած ստոր արարածը։ Այո՛, մեղաւոր են նրանք, որոնք սեւացնելով իրանց կեղտոտ մատերով ձեր լոյսի նման մաքուր երեսը, հաւաքելով ձեզ միասին՝ սփռում են աշխարհի չորս կողմերը՝ ինձ նման անօգուտ արարածների թիւը աւելացնելու եւ մարդկութեան թշուառութիւնը բազմապատկելու համար։

—Մտաբերում եմ, երբ իմ պատանեկութեան օրերում, վարակուած իմ ընկերակիցների սովորութիւնով, ես ահա այդ սեւացրած թերթերից մի կապ դրած առջեւս ժամերով կարդում էի՝ մայրս ինձ միշտ կրկնում էր. «սրդի, խնայի՛ր քեզ, սիրտդ մի մաշի՛ր այս գիր ու գրեանքով»։ Այն ժամանակ մօրս այդ խօսքերը ինձ ծիծաղացնում էին. ես զուարճանում էի նրա միամտութիւնով, որ նա չը գիտէ այդ «գիր ու գրեանքի» արժանաւորութիւնը, նրանց օգտակարութիւնը ինձ համար։ Տասը տարի անցել է այդ ժամանակից. մայրս մեռած է եւ ես յիշելով նրա այդ խօսքերը՝ այժմ ուրիշ կերպ եմ հասկանում նրանց։ Մայրս միամիտ չէր, այլ ես էի յիմարը, որ նրա այդ ոգէտ խօսքերի մէջ թաղնուած խորը իմաստութիւնը չ՛գիտէի։ Այո՛, ես չ՛գիտէի, ես խորասուզուած ընթերցանութեան մէջ՝ ոչինչ ուրիշ բան չէի ուզում հաս-

կանալ, ոչինչի եւ ոչ որի չէի հաւատում, բացի նրանցից՝ ինչոր ասում էին ինձ այս «գիր ու գրեանքը»։ Այսօր ամեն ինչ անցած է, այլ եւս մոյրս իմ կողքին նստած չէ, ես չեմ կարող նրա խրատը կատարելով մխիթարել նրան. այժմ ուշ է; ամեն բան վերջացած է եւ ես...

Նա աջ ձեռով մի ուժգին ապտակ տալով ճակատին, վեր թռաւ աթոռից եւ սեղանի վրից վերցնելով մի ծխախոտ, վառեց, սկսեց ծխելով կրկին շրջել։ Նրա դէմքը աւելի եւ աւելի դառնաթափվում էր, մոռացերելով իր անցեալը, իր մանկութիւնը, այն օրերը, որոնց նա վերադարձնել կ՚ցանկանար, բայց չէր կարող։ Այդ օրերը նրա համար մի մի ասեղներ էին, որոնք ցցուելով նրա ուղեղի մէջ՝ բորբոքում էին նրան։ Քամալեանը այս անգամ քսլում էր աւելի արագ, քան թէ առաջին անգամ։ Նա ծխում էր անսովոր կերպով։ Վառելով ծխախոտը՝ երկու անգամ այնպիսի ագահութեամբ քաշեց, որ ծխախոտի կէսը անհետացաւ ծուխ դառնալով։ Ինչպէս մի մարդ, որ երկար շնչարգելութիւնից յետոյ լիքը բերանով կլանում է թոքերը միանգամից օդի ահագին քանակութիւնը, այնպէս Քամալեանը ծխախոտի ծուխը իր շնչի բոլոր զօրութիւնով ծծում էր ներս։ Կարծես թէ կամենում էր այդ դառն ծխով թունաւորել եւ սպանել այն վշտերը, որոնք գտորուել էին նրա ճնշուած սրտի վրա եւ արմատախիլ անել այն մոռածմունքները, որոնցով ծանրաբեռնուել էր նրա ուղեղը։ Բայց չէր յինում, ծխախոտը չէր օգնում նրա վշտերը եւ մոռածմունքները մնում էին մի եւ նոյնը, նրանք չէին թուլանում, չէին պակասում, միայն աւելի գրգռվում էին։ Իսկ Քամալեանը, յաղթուած եւ ճնշուած նրանց ներքոյ, չգիտէր թէ ինչ անէր, ինչպէս կրէր նրանց ծանրութիւնը։ Նա կրկին մօտեցաւ սեղանին եւ կրկին սկսեց իր անդադար դառնանալը իր անցեալի եւ ներկայի վրա։

—Համեմատել եմ արդեօք ինձ ուրիշ ինձ նման արարածների հետ. գտել եմ արդեօք իմ մէջ այն յատկութիւնները, որոնցով ես նմանուէի այժմեան մարդկանց հետ, որոնք իմ կեանքը կանցէին այդ մարդկանց հետ. կա՞ն վերջապէս ինձ նման ուրիշ մարդիկ։ Այո՛, որովհետեւ բո-

լոր իմ ճանաչած մարդիկ, առանձնապէս վերցրած, ունին ամէն մէկը իմ յատկութիւններից որեւիցէ մէկը։ Ո՛չ, որովհետեւ չկայ մի մարդ, որ պարունակէր իր մէջ այն բոլորը, ինչ որ ես եմ պարունակում իմ մէջ։ Ինձ նման չ՝կայ մի ուրիշը եւ ի՞նչ եմ ես։—Ամենայն ինչ եւ ոչինչ։ Ես ատում եմ այն ամենին, որոնք հարստահարում են թոյլերին, զրկում, ճնշում են խեղճերին, որոնք ծարաւ տղրուկի պէս կպած ժողովրդի մարմնին՝ ծծում են անխնայ նրա արիւնը։ Ես արհամարհում եմ այնպիսիներին, որոնց կերած հացը եփվում է ուրիշների աշխատանքի քրտինքի կաթիլներով, որոնց փափուկ մարմինները կազմվում են կոշտ ու կոպիտ աշխատաւորների նիհար ու քրքրուած մարմինների փշրանքից։ Իմ արիւնը պղտորվում է, իմ գլուխը պտտվում է ամեն անգամ սրանց երեսին մոտիկ անելու ժամանակ եւ նրանց ճակատին դրոշմում եմ ձրիակեր, դող ու կողոպտիչ մականունները։ Բայց մի հարցնող լինի ինձ թէ արդեօք ունիմ ես իրաւունք այդ անելու, ունիմ իրաւունք ես ինձ այդպիսիներից բարձր դասելու, քանի որ ինքս, իմ ներկայ եւ անցեալ կեանքով, ոչնչով չեմ զանազանվում նրանցից։ Ի՞նչ եմ ասել, ե՞րբ եմ իմ այդ բարակ ու նուրբ մատները դործ դրել որ ես է աշխատանքի, որ ես ատում եմ անդործներին։ Չէ՞որ ես աւելի եմ հարստահարում այն ժողովուրդը, որի անդամն եմ ես՝ քան թէ նրանք, որոնց անունն անդամ իմ մէջ զզուանք է յարուցանում։ Չէ՞որ ես եմ թոյլը, անդործը, ձրիակերը, ժողովրդի աւելորդ եւ վնասակար մարմինը, նրա արիւնարբու տղրուկը։ Այո՛, ես արիւնարբու տղրուկ եմ եւ այդ հաստատում է այս անողորմ, անգութ վկան, իմ նախատելի անցեալի այս արհամարհելի նկարագիրը։

Քամալեանը այս ասելով, ձեռը դարձեալ մեկնեց յիշատակարանին, վերցրեց նրան եւ դնելով իր առաջ՝ կրկին սկսեց թերթել։ Կանթէղի աղօտ լոյսը ընկաւ յիշատակարանի մանր տառերով գրուած տողերի վրա։ Նա շարունակում էր թերթել, երբեմն կանգ առնելով այս ու այն երեսի վրա եւ կարդալով։ Այդ ժամանակ նրա դէմքը

աւելի այլայլում էր։ Նրա ճակատի կնճիռները մօտենում էին իրարու եւ սեղմվում, երեսի գծերը աւելի ու աւելի խոշորանում։ Այդ նրա հոգեկան խորին յուզման, նրա ներքին ալէկոծութեան արտայայտութիւնն էր։ Ցիրաւի, յիշատակարանի ամեն մի երեսը մոաբերելով նրան իր կեանքի այս կամ այն ժամանակամիջոցը՝ գրգռում, եռապատկում էր նրա վրդովմունքը, լցնում էր նրա դառնութեան բաժակը։ Կարծես թէ այս լուռ ու մունջ սեւ տողերը մի մի ղղուելի, թունաւոր սողուններ լինէին, որոնք սողալով նրա մարմնի վրա՝ խածանում էին նրան իրանց թունաւոր խայթոցներով։

—Հինգ տարի է, որ ես իմ ուսումը աւարտել եմ գիմնազիայում, մտել եմ հասարակութեան մէջ։ Ի՞նչ եմ արել այդ հինգ տարուայ ընթացքում հասարակութեան համար, ի՞նչ օգուտ եմ բերել նրան։—Ոչինչ, բացի վնասից։ Բայց ես կամենում էի օգտակար լինել, ես դեռ ուսումնարանի նստարանի վրա իմ երեւակայութեան մէջ ստեղծում էի տպագայ իմ հասարակական գործունէութեան համար հարիւրաւոր ծրագիրներ։ Ո՞ւր են այժմ այդ ծրագիրները։—Նրանք չկան, շոգիացել են։ Ինչո՞ւ, ինչո՞ւ։ Որովհետեւ... այո՛, որովհետեւ ես խիստ իդէալական տեսակէտից էի նայում կեանքի վրա, որովհետեւ ես կամենում էի թափանցելի օդի մէջ ամրոց կառուցանել։ Ես կարծում էի թէ կարող եմ կեանքը ծառայեցնել իմ նպատակներին։ Ո՛հ, պատանեկական երեւակայութիւն, ինչեր չես ստեղծում դու, ինչ հսկայական խոշնդոտներ չեն փշրվում, խորտակվում քո առաջ։ Ա՜խ, Տէր Աստուած, գլուխս պտտվում է, աչքերս մթնում են, երբ ես մտածում եմ այդ մասին։ Ի՛նչ անեմ, գիշերը անցնում է, լոյսը մօտենում է, ամենքը քնած են անդորր հոգով, ամենքը իրանց ցերեկուայ աշխատութիւնից յոգնած՝ հանգստանում են. իսկ ես ի՞նչ եմ արել, որ այդքան յոգնել, թուլացել եմ, եւ ի՞նչ պիտի անեմ վաղը։ Դարձեալ պիտի նստեմ այս տեղ, այս տողտակի, ձանձրացուցիչ սենեակում՝ կարդամ, կարդամ ու կարդամ տակն ու վեր մի հինգ տող այս գրքից, հինգը մեւսից։ Տէր Աստուած, համբերութիւն էլ

չունիմ մի գիրքը մինչեւ վերջը կարդալու... Վերջապէս սա կեանք չէ, սա գեհեն է ինձ համար, ես չեմ ապրում, ես պապակում եմ։ Սիրտս կտրտվում է, ախ Աստուած, միթէ եաք չկայ, միթէ, միթէ...

—Չ'կայ, չ'կայ—շշնջաց Քամալեանին մի ներքին ձայն։ Թշուառ արարած, զգացիր քո ոչնչութիւնը, անիծիր, անիծիր ինքդ քեզ, ուրիշ մխիթարութիւն չունիս։ Դու դժբաղդ, ուրիշ եաք չունիս քո ծանր մոքերի լաբիրինթոսից ազատուելու։

—Միթէ...

—Չունիս, չունիս, չունիս—պատասխանեց նոյն ներքին ձայնը. կեանքի մէջ քեզ ուրիշ մխիթարութիւն չունիս, բացի նրանից՝ ինչ որ ունիս։ Չէ՞որ դու ամեն ինչ փորձեցիր, բայց ոչինչ չ'յաջողուեց քեզ։ Միծաղելի մարդ, գրականութիւն, ուսուցչութիւն եւ ուրիշ սոյնանման շաւիղներ դու ոտ ես կոխել, ինչքա՞ ուրեմն չկարողացար այդ շաւիղներից մէկի վրա երկար շարունակել քո ընթացքը։ Ծաղրելի մարդ, չէ՞որ դու մինչեւ անգամ ուզում էիր արհեստաւոր դառնալ, ինչքա՞ ուրեմն այստեղ եւս չկարողացար երկար մնալ. ո՞վ էր քեզ արգելում, ի՞նչն էր խոչընդոտ դնում քո առաջ։

—Ո՞վ էր արգելում, ի՞նչն էր խոչնդոտ դնում ի՞մ առաջ,—կրկնեց Քամալեանը ինքն իրան։

—Ի՞նքդ, եւ ուրիշ ոչ ոք. քո խոչնդոտը պարունակվում է հէնց քեզ մէջ։ Որոնիր եւ կ'գտնես, հարցրու քո հիւանդ ջղերից, քո գիւրագրգիռ զգացմունքներից, հարցրու քո թոյլ կամքից, անհիմն բնաւորութիւնից եւ նրանք քեզ կ'ասեն։ Թշուառ արարած, դու ամեն տեղ որոնում էիր այն, ինչ որ հնարաւոր չէր գտնելու եւ չը գտնելով որոնածդ՝ յուսահատուած թողնում էիր քո ընտրած ճանապարհը։ Դու դեռ գործը չը սկսած, նրա վերջի, նրա հետեւանքի մասին էիր դողում եւ այդպէս դու անում էիր ամեն անգամ, ամեն ասպարիզում։ Քո խելքի եւ զգացմունքների մէջ երբէք ներդաշնակութիւն չէ եղել.—ահա՞ քո ցաւը, քո խոչնդոտը եւ արգելքը։ Դու չ'գիտէիր եւ չ'գիտես այն նշանաւոր իմաստասէրի խօսքերը թէ՝

«կեանքը կոմեդիա է մոռածողի համար, իսկ դրամա՝ զգացողի համար»։ Քեզ համար նա դրամա է եղել, ուրեմն թող կատարուի այդ դրաման մինչեւ վերջը։ Խմիր, հրամայում եմ քեզ, քո դառնութիւնը մինչեւ բաժակի յատակը։

—Խմե՞լ, խմե՞լ. այո՛, կ'խմեմ եւ մի կաթիլ անգամ չեմ թողնիլ նրա մէջ։ Եւ Քամալեանը կրկին բարձրացաւ աթոռի վերայից եւ կրկին սկսեց շրջել։ Փոքրիկ սենեակը լցուել էր ծխախոտի ծխով։ Վառարանի մէջ այրվում էին փայտի վերջին կտորտանքը։

—Յոյս, յոյս, յոյս—ահա ի՞նչ է հարկաւոր ինձ, ահա ինչի բացակայութիւնն է թունաւորում իմ կեանքը։ Յոյս, յոյս, ո՞ւր ես դու, որտեղ կարող եմ գտնել քեզ։

Այդ խօսքերը Քամալեանը արտասանեց աւելի բարձր ձայնով՝ քան թէ առաջ։ Յետոյ նա իր հայեացքը ուղղեց դէպի վառարան եւ սկսեց անթարթ աչքերով նայել այրուող կրակին։ Մի տեսակ դառն ժպիտ էր խաղում նրա շրթունքների վրա այդ ժամանակ։

—Ահա՛ վառարանի մէջ այրվում է անտառից բերած փայտը։ սրանք եւս այդ անշունչ փայտի կտորտանքը եւս անօգուտ չեն։ Քանի որ իրանց հայրենիքումը՝ լուռ անտառի մէջ էին, այդտեղ նրանք կազմում էին ահագին կանաչազարդ ծառեր՝ բազմաթիւ ճիւղերով եւ անհամար տերեւներով։ Ծառը անտառում զգում էր իրան կատարեալ ինքնիշխան. նա այնտեղ ազատ քաղաքացի էր իր հայրենակիցների շարքում։ Այդ մի բաղդաւորութիւն է։ Նրա ճիւղերի շուաքի տակ հանգստանում էր յոգնած հովիւը իր փոքրիկ գառնուկներով, նրա գագաթում ուրախ ուրախ թռչկոտում եւ զուարճանում էին անթիւ թռչնիկներ։ Որքան բաղդաւոր էր զգում իրան ծառը այդ ժամանակ, երբ նա հպարտանում էր, զգալով իր օգտակարութիւնը թէ մարդուն եւ թէ կենդանիներին։ Սակայն ապերախտ է մարդը. ի՞նչ վճարեց բարեսիրտ եւ օգտաւէտ ծառին՝ նրա վեհանձնութեան փոխարէն։ Նա՝ այդ երախտամոռ արարածը, կացնի սուր բերանը իր կեղտոտ եւ զզուելի ձեռներով ուղղեց ծառի ա-

մուր եւ հաստ բունին։ Ինքաց հարիւրաւոր տարիներով մեծացած վիթխարին այդ հարուածի տակ։ Ինքաց այդ վեհանձն մարդասէրը. իր սրտի խորքից անիծեց ապերախտ մարդուն, ճռճռաց եւ մի դառն հառաչանք արձակելով՝ թաւալուեց գետինը։ Ծառը մեռաւ, բայց իր մահից յետոյ եւս նա չը կորցրեց իր օգտակարութիւնը։ Նրա մարմնի փշրանքները ահա այսօր ձմեռուայ սառնութիւնից պաշտպանում են իմ զզուելի մարմինը։ Գիւղական խրճիթում նրանք տաքացնում են աղքատ շինականի եւ նրա փոքրիկ զաւակների ձիւնից եւ բուքից քարացած մարմինները։ Հարուստի պալատում, նրանք դուրեկան ջերմութիւն են պարգեւում փարթամներին։ Իսկ ես՝ անբաղդս, ես եմ միայն անօգուտը, ես եմ միայն աւելորդ մարմին այս աշխարհի երեսին։ Որքան դժբաղդութիւն, որպիսի ցաւ է զգալ ինքդ քեզ մինչեւ անգամ այդ անշունչ առարկայի, փայտի առաջ քո ստորութիւնը, քո ոչնչութիւնը։ Այդ մի անտանելի վիշտ է։

Քամալեանը մոտեցաւ սեղանին եւ կրկին սկսեց թերթել յիշատակարանը։

—Այստեղ նկարագրուած է իմ պախարակելի կեանքը 1876 թուականից մինչեւ այսօր, այսինքն սկսած այն օրից, երբ աւարտեցի գիմնազիայում իմ ուսման ընթացքը։ Ես արհամարհեցի բարձր կրթութիւնը եւ ինչո՞ւ.—Նրա համար որ աւելի շուտ մտնեմ հասարակական գործունէութեան ասպարէզը։ Ես այդ ժամանակ շտապում էի եւ կարծում էի թէ՝ բաւական է իմ ստացած մտաւոր պաշարը այդ ասպարիզում ինձ համար յարմար տեղ բռնելու։ Ես մտածում էի որ կարող եմ ընթերցանութեամբ լրացնել այն պակասը, որը պիտի լրացնէր համալսարանը եւ սկսեցի այդ օրուանից անդադար եւ անընդհատ կարդալ, կարդալ ու կարդալ։ Ահա այստեղ գրած են իմ կարդացած գրեանց անունները. Տէր Աստուած, որչափ անկանոն եւ անկապ ընթերցանութիւն, որը մինչեւ այսօր էլ շարունակվում է։ Ո՛հ ցնորք, մի ժամանակ ես հաւատացած էի թէ մեծ բանաստեղծական ձիրք ունիմ եւ այդ ցնորքով ոգեւորուած՝ ես ուսումնասիրում էի Մուսայի հանճարեղ ներկա-

յայտնուցիչներին՝ Շէքսպիրին, Շիլլերին, Բայրոնին, Գէօթէին եւ այլն։ Բայց ուսումնասիրեցի՞ արդեօք։ Ո՛չ, ես մինչեւ անգամ այնքան համբերութիւն չունեցայ սրանց գրուածքներից գէթ մէկը կանոնաւոր կերպով կարդալու։ Ո՛հ, ինչ ծաղրելի միտք էր այն, որ այդ ժամանակ ինձ յանկարծ պաշարել էր։ Ես հաւատացած էի թէ իմ մէջ կայ թագնուած մի ընդարձակ տաղանդ եւ կարծում էի որ ընթերցանութիւնը կ'սպանի իմ տաղանդի ինքնուրոյնութիւնը։ Բայց ահա իմ բանաստեղծական տաղանդի պտուղը, ահա այն յիմար, անհամ ոտանաւորները, որոնք նոյն իսկ Թառումեանի նման տխմարին էլ ծիծաղ էին պատճառում։ Փորձեցի մի դրամատիկական պիեսա գրել. կարծում էի որ պրոզան աւելի կ'յաջողուի։ Բայց դեռ առաջին երկու երեսը չ'աւարտած՝ թողի, դա արդէն չափից դուրս անհամ էր։ Փորձեցի վէպիկներ գրել... Թո՛ւ, ինչ անտանելի էին այդ օրերը։ Ուղիղ երկու շաբաթ մոռացել միայն մի վէպիկի վերնագրի մասին եւ վերջ ի վերջոյ յորինել «դանդաղութիւն» վերնագիր—այդ արդէն խելագարութիւն էր։ Է՛հ, ո՞ր մէկը թուեմ, իմ յիմարութիւնները անթիւ, անհամար են. իմ ամեն մի քայլը եղել է սխալ։ Բայց ինչից է ծագել այդ սխալը.—թոյլութիւնից, հաստատ կամքի բացակայութիւնից, որոնք իմ անբնական կեանքի հետեւանքներն են։ Նոյն անբնական կեանքը շարունակվում է եւ այսօր։ Ուղեղս ծանրաբեռնուել է հազար տեսակ տարբեր գաղափարներով, իրարու հակառակ մտքերով եւ այդ բոլորը անորոշ եւ անկանոն կերպով այս բոպէին դասաւորուած գլխումս՝ զրժզրժում են այնտեղ, ինչպէս անթիւ որդեր։ Ի՞նչ եմ արել... ի՞նչ եմ անում եւ ի՞նչ պիտի անեմ...—Էլի ոչինչ, ոչինչ...

Քամալեանը հանեց ժիլետի գրպանից ժամացոյցը եւ նայեց։

—Արդէն դիշերուայ երկու ժամն է, քունս չի տանում, գլուխս ցաւում է... ականջներումս կարծես թէ թմբուկներ են ածում... գլխիս գանգը ուզում է տրաքուիլ։ Ինչպէս տաք է ճակատս... աչքերս մթնում են... այդ ինչից է... անքնութիւնից կլինի. երէկ դիշեր էլ

մինչեւ լոյս չեմ քնել։ Բայց ի՞նչ անեմ՝ որ քունս չի տանում։ Զարմանալի բան... այսօր չեմ ճաշել... երեկոյեան էլ թէյ չեմ խմել... բայց քաղց ամենեւին չեմ զգում... ախորժակս մեռել է։

Նա կրկին բարձրացաւ տեղից եւ կրկին սկսեց քայլել։ Այս անգամ նրա երեսին բոլորովին գոյն չէր մնացել, աչքերը վառուել էր, ցամաքած շրթունքները ցնցողաբար դողդողում էին։ Նա մտածում էր, բայց ի՞նչ էր մտածում—այդ ինքն էլ չը գիտէր։ Նրա գլխում տիրում էր կատարեալ խաոս. սակայն այդ մոքերի խառնաշփոթութեան մէջ որոշվում էին հետեւեալ գծերը։

—Հոգւոյ անդորրութիւնը մարդկային կեանքի երջանկութիւնն է։ Երանելի է այն մարդը, որը վայելում է այդ երջանկութիւնը։ Ես մինչեւ այսօր զուրկ եմ եղել նրանից, նա մանաւանդ այժմ։ Իմ անցեալը լիքն է վշտերով, ապագան պատկերանում է իմ առաջ սեւ գոյներով, ներկան անտանելի է։ Անտանելի է այո, անտանելի է, այս աշխարհում ինձ համար տեղ չկայ։ Անօգուտ եմ եղել մինչեւ օրս... անօգուտ եմ այժմ... անօգուտ կ'լինի եւ իմ ապագան, անօգուտ՝ ինձ համար, վնասակար՝ ուրիշների համար։ Ես հասարակութեան աւելորդ անդամ եմ։ Կեանքի բեմի վրա ես դեր չունիմ։ Իսկ մի մարդ որ դեր չունի, նա պիտի հեռանայ բեմից, որպէս զի չը խանգարի խաղացողներին։ Այդ պարզ է եւ ոչ ոք չի կարող հակառակել։ Ի՞նչ միտք ունի ուրեմն իմ գոյութիւնը։—Ոչինչ։ Չկայ մի բան, որի հետ կապուած լինէր իմ կեանքը։ Ես աւելորդ մարմին եմ՝ որ սխալմամբ ընկել եմ այս աշխարհ... Ես խակի մարմին էլ չեմ... ո՞ւր է, ես ոչինչ եմ... ոչինչ... ոչինչ... թափանցելի օդ... այդ էլ չեմ... օդը օգտաւէտ է... նա մարդու առաջին սնունդն է... բաս ի՞նչ եմ... ոչինչ... Սխալվում են ֆիլիկոսները ասելով թէ՝ աշխարհում «ոչինչ» ասած բան չկայ։ Սխալվում են։ Երեւի նրանք ինձ չեն տեսել, թող գան ինձ իրանց գիտնական հետազօտութեան ենթարկեն եւ այն ժամանակ կ'տեսնեն՝ թէ ինչպէս չարաչար սխալուած են եղել... (նա մտածողութեան

մէջ ընկաւ)... Վճռուած է... վճռուած է... վերջին խօսքը արտասանելու ժամանակ Քամալեանը փշրուած սրտով, թուլացած մարմնով ընկաւ աթոռի վրա եւ երկու ձեռներով պինդ սեղմելով իր գլուխը՝ սկսեց անթարթ աչքերով նայել յիշատակարանին։ Նրա հայեացքը անմիտ էր, նրա շրթունքները ժպտում էին վայրենի կերպով, նրա աչքերը փայլում էին մի տեսակ կատաղի փայլով։ Մի քանի րոպէ նա այս դրութեան մէջ անշարժ մնաց, յետոյ կրկին սկսեց քայլել։ Նրա ծնկերը թուլացել էին, նա հարբածի նման չէր կարողանում ուղիղ մանգալ։ Այդպէս շարունակուեց մինչեւ կէս ժամ, յետոյ նա շուռ ու մուռ գալով կրկին մօտեցաւ սեղանին եւ յանկարծ կատաղի առիւծի նման յարձակուեց յիշատակարանի վրա, վերցրեց եւ սկսեց ձեռներում ճմռտել եւ առամներով կռծոտել...

Վառարանը հանգչելու վրա էր. կրակի երեսը արդէն ծածկուած էր մոխրով։ Քամալեանը յիշատակարանը կռծոտելով եւ վայրենաբար բղաւելով՝ մօտեցաւ վառարանին, վերցրեց ունելիքը եւ սկսեց կրակը խառնել։ Անցան մի քանի վայրկեաններ, յանկարծ կրակը վառուեց, եւ վառարանի մէջ բարձրացաւ մի պայծառ բոց։

—Հա՛, հա՛, հա՛—քսան ու հինգ տարուայ կեանք... ահա՛ ի՞նչ է քո վարձը, ահա ինչի ես արժանի—գոռաց նա վայրենի զուարճութեամբ, նայելով յիշատակարանի բոցավառուած թերթերին։ Մի րոպէում կրակը լափեց երեսուն թերթից բաղկացած ձեռատետրը։ Բոցը դադարեց եւ կրկին մոխիրը ծածկեց կրակի երեսը։

—Վերջացաւ, վերջացաւ ամենայն ինչ. քսան ու հինգ տարուայ կեանքս մոխիր դարձաւ, մոխիր դարձաւ իմ բոլոր անցեալը... աղատուեցի, ո՞ւֆ, աղատուեցի... Գնա՛ կորիր, հին կեանք, էլ քեզ հետ ես գործ չունեմ... Նոր կեանք... նոր կեանք... ես երեխայ եմ՝ նորից պիտի մեծանամ... հա՛, հա՛, հա՛, քսան ու հինգ տարեկան երեխայ։ Սպասի՛ր, կրակ, ես քեզ համար դեռ կերակուր շատ ունեմ պատրաստած. խեղճ ես, տեսնում եմ դու խիստ ես քաղցած... սպասի՛ր...

Նա մօտեցաւ սեղանին եւ ձեռը մեկնեց հաստակազմ գրքերին։

—Առաջ, առաջ քեզ յիմար, խելագար, ցնորամիտ Գարտմանն... դու, դու ես ինձ էս օրը գցել—ասաց նա, վերցնելով միխակագոյն կազմով մի գիրք։ Կազմի վրա խոշոր ոսկեզօծ տառերով տպուած էր. «Философія безсознательнаго.

Նա մօտեցաւ վառարանին եւ գիրքը ձգեց նրա մէջ։ Բարձրացաւ մի թանձր ծուխ, որից յետոյ գիրքը բոցավառուեց։ Բոցը չ'դադարած՝ վառարանի մէջ ընկաւ մի ուրիշ գիրք, սրան հետեւեց երրորդ, չորրորդը՝ թուով մինչեւ տասը։

—Ցիմար հեղինակներ, կռուեցէք իրարու հետ. ծաղրեցէք միմեանց, բայց տեսէք կրակը ձեզ ինչպէս է հաշտեցնում... ի՞նչպէս է, լաւ է։ Ցաղթութիւն, ես ձեր բոլորին յաղթեցի։ Քամալեանը գոռաց մի այնպիսի զօրեղ ձայնով, որ հարեւան սենեակում քնից զարթեց նրա տանուտէր կինը, պառաւ Քեթեւանը։

—Հա՛, հա՛, հա՛ ես ազատուեցի, ես նոր մարդ եմ։ Հա, հա՛, հա՛—կրկնեց Քամալեանը կատաղաբար ծափահարելով։

Այդ ժամանակ դուռը զգուշութեամբ բացուեց եւ շէմքի մէջ երեւեցաւ պառաւ Քեթեւանի սարսափած դէմքը։

—Հը՛մ, մայրիկ, մրնո՞ւմ ես, եկել ես տաքանալո՞ւ... Ե՛կ ե՛կ, այ փեչը վառել եմ, տաք է, շատ տաք է... ես յաղթեցի, ես ձեր ամենին ազատեցի տանջանքից... ես երեխայ եմ, մայրիկ, այ, այ տե՛ս...

Այս ասելով՝ Քամալեանը սկսեց ծափահարել եւ պար գալ։ Քեթեւանը նայելով նրան՝ մնաց ապշած։ Նա ամբողջ մարմնով զգաց մի սարսուռ եւ չ'կարողացաւ ոչինչ արտասանել։ Ցանկարծ Քամալեանը յարձակուեց նրա վրա եւ թեւից բռնելով՝ ոյժով ներս քաշեց։

—Ե՛կ, ուրախացիր, ե՛կ, ցանցառ պառաւ. ե՛կ պար գանք Ցասին։

Խեղճ պառաւը սարսափից թուլացաւ։

—Օգնեցէք, օգնեցէք, ո՛վ էք, քրիստոնէք, վա՛յ մէյ, վա՛յ մէյ, դժվիլ է—ծվայ նա եւ մի կերպ՝ աղատուելով Քամալեանի ձեռից՝ գլխապատառ դուրս փախաւ։

Վ.առարանի մէջ բոցը արդէն դադարել էր։

Քամալեանը վայրենաբար բղաւելով՝ դուրս թռաւ սենեակից կատաղած։

Շիրվանզադէ

1-ն Ապրիլի 1884 թ.
Թիֆլիս։

---

## ԲԺԻՇԿ ԿԱՆԱՑՔ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

Կանանց խնդիրը ամենակարևոր հասարակական խնդիրներից մէկն է դառել Եւրոպայում, բայց մանաւանդ մեծ նշանակութիւն ունի Ասիայում և առհասարակ մահմեդական երկիրներում։ Ամեն տեղ էլ այժմ կինը, մարդասիրական գաղափարների շնորհիւ, աւելի և աւելի իրաւունքներ և ազատութիւն է ձեռք բերում։ Մահմեդական կինն էլ որ մինչև այժմ ստրկութեան մէջ էր գեգերվում, նմանապէս սկսել է փոքր առ փոքր ազատութիւն ստանալ և լոյս աշխարհ դուրս գալ։

Նորերումս, Հնդկաստանի մահմեդական կանանց մասին մի գեղեցիկ յօդուած կարդացինք «Nouvelle Revue» ֆրանսիական ամսագրի մէջ գրած փետրուարի 15-ից։ Յօդուածը պատկանում էր M-me Fr. Elizabeth Hoggan, բժիշկ կնոջ գրչին։ Հարկաւոր ենք համարում ծանօթացնել ընթերցողներին այդ գրուածքի բովանդակութեան հետ, մանաւանդ որ՝ հայ կնոջ դրութիւնն էլ բաւականին նման է հնդկուհիների դրութեանը։

Ներկայ դարում, Հնդկաստանի բժիշկ կանանց հարցը հետաքրքիր հարցերից մէկն է։ Հնդկաստանի կանայք մահմեդականութեան ազդեցութեան տակ՝ ենթարկուած են փակուած, միայնակեաց կեանքի։ Նրանք, բացի իրանց մօտիկ ազգականներից, ոչ ոքի չեն տեսնում և չեն ճանաչում։

Մահմեդական կանայք չեն կարող, առանց իրանց կրօնական օրէնքները և աւանդական սովորութիւնները խախտելու, օտար տղամարդերի երես տեսնել կամ նրանց հետ խօսակցել։

Բայց միշտ այդպէս չէ եղել հնդկուհիների դրութիւնը։

Հնդկացոց հին սուրբ գրքերը նպաստում էին կանանց կեանքի ազատ զարգանալուն։ Մահմեդականութիւնը տարածելուց յետոյ միայն հնդկացի կանայք կամաց-կամաց կորցրին իրենց նախկին ազատութիւնը։ Երբ մահմեդականները նուաճեցին այդ երկիրը, իսլամութիւնը մեծ ազդեցութիւն ունեցաւ տեղացի կանանց դրութեան վրայ՝ բերելով իր հետ հարեմական բազմակնութիւնը և կնոջ ստրկութիւնը։ Նոր օրէնքի համեմատ, կանայք չէին կարող իրանց մարդերի հետ նստել և խօսակցել։ Միայն Հնդկաստանի տեղական հին կրօնին հաստատ մնացողները և պարիաների կաստային պատկանողները հեռու մնացին իսլամական բազմակնութիւնից։ Հարեմական կեանքի հաստատուելը այն հետևանքն էլ ունեցաւ, որ կանայք զրկուեցին տղամարդի ձեռքով բժշկուելու իրաւունքից, և օտար տղամարդը իրաւունք չունէր մտնել զէնանան (կանանոցը)։ Տղամարդ բժիշկը զէնանան գնալուս, չը պէտք է հիւանդի երեսը տեսնէր։ Պառկած հիւանդի առաջ վարագոյր էր քաշվում, որի ետևում պէտք է կանգնէր բժիշկ տղամարդը։ Վարագոյրի միջից մի ծակ էր շինվում, որտեղից հիւանդը պէտք է մեկնէր իւր ձեռքը կամ լեզուն բժշկին ցոյց տալու համար։ Բժիշկը առանց միջնորդի չէր կարող խօսել հիւանդ կնոջ հետ։ Միայն սաստիկ հիւանդութեան ժամանակ թոյլ էր տրվում բժշկին մտնել վարագոյրի ներսը՝ հիւանդի մօտ։ Բայց ընդհանրութեան աչքում այս տեսակ դէպքերն էլ զզուելի էին թուում։ Իսկ ըստ մեծի մասին, հնդկացի մահմեդական կինը կրօնական օրէնքների խստութեանը ենթարկուելով, ստիպուած է բժիշկի երես չտեսնել և առանց օգնութեան մնացած մեռնում է։

«Մենք մեռնում ենք ինչպէս տաւարներ և ոչ ոք մեր մասին հոգս չէ քաշում», բացականչեց դառնութեամբ մի հոդևորքի հասած հնդկացի կին՝ փակուած մի մութ զէնանում, դառնալով դէպի ներկայ եղող մի անգլիացի կնոջ։

Այս թշուառութեան առաջն առնելու համար, ամենից առաջ միսսիոնարները մտածեցին. նրանք հասկացան, որ միայն կինը կարող է հեշտութեամբ մտնել կնոջը. ուստի նրանք, միսսիոնարական գործին սրտանց համակրող օրիորդներին և կանանց բժշկականութեան և առողջապահութեան հետ ծանօթացնելով հիմնաւորապէս՝ ուղարկեցին Հնդկաստան քարոզչութեան։

Կամաց կամաց միսսիոնարները բժիշկ կանայք էին պատրաստում, ձրի դեղատներ էին շինում և հիւանդանոցներ էին հիմնում, ուր տեղացի կանայք ազատ կարող էին յաճախել։ Այս տեսակ բժիշկ կանանց անուանում են medical missionary. Հարկաւոր դէպքերում մարդիկ էին ուղարկվում շատ հեռու տեղեր՝ բժիշկ կանայք փնտռելու։ Այսպէս Miss White d'Hydabad-ը

կանչուեց Գուժերա– մի իշխանազն կին բժշկելու, որի մարդը երախտագէտ լինելով՝ պարգևներ ընծայեց նրան։ Miss Beilby եկաւ Լուկնովից Պուննա մի և նոյն նպատակով։

Պուննայի Մահարաժան՝ որ Հնդկաստանի կենդրոնում մի անկախ իշխան է, դիմեց երեք տարի սրանից առաջ միսսիոնարբժիշկ օրիորդ Բէյլբիին՝ որ սա բժշկէ իր հիւանդ կնոջը՝ որ երկար ժամանակ չէր առողջանում, բժիշկ կին չլինելու պատճառաւ։ Իսկ տեղային սովորութիւններն արգելում էին արական սեռի բժիշկ հրաւիրելու։ Միսս Բէյլբին մնալով մի շաբաթ այդտեղ՝ բժշկում է իր իշխանազն հիւանդին և միւս կանանց, որոնք գտնվում էին նոյն քաղաքի հիւանդանոցում։

Միսս Բէյլբին Պուննան թողնելուց առաջ մի տեսութիւն ունեցաւ Մահարանէի (Մահարաժայի կնոջ) հետ և այդ երկու կանանց մէջ մի հետաքրքիր և սրտագին խօսակցութիւն տեղի ունեցաւ՝ որ և տպուեցաւ անգլիական լրագրներում։ Մահարանէն ասում էր Միսս Բէյլբիին. «Դուք գնում էք Անգլիա, ես ցանկանում եմ, որ ասէք թագուհուն, իշխանին և բոլոր ձեր երկրի բնակիչներին, թէ որքան մեր հնդուհիք բժիշկ-կանանց կարօտութիւն են զգում։ Կամենում էք խոստանալ ինձ, որ իմ այս խօսքերը կ'յայտնէք Անգլիայի թագուհուն»։ Օրիորդից խօսք առնելուց յետոյ, Մահարանէն ասում է. «Ինչ որ գրվում է, նա չէ մոռացվում, և մի գիր գնելով մեդալիոնի մէջ, տալիս է Միսս Բէյլբիին՝ որ սա անձամբ յանձնէ մեծ թագուհուն։ Միսս Բէյլբին Անգլիա վերադառնալուն պէս՝ հրաւիրվում է թագուհու մօտ և հարկաւոր տեղեկութիւնները տալուց յետոյ, թագուհին դառնում է դէպի իր մօտ գտնուած կանանց և ասում է. «Այսպիսի տեղեկութիւններ ստանալուց յետոյ՝ մենք պէտք է այս խեղճ արարածներին անպատճառ օգնութիւն հասցնենք»։ Իսկ երբ Միսս Բէյլբին ներկայացնում է թագուհուն և նրան է տալիս Մահարանէի իրեն յանձնած մեդալիոնը՝ Վիկտորիան ասում է. «Մենք ցանկանում ենք, որ ամեն մէկը գիտենայ՝ թէ որքան մենք համակրում ենք նրանց բոլորին էլ, որոնք աշխատում են թեթևացնել Հնդկաստանում տանջուող կանանց տխուր վիճակը»։

Նոյն իսկ Հնդկաստանի տեղական մամուլն էլ մեծ համակրանքով է վերաբերվում դէպի կանանց ազատութեան խնդիրը։ Այսպէս օր. Le Indian World լրագրի 1883 թուականի Յունվարի 20-ի համարում տպուած մի յօդուածի մէջ ասուած են հետևեալ տողերը. «Կասկած չկայ՝ որ Հնդկաստանի կանայք մի նշանաւոր դեր ունեն խաղալու իրենց երկրի զարգացման խնդրի մէջ։ Քանի որ մեր կանայք ազատ և կարգին դաստիարակութիւն չունեն, վերածնութեան յոյս չը կայ»։ Բայց Հնդկաստանցիները աւելի ցանկանում են ունենալ բժիշկ կանայք և չեն համակրում medical missionary-

ներին, որոնց համար բժշկականութիւնը միակ միջոց է՝ իրենց գլխաւոր քարոզչութեան նպատակին հասնելու։

«Հնդկաստանում բժիշկ կանանց աւելի համակրանքով են ընդունում, գրում է դոկտոր տիկին Elizabeth Hoggan-ը, նա մանաւանդ ներանց, որոնք կատարելագործել են իրանց ուսումը, իսկ բժիշկ-միսիոնարներ՝ կանանց վրա փոքր ինչ կասկածաւոր աչքով են նայում։ Ինչ բարձր բժշկական տիտղոս էլ որ ներանք ունենային։ Միսիոնարները կարող են ունենալ մեծ անձնական արժանաւորութիւններ և մեծ փորձառութիւն, բայց ես կարծում եմ որ Հնդկաստանի կանանց հասարակական դրութեան բարեփոխումը, ինչպէս կեանքի և բոլոր իրական զարգացումը՝ պէտք է կատարուի ազգային ոգւով։ Զարգացումը պէտք է լինի պատմութեան և երկրի հին դաստիարակութեան վրա հիմնուած, որ երբեմն տալիս էր կնոջ ազատութիւն՝ որից նա զուրկ է այժմս»։

Ահա 30 տարի է, ինչ որ անգլիական կառավարութիւնը Կալկաթայում, Բոմբայում և Մադրասայում մանկաբարձուհիներ է պատրաստում։ 1854 թուականին, այս երեք քաղաքում կառավարութիւնը դպրոցներ է հիմնել մանկաբարձուհիներ պատրաստելու համար՝ թէ տեղացիներից և թէ եւրոպացիներից։

Մինչև 1871 թուականը, տեղացի մանկաբարձուհիների թիւը շատ սակաւ էր։ Մանկաբարձուհի էին դառնում գլխաւորապէս անգլիացի և Էրազացի կանայք։ Այս ժամանակից սկսած՝ տեղացի մանկաբարձուհիների, նմանապէս դեղատների և հիւանդանոցների թիւը շատանում է, այնպէս որ ծննդաբերներին հոգ տանող կանանց թիւը, 1880 թուին, հասնում է 2,120-ի, իսկ 1879 թուին միայն 992 էր։

1867 թուին Բասիլլում մի դպրոց հիմնուեցաւ՝ տեղացի օրիորդներին բժշկութեան մի քանի ճիւղերի հետ ծանօթացնելու նպատակով։ Աշակերտուհիները գիշերօթիկներ էին։

1874 թուից Մադրասայում բացուեց կանանց բժշկական ուսումնարան, շնորհիւ գործունեայ բժիշկ Եդուարդ Բալֆուրի։ Բժիշկ Բալֆուրը հրաւիրում էր կառավարութեան ուշադրութիւնը բժիշկ կանանց կարևոր հարցի վերայ մատնացոյց անելով, այն 100 միլիոն կանանց վրա, որոնց օգնել կարող էին միայն բժիշկ կանայք։

Մադրասի բարձր բժշկական ուսումնարանում մեծ յառաջդիմութիւն ցոյց տուին չորս բժիշկ կանայք, որոնցից երեքը Էրազացի էին, իսկ մէկը՝ անգլուհի էր, Mrs. Sharlieb անունով, որը արդէն ընտանիքի մայր էր։ Այդ կինը՝ վերջացնելով իր ուսումը, գնաց իր որդկերանցով Անգլիա և Լօնդօնի համալսարանում քննութիւն տալուց յետոյ՝ ոսկեայ մեդալ և դոկտորի տիտղոս ստացաւ։ Նա հիմայ Մադրասումն է։ Հնդկաստան գնալուց առաջ,

նա հրաւիրուեցաւ Վիկտորիա թագուհու մօտ և գովասանք ու քաջալերութիւն ստացաւ նրանից։

Դոկտոր Բալիուրը բացեց Հնդկաստանի ներկայ հինգ բժշկական դպրոցներից առաջինը։ Կին-դոկտոր Նանսի Մոնելը, որ սկզբում միսիոնար-բժիշկ էր, կատարելագործելով իր մասնագիտութիւնը և թողնելով կրօնական քարոզութիւնը՝ իրան ամբողջապէս նուիրեց բժշկականութեան։

Արդէն վաղուց հաստատուած կայ Լօնդօնում մի յայտնի ընկերութիւն, որի նպատակն է Հնդկաստանին և Մեծ-Բրիտանիային մտիկ յարաբերութեանց մէջ պահել և հեշտացնել Անգլիայի և Հնդկաստանցիների բարեկամական յարաբերութիւնները։ Այս ընկերութիւնը Բոմբայում ստորագրութիւն բացաւ՝ որը մեծ յաջողութիւն ունեցաւ։ Մէկը գրուեց 2,000 ֆրանկ, մի ուրիշը 1,000 ֆրանկ, մի տեղացի այրի կին 2,000 ֆրանկ։ Ստորագրողների թիւը այնքան շատացաւ, որ 1883 թուին արդէն 125,000 ֆրանկից աւելի էր ժողոված։

Մի Բոմբայեցի հարուստ վաճառական խոստացաւ 300,000 ֆրանկ տալ մի կանանց հիւանդանոց հիմնելու համար, եթէ նրա կառավարութիւնը յանձնուի բժիշկ կանանց։ Անցկացած նոյեմբեր ամսին մի տաղանդաւոր կին՝ որ լաւ ուսում էր առել և երկար ժամանակ բժշկութեամբ պարապել էր Անգլիայում, գնաց Բոմբայ, ուր նրան յանձնեցին մի դեղատան գլխաւոր պաշտօնը, մինչև մի նոր հիւանդանոցի շինութիւնը կը վերջանար։ Այս շինութեան առաջին հիմնաքարը դրել է դուքս de Connaugh Վիկտորիա թագուհու երրորդ որդին, որ այս րոպէիս գտնվում է Հնդկաստանում։ Բոմբայում գործի այդպիսի յաջողութիւն գտնելը մի դեղեցիկ օրինակ է՝ թէ ինչ կարող է անել անհատական ինիցիատիվը մի ազատ երկրի մէջ։

Անցեալ տարի, մի երիտասարդ այրի բրահման կին, որը իր հօր շնորհիւ հիմնաւորապէս ծանօթացել էր հնդկական հին հարուստ գրականութեան ու սանսկրիտ լեզուին, խիստ համակրական ընդունելութիւն գտաւ Օկսֆորդի համալսարանի պրոֆեսսորների կողմից։

«Հնդկաստանի կանայք», ասում է այդ գիտնական տիկինը, աւելի կաշկանդուած են, քան թէ ուրիշ երկիրների կանայք։ Սրանցից շատերը առաւել շուտ կը մեռնեն, քան թէ կը խօսեն իրանց հիւանդութեան մասին մի տղամարդու հետ։ Շատ կանայք էլ վաղաթառամ մեռնում են, զուրկ լինելով բժիշկ կանանց օգնութիւնից։ Ես ազաչում եմ կառավարութեանը, որ նա հարկաւոր միջոցներ փնտռէ՝ կանանց համար բժշկութիւն ուսումնասիրելը հեշտացնելու և այսքան կանանց բաղմութեան կեանքը ազատելու համար։

Միայն նորերումս Կալկաթայի բարձր բժշկական կոլլեժը բաց արեց իր դռները կանանց համար էլ։ Ամենից առաջ այդ թոլլտուութիւնից օգուտ քաղեց մի երիտասարդ բրահման կին, որ Կալկաթայի համալսարանում գրականութեան կանդիդատի (Bachelier ès lettres) աստիճան էր ստացած. նա մուտք այդ կոլլեժը և մեծ՝ յառաջադիմութիւն էր ցոյց տալիս, և նշանաւոր ապագայ պէտք է ունենայ։

Այս բոպէիս կանայք կարող են բժշկականութիւն սովորել և հետևեալ քաղաքներում.—Մադրասում, Կալկաթայում, Ագրաում և Լահօրում։ Բժշկական ուսումնարանում աւարտելուց յետոյ դոկտորի տիտղոս ստանալու համար՝ կանայք պէտք է համալսարանում քննութիւն տան։

Այս կարճ նկարագրութիւնից ընթերցողը տեսնում է, որ Հնդկական բժիշկ կանանց խնդիրը արդէն իսկ վճռուած է դրական կերպիւ։ Հնդկաստանի բժիշկ կանայք մեծ ապագայ կ'ունենան, որով և մեծապէս կարող կ'լինին օգնել իրենց թշուառ զանազանի մէջ փակուած քոյրերին։ Մեզ մնում է միայն ցանկանալ՝ որ Կովկասի կանանց մէջ էլ զարթնի բարի նախանձ՝ այդ Հնդկաստանի իրենց քոյրերին նմանելու, որովհետև մեր կնոջ դրութիւնն էլ շատ քչով է զանազանվում Հնդկաստանի զանազանում փակուած կանանց դրութիւնից։

Ս. Թադեոսեանց.

1884 թ. 5 ապրիլի

Թիֆլիս.

# ՍԻՐՈՑ ԵՐԳ

*Զար մարդիկը երգ չունին։*

*Շելլեր.*

Պատրաստ է մեր հանդէս գրական,
Նա լոյս աշխարհ շուտ կ գայ.
Յօդուած, վէպեր, լուրերը կան՝
Միայն ոլորուն երգ չկայ։

Ես ում դիմեմ, ումից խնդրեմ—
Ինձ բաշխել երգ—երգ սիրոյ.
Երգ ես ինչպէս գրել պատուիրեմ
Մինչ ազատ է երգ մարդոյ։

Ես շատ մարդկանց—լաւ գրողի,
Գիմնազիստի դիմեցի,
Օրիորդի, ուսանողի,
Եւ շատերից խնդրեցի։

Բայց սիրոյ երգ չունէր նչ—ոք.
Գրողին . . . . . .
Տխուր սրտով, տխուր մտօք
Երգել նա էլ էր անզօր։

Մէկն ուսուցչից էր զայրացած՝
Միւսը թթու ծիծաղում էր,
«Սէր ասածդ, խեղճ արարած,
Չկայ», ծաղրով ասում էր։

Ա՜խ, ասացէք, սէրն ուր է վառ...
Մի դուռը կայ.... բաղխեմ նրան.

Ամեն թշուառ և սիրահար
Միշտ դիմել են այդ դրան։

Դա դուռն է այն սուրբ տաճարի,
Ուր ապրում են կեանք և սէր.
Դորա Աստուածն է բարի,
Սիրող, ուրախ սրտի տէր։

Դա Աստուածն է՝ որի կտորը
Մեր ամենիս մէջ էլ կայ.
Սիրուց է մեր միսն—ոսկորը,
Իւր սրտումն ով սէր չի զգայ։

Դա Աստուածն է՝ որից Հոգի
Անշունչ ստանում են լարեր,
Ձայն են տալիս սիրոյ երգի
Եւ կակղում են քար սրտեր։

Դա Աստուածն է՝ որ ստեղծող է,
Որ ստեղծել է պոէտին.
Դա Աստուածն է՝ որ տիրող է
Զգացող քնքոյշ մեղմ սրտին։

Դա Աստուածն է՝ որին սոխակ
Սիրոյ դիմում է երգով—
Երբ ստանում է սէր փոխանակ—
Գալիս է նոր կեանք պարգև։

Ես այդ չքնաղ սիրոյ Աստծուն
Երգ խնդրելով դիմեցի,
Նա ինձ տուաւ երգ ոլորուն՝
Ես նրան կրծքիս սեղմեցի։

ՊԱՏԱՀԱԿԱՆ ԵՐԳԻՉ

# ՍԻՄՈՆԻ ՀԱՅՐԸ

## ՎԷՊ

### ԳԻՒԻ—ԴԸ ՄՈՊԱՍԱՆԻ

Կէս օրուայ ժամը խփեց։ Ուսումնարանի դուռը բացուեցաւ եւ աշակերտները միմեանց հրելով դուրս վազեցին։ բայց փոխանակ զանազան կողմեր ցրուելու եւ շտապելու տուն—ճաշ ուտելու, ինչպէս դա լինում էր ամենայն օր՝ նրանք կանգնեցան ուսումնարանի դռնից փոքր ինչ հեռու եւ խումբ խումբ հաւաքուելով՝ մի բանի վրայ փսփսում էին։

Բանը նրանումն էր, որ այդ օր առաւօտեան, առաջին անգամը ուսումնարան եկաւ Բլանշոտի որդին, Սիմոնը։

Երեխաներն իրենց գերդաստաններում լսել էին այդ Բլանշոտի մասին, որի հետ փողոցումը, կամ որ եւ իցէ մի ուրիշ տեղ պատահած ժամանակը, նոցա մայրերը թէեւ բաւականին բարեկամաբար էին տեսնվում, բայց իրար մէջ նորա վերայ միայն խղճալի արհամարհանքով էին խօսում։ Նոցա երեխայքը նոյնպէս ապականուել էին այդ արհամարհանքով, թէ եւ նոքա չ՚գիտէին դորա պատճառը։

Սիմոնի մասին նոքա ոչինչ չ՚գիտէին, որովհետեւ նա համարեա տանից դուրս չէր գալիս եւ երբէք չէր վազվզում նոցա հետ գիւղի փողոցներում կամ գետի ափերում։ Ի հարկէ, նոքա պատճառ չունէին նորան սիրելու եւ ուրախութեամբ ու զարմանքով մէկ մէկի հաղորդում էին այն խօսքերը, որը լսում էին մի տանչորս, տասնը հինգ տարեկան տղայից։

—Լսեցէք.... Սիմոնը... նա հայր չունի, առաց տղայի

մէկը եւ այնպէս մի խորհրդաւոր կերպով գոցեց աչքերը, որ էլ կասկածելու տեղիք չմնաց, որ նա մի բան գիտէ։ Ուսումնարանի շեմքում երեւաց Բլանշոտի որդին։ Նա 7, 8 տարեկան էր, փոքր ինչ գունաթափ, մաքուր հագնուած, նայում էր վախկոտ եւ շատ ծանրաշարժ էր երեւում։

Սիմոնը վերադառնում էր տուն, երբ ընկերները միմեանց հետ իրենց փոփոխը շարունակելով՝ սկսեցին քիչ-քիչ մօտենալ եւ վերջապէս բոլորովին շրջապատեցին Սիմոնին։ Նոքա նայում էին նորա վերայ խորամանկ եւ չար աշակերտների աչքերով, ինչ որ մի չար բան մտածելով։

Զարմացած եւ շփոթուած Սիմոնը կանգնած էր նոցա մէջ տեղը, չը հասկանալով՝ թէ ինչ են կամենում անել նորա հետ։ Վերջապէս նորա լուր հաղորդող տղան, հպարտացած իւր ասածների պատճառած տպաւորութեամբ, նորան այս հարցմունքներն տրաւ։

—Քո անունդ ինչ է։

—Սիմոն, ասաց երեխայն։

—Սիմո՞ն... իսկ հօրդ անո՞ւնը։

Սիմոնը բոլորովին շփոթուած, չուռ կանգնած էր։

—Հօրդ անունն ասա՛, հօրդ անունը, ծաղրելով գոչեց տղան։

Սիմոնը արդէն քիչ էր մնում որ լաց լինի։ Տղայքը սկսեցին հրոհրուալ, իսկ յաղթանակ տանող տղան արտասանեց.—դուք տեսաք, որ նա հայր չունի։

Խորին լռութիւն տիրապետեց։ Երեխայք զարմացած մնացին այդպիսի անսովոր հրաշալի պատահմունքի վերայ —առանց հօր տղայ։

Նոքա նայում էին նորա վերայ, ինչպէս մի հրաշքի, մի գերբնական էակի վերայ եւ զգում էին՝ թէ ինչպէս նոցա մէջ մեծանում էր այն անբացատրելի արհամարհանքը, որը ունէին իրենց մայրերը դէպի Բլանշոտուը։ Իսկ ինչ վերաբերում է Սիմոնին, նա այս իւր վրայ հասած ղժբաղդութիւնից՝ մեռածի նման կանգնած, ստիպուած էր վայր չընկնելու համար ծառից բռնել։ Նա մտածում էր՝ ինչ պատասխանէ ընկերներին եւ ոչինչ չէր կարողա-

նում հնարել։ Իրաւ, ինչպէս կարելի է մերժել այն զարհուրելի փաստը, որ նա հայր չունի։ Վերջապէս բոլորովին դեղնած, նա անգիտակցաբար գոռաց,—չէ՛, ես հայր ունիմ։

— Ո՞ւր է նա, հարցրեց նոյն տղան։

Սիմոնը նորից լուռ կացաւ. նա չգիտէր, թէ որ տեղ է իւր հայրը։

Ծաղրը աւելի սաստկացաւ։ Իրենց զարգացումով, գաղանների շատ հեռու չգնացած այդ դաշտերի որդիները, ոգեւորուած էին այն անգութ պահանջով, որը տիպում է հաւերին իրանց թռչնոցի մի թուլացած ընկերներին նեղել, մեռցնել։

Սիմոնը տեսաւ իւր դրացի որբեւայրու փոքրիկ որդուն, որը նմանապէս մնն էր գալիս միայն իւր մօր հետ։

—Դո՞ւ էլ հայր չունիս, ասաց Սիմոնը։

— Ոչ, ունիմ, պատասխանեց դրացին։

—Ո՞ւր է նա, ձեռը չէր վեր առնում Սիմոնը։

—Նա մեռել է, հպարտութիւնով յայտնեց երեխայն. իմ հայրը գերեզմանումն է։

Լսուեցաւ գովասանական հաճոյութեան փսփսոց, որպէս թէ այն փաստը, որ իրենց ընկերի հայրը թաղուած է գերեզմանում, աւելի բարձրացրեց նորան Սիմոնի վերայ, որը բոլորովին հայր չունէր։ Այդ փոքրիկ անպիտանների հայրերը մեծ մասամբ շատ չար, հարբեցող եւ գող էին եւ իրենց կանանց հետ անգթաբար էին վարվում։ Անպիտան երեխաները խթելով մէկ մէկի՝ էլ աւելի մօտիկ շրջապատում էին Սիմոնին, կարծես թէ նոքա—օրինաւոր ժառանգները իրենց մարմիններով պատրաստվում էին խեղդել այդ ապօրինի զաւակին։

Ցանկարծ նոցանից մէկը որը Սիմոնի դէմուդէմ կանգնած էր, ցոյց տուաց նորան լեզուն եւ ծաղրելով գոռաց—Դու հայր չունիս... դու հայր չունիս... Սիմոնը պինդ քաշեց երկու ձեռքով նորա մազերից ու սկսեց ծեծել նորան ոտերով։ Հակառակորդը խածեց Բլանշոտի որդու թուշը։

Ծագեցաւ զարհուրելի կռիւ. հակառակորդներին բաժանեցին։

Ընկերները Սիմոնին վայր գցեցին ու անգթաբար ծեծեցին։ Երբ վերջացրեց նա նորանց ձեռից ազատուեցաւ, վերկացաւ ու սկսեց մեքենայաբար (անգիտութեամբ) թափ տալ ձեռներով իւր շորերը։ Նրա վրա այդ փոքրիկ անպիտանները սկսեցին ծաղրել.—գնա գանգատուիր քո հօրդ։

Սիմոնը զգաց որ իւր սիրտը լցուեցաւ վշտով. նոքա իրանից աւելի ուժեղ էին եւ ծեծեցին, բայց նա չ'կարողացաւ մինչեւ անգամ պատասխանել, գիտենալով որ նոքա ճշմարիտ էին ասում, որովհետեւ նա իսկ որ հայր չունէր։

Հպարտութիւնից նա քանի մի րոպէ ընդդիմանում էր խեղդող արտասուքներին, իսկ յետոյ առանց ձայնի, հեկեկալով, նա սկսեց զարհուրելի կերպով ողբալ, որից դողում էր նորա ամբողջ փոքրիկ մարմինը։

Գաղանային ուրախութիւնը տիրեց նորա թշնամիներին եւ ինչպէս իսկական վայրենիներ, նոքա ձեռք ձեռքի տուին, կանգնեցին բոլորակ ու սկսեցին պար գալ, ասելով. «Նա հայր չունի.... նա հայր չունի...»

Սիմոնը յանկարծ դադարեցաւ լաց լինելուց. նորան կատաղութիւնը խեղդում էր։

Քարի կտորները վեր ընկած էին գետնի վրայ. Սիմոնը հաւաքելով նոցանից իւր ձեռքերում, սկսեց ուժով թափել իւր դահիճների վերայ։ Երկուսը, երեքը նոցանից վիրաւորուած գոռալով փախան։ Սիմոնը այս տեսնելով հրպարտ ու ուրախ դէմքով նայում էր, թէ ինչպէս տհը տիրեց ամենին։

Ամբոխը երկչոտ է լինում եւ ինչպէս միշտ այդ լինում է, երկչոտները իրանց մոռացած՝ այդ մի մարդու առաջ բոլորն էլ ցիրուցան եղան, փախան մէկ մէկի ետեւից դեպի գանազան կողմեր։

Մէնակ մնալով առանց հայր փոքրիկ տղան, միտը բերեց մի անցք, որը ստիպեց նորան մի վճիռ ընդունել եւ շտապով վազել դէպի գաշտը։ Նա վճռեց իսկոյն խեղդուել գետումը։

Պատահմունքը, որ միտը բերեց Սիմոնը—այս էր։ Ութ տարեկան տղան, մի անբախտ տղան խեղդուեցաւ անօթութիւնից։ Երեխայն գետի մօտն էր այն ժամանակ,

երբ որ խեղդուածին դուրս քաշեցին. կենդանի ժամանակ նա այնպիսի խրճալի, աղտոտ (անմաքուր) ու գարշելի էր երեւում, բայց հիմա զարմացնում էր երեխային իւր բոլորովին բաց նայող աչքերով, թրջուած երկար միրուքով ու անխռով, խաղաղ գունաթափ դէմքով։

—Նա արդէն մեռած է, ասում էին նորա շուրջը։— «Նա հիմա շատ բաղդաւոր է», աւելացրեց նոցանից մէկը։

—Խեղճ խեղդուածը բոլորովին փող չունէր։ Ինքը Սիմոնը հայր չունի եւ այս պատճառաւ նա պէտք է խեղդուի։

Երբ նա մօտեցաւ գետին, կանգնեցաւ եւ նայեց նորա վերայ. ձկները երեւում էին նորա պարզ երեսին եւ ժամանակէ ժամանակ բոլորովին դուրս էին գալիս ջրից, որ եւ իցէ մի ճանճ էին բռնում։

Սիմոնը էլ լայ չէր լինում։ Ձկների խաղալը նորան շատ զուարճալի եւ հետաքրքիր երեւեցան։

Բայց դա միայն ժամանակաւոր հանդարտութիւն էր, ինչպէս լինում է փոթորկից առաջ։

Ի՞նչպէս..... Սիմոնի գլխում մտքեր էին ծագում, որոնք պատճառում էին նորան զգալի ու անտանելի տանջանք. «որովհետեւ հայր չունիմ՝ ես պէտք է խեղդուիմ։»

Օրը սաստիկ տաք էր ու լաւ. վառ արեգակը տաքացնում էր խոտը. գետի ջուրը փայլում էր՝ ինչպէս հայելի։

Երբեմն Սիմոնի վերայ ընկնում էր բոպէական թրմբրութիւն. այսքան արտասուք թափելուց յետոյ, նա ըզգում էր յոգնածութիւն եւ ցանկանում էր քնել այն տեղ՝ խոտի վերայ։

Մի փոքրիկ կանաչ գորտ թռաւ նորա ոտի տակից. նա փորձեց նորան բռնել, բայց լպրծուն գորտը դուրս սլիեցաւ. Սիմոնը նորա ետեւից ընկաւ, բայց նա երեք անգամ դուրս էր թռչում նրա ձեռքերից։

Վերջապէս նա բռնեց նորա թաթերի ծայրերից ու ծաղրում էր, երբ տեսնում էր, որ նա կամենալով աղատուել՝ հաւաքում էր մարմնոյ տակ իւր ոտքերը, յետոյ գլխի վերայ առաջ էր ձգվում, թափ տալով օդում իւր առաջին

թաթերը, որոնք կարծես թէ ձեռքեր լինէին եւ շուռ էր տալիս իւր դեղին շրջանակով պատած աչքերը։ Այս շարժմունքները Սիմոնին միտը բերին նեղ տախտակներից շինուած մի խաղալիք, որը մեքենայով շարժեցնում էր փոքրիկ փայտէ դինուորներին։ Յետոյ միտը բերեց նա իւր տունը եւ մայրը ու նորից սկսեց դառնապէս լաց լինել։ Դողը տարածուեցաւ նորա ամբողջ մարմնի վրա։ Նա ծունկի վերայ ընկաւ եւ կամենում էր կարդալ այն աղօթքը, որը նա միշտ կատարում էր քնից առաջ, բայց չ'կարողացաւ վերջացնել, որովհետեւ արտասուքները ու ողբը խեղդում էին նորան բոլորովին եւ նա չէր կարողանում ոչ տեսնել եւ ոչ մտածել։ Յանկարծ մէկի ծանր ձեռքը ինչաւ նորա ուսի վերայ ու մէկի կոպիտ ձայնը հարցրեց նորան.

—Ի՞նչ բան է վշտացրել քեզ այդպէս, բարեկամ։

Սիմոնը բարձրացրեց գլուխը. նորա առաջ կանգնած էր մի բարձրահասակ բանւոր՝ սեւ միւրուքով, սեւ գանգուր մազերով եւ սիրով նայում էր նորա վերայ։

Աչքերը արտասուքով լիքը ու հեկեկալով Սիմոնը պատասխանեց.—Նոքա (տղայք) ինձ ծեծեցին.... նորա համար..... որ.... ես..... հայր... չունիմ.....

—Ի՞նչպէս թէ հայր չ'ունիս, ժպտալով պատասխանեց բանւորը. ամեն մարդ հայր ունի։

—Ես.... ես... չ'ունիմ, կրկնեց երեխան կակազելով, որից սեխմիլում էր նորա շլինքը։ Յանկարծ բանւորը ծանր կերպարանք ընդունեց. նա ճանաչեց Բլանշոտտի որդուն, որոյ պատմութիւնը փոքր ինչ ծանօթ էր նորան, թէեւ նա շատ ժամանակ չէ, որ եկել էր այդ գիւղը։

—Մի՛ լար, բալաս, գնա՛նք, ես քեզ կ' տանեմ քո մօր մօտ, ասաց նա։—Այնտեղ դու կ' գտնես հօրդ։

Նոքա ճանապարհ ընկան. բանւորը Սիմոնի ձեռքը բռնած՝ տանում էր ու նորից ժպտում էր. նա հէնց ինքն էլ փոքր ինչ ուզում էր Բլանշոտտի վրայ նայել, որն այս բոլոր կողմերում ամենագեղեցիկ աղջիկն էր համարվում։

—Ո՞վ գիտէ, մտածում էր նա, եթէ աղջիկը մէկ ան-

գամ արդէն սիրել է, ինչու նա չէ կարող սիրել երկրորդ անգամն էլ։

Նոքա մոտեցան փոքրիկ, չափից դուրս մաքուր, ճերմակ տան։

—Այստեղ է, ասաց տղան ու կանչեց. «մայրիկ։»

Շէմքի վրայ երեւեցաւ մի կին։ Նորան տեսնելուն պէս՝ բանւորի շրթունքների վրայ ժպիտը խակոյն սառեց. նա մէկէն հասկացաւ, որ ոչ մի հանաք չի կարելի անել այս բարձրահասակ, գունաթափ աղջկայ հետ, որը կանգնած էր իւր տան շէմքի վերայ եւ կարծես թէ կամենում էր պահպանել նորան այնտեղ տղամարդու մոնելուց։ «Բաւական է արդէն» որ այս պատերիս մէջ է կատարուել մի խաբէութիւն»։ Բանւորը ձեռքերում գոտակը բռնած՝ փընթփընթաց.—«Ես ձեզ մոտ բերի ձեր որդուն, որը մոլորուել էր գետի մոտ։»

Բայց Սիմոնը փսթթուեցաւ մոր շլինքը ու նորից լալով կանչեց.—Ո՛չ՝ մայրիկ, ես կամենում էի խեղտուել, պատճառ որ երեխայք ինձ ծեծեցին... ծեծեցին նրա համար, որ ես հայր չ՝ունիմ։

Սատանիկ կարմրեցան մատաղ աղջկայ թշերը եւ խորին մինչ սիրտը վիրաւորուած, նա ջերմ համբոյրներով ծածկեց որդու թշերը, մինչ արտասուքները թրջեցին նորա բոլոր երեսը։ Նախոթուած բանւորը չ՝գիտէր՝ գնալ, թէ ոչ. ինչպէս յանկարծ Սիմոնը դարձաւ դէպի նորան եւ ասաց.—կամենում էք ինձ հայր լինել։

Խորին լռութիւն տիրեց։ Բլանշոտոը լուռ եւ ամօթով տանջուած, կանգնած էր պատին թեքուելով ու երկու ձեռքով սեղմում էր իւր խեղճ սիրտը։ Տեսնելով, որ ոչ ոք չի պատասխանում նորան, տղան նորից խօսեց։—Եթէ դուք այդ չէք կամենում, ես կ՝գնամ կ՝ խեղտուիմ։

Բանւորը այդ ամենը հանաքի փոխեց ու ծիծաղելով պատասխանեց.—Լաւ, ես համաձայն եմ։

—Ի՞նչպէս են քեզ անուանում, հարցրեց տղան։—Հարկաւոր է, որ ես ասեմ տղայոց քո անունը, երբ նոքա ինձ նորից կ՝ձանձրացնեն։

—Ֆիլիպպ, պատասխանեց գործաւորը։

Սիմոնը մի քիչ լռեց. շատ կարելի է, նա աշխատում էր միայն պահել այդ անունը, իսկ յետոյ բոլորովին մխիթարուած, պարզեց նրան ձեռքերը եւ ասաց.—ապա, Ֆիլիպպ, հիմայ դու իմ հայրն ես։

Գործաւորը վեր բարձրացրեց նրան գետնից, պաչեց նրա երկու թշերից ու փախաւ առանց յետ նայելու։

Երբ միւս օր Սիմոնը եկաւ ուսումնարան, ընկերը չար ծիծաղով նորա դէմ եկաւ։ Դասերը վերջացնելուց յետոյ, չար տղան կամեցաւ նորոգել իւր հարցերը, բայց Սիմոնը քարի նման նորա երեսին տուաւ այս հետեւեալ խօսքերը.—Իմ հօրս կոչում են Ֆիլիպպ։—

Ամենայն կողմից ուրախ ոռնումն լսուեցաւ։

—Ի՞նչպիսի Ֆիլիպպ, ո՞վ է այդ Ֆիլիպպը։ Ո՞րտեղից գտար դու քո Ֆիլիպպը։ Սիմոնը լռեց, բայց անկասկած հաւատալով, որ նա հիմայ հայր ունի, քաջութեամբ նայում էր թշնամիների վերայ եւ աւելի լաւ էր համարում նորից ծեծուել, քան թէ ամօթով փախչել։ Բայց նորան ազատեց այդ չարչարողների ձեռից վարժապետը, եւ Սիմոնը վերադարձաւ տուն։

Նարունակ երեք ամիս, բարձրահասակ բանւոր Ֆիլիպպը շատ անգամ անցնում էր Բլանշոտի տան մօտից եւ երբեմն համարձակվում էր խօսել նորա հետ, երբ տեսնում էր նորան պատուհանի առաջ կար անելիս։ Բլանշոտը պատասխանում էր քաղաքավարութեամբ, բայց երբէք թոյլ չէր տալիս հանաք անելու եւ ոչ միանգամ չէր խնդրում Ֆիլիպպին իւր մօտ հիւր։ Այնու ամենայնիւ, Ֆիլիպպը որ բոլոր տղամարդկերանց պէս մի քիչ դիւրահաւան էր, կարծում էր թէ Բլանշոտը իւր հետ խօսակցելու ժամանակ՝ շատ անգամ կարմրում էր։

Լաւ է աչքը հանել, քան թէ անունը։ Վայր ընկած պատիւը շատ դժուար է նորից վերականգնել. դորա համար, չնայելով Բլանշոտի ոռնումն ու խոհեմ վարմունքին, այնուամենայնիւ սկսել էին նորա վրայ վատ վատ խօսել։ Ինչպէս վերաբերում է Սիմոնին, նա շատ սիրեց իւր նոր հօրը եւ համարեա ամեն երեկոյ, աշխատանքից յետոյ, նորա իրար հետ միասին էին մեն գալիս։

Տղան ջանասիրութեամբ գնում էր ուսումնարան եւ իւր անձնական արժանաւորութիւնը պահպանելով՝ անցնում էր ընկերների միջով, երբէք արժանի չէր համարում նոցա խօսքերին պատասխանել։

Վերջապէս մէկ անգամ, այն առաջուայ չար տղան նորից դարձաւ նորան այս նկատողութեամբ. «Դու խաբեցիր, դու հայր չ՝ունիս, որի անունը Ֆիլիպպ լինէր։»

—Ի՞նչ ես ուզում ասես՝ հարցրեց Սիմոնը սաստիկ շըփոթուած։ Տղան ուրախութիւնից ձեռքերը շփելով, շարունակեց.—Եթէ դու հայր ունենայիր, այն ժամանակ նա պէտք է լինէր քո մօր ամուսինը։

Սիմոնը շփոթուեցաւ այդպիսի արդար դատողութիւնից, բայց միւնոյն ժամանակ պատասխանեց.—Բայց այնուամենայնիւ նա իմ հայրս է։—

—Նա՞ կարելի է, ծաղրաբար պատասխանեց տղան, բայց նա քո իսկական հայրը չէ։

Բլանշոտի որդին գլուխը կախեց ու մտածմանց մէջ ընկած՝ գնաց հայր Լուազօնի դարբնոցը, որտեղ աշխատում էր Ֆիլիպպը։ Այդ դարբնոցը կարծես թէ ծառերի տակ թաղուած էր։ Այնտեղ սաստիկ մութ էր եւ միայն կարմրատեսակ մեծ կրակարանի բոցը պարզ լուսաւորում էր հինգ ուժեղ դարբիններների երեսները, որոնք ծալել էին իրենց թեւերը մինչեւ արմունկները ու սաստիկ խփում էին մուրճերով զնդանին։

Այդ կարմրատեսակ լուսի մէջ նոքա դեւերի էին նըմանում։ Նոքա աշխատում էին տաքացած, ուզղած իրենց աչքերը դէպի կայծեր արձակող երկաթը. նոցա մոքերը իրենց ծանր մուրճի նման դժուարութեամբ էին դարսվում։ Սիմոնը ներս մտաւ. նորան ոչ ոք չ՝տեսաւ. նա կամաց գնաց իւր բարեկամի մօտ եւ նորա թեւից քաշեց։ Ֆիլիպպը յետ նայեց. գործը մէկէն դադարեցաւ եւ բոլոր դարբինները ուշադրութեամբ սպասում էին, թէ վերջը ինչ կ՝լինի։ Այս անսովոր լռութեան մէջ, լսուեցաւ Սիմոնի բարակ ձայնը։

—Ասա՝, խնդրեմ, Ֆիլիպպ. Մի՞շտոի տղան ինձ այս բապէիս ասաց, թէ դու իմ իսկական հայրը չես։

—Ի՞նչու այդ, հարցրեց բանտորը։

—Նորա համար, որ դու իմ մայրիկի ամուսինը չես։

Ոչ ոք չ'ծիծաղեց այդ խօսքերի վրայ։ Ֆիլիպպը մուրճի կոթի վրա յենլով, գլուխը կախ գցած մտածում էր։ Նորա չորս ընկերները նայում էին նորա վրայ, իսկ Սիմոնը, որը այդ հոկաների մօտ բոլորովին փոքրիկ էր երեւում, նրանից պատասխանի էր սպասում։

Վերջապէս դարբիններից մէկը, կարծես թէ ցանկանալով յայտնել իւր միւս ընկերների միտքը՝ ասաց Ֆիլիպպին.

—Այդ Բլանշոտը շատ լաւ ու ազնիւ աղջիկ է. չ'նայելով իւր անբաղդութեան, նա շատ քաջ եւ արի է եւ շատ համեստ ու խիստ կեանք է վարում. ազնիւ մարդու համար նա լաւ կին կ'լինէր։—Դա ճշմարիտ է, հաստատեցին միւս ընկերները։

—Ի՞նչ մեղքից է, որ նա վայր ընկաւ, շարունակեց դարբինը։ Խոստացան պահպանել վերան.... ես լաւ ճանաչում եմ շատ պատուելի կանանց, որոնք առաջ միեւնոյն դրութեան մէջ էին, ինչպէս հիմայ Բլանշոտը։

—Դա ճշմարիտ է, կրկնեցին մէկէն բանտորները։

—Ի՞նչ նեղութիւններ քաշեց նա՝ խեղճը, իւր որդուն առանց ուրիշի օգնութեան կրթութիւն տալով, շարունակեց դարբինը։ Միայն Աստուած գիտէ, թէ ինչքան արտասուքներ է թափել այն ժամանակից սկսած, երբ ժամից զատ էլ ուրիշ ոչ մի տեղ չի երեւում։

—Այդ բոլորը իրաւ է, հաստատեցին միւսները։

Ցեռոյ նորից լռութիւն տիրեց. միայն փուքսերն էին փսփսում եւ փչում օջախի կրակը։ Ֆիլիպպը նայեց տղի վրայ ու ասաց։—Դնա՛, ասա՛ քո մօրը, թէ ես այսօր երեկոյեան կ'գամ նորա մօտ խօսելու ու բռնելով Սիմոնի ուսից, կամաց դուրս տարաւ դարբնոցից։ Ֆիլիպպը նորից շարունակեց աշխատիլ ու հինգ մուրճերը նորից սիրով խփում էին զնգանին։ Նորա երկաթ էին կռում մինչի գիշեր, զօրեղ, ուժեղ եւ ուրախ, ինչպէս եւ վայել էր իրանց արածից բաւական մուրճերին։ Բայց ինչպէս տօն օրերը մայր եկեղեցու զանգակի ձայնը խլացնում է փոքրիկ զանգակների ձայնը, նոյնպէս եւ Ֆիլիպպի մուր-

ճը խշխում էր միւսների վերայ ու ամենայն բոլէ պատ-
ճառում էր աւելի ու աւելի խլացնող ձայն։ Նա ինքը
կանգնած էր կայծերի մէջ. նրա աչքերը փայլում էին. նա
մի առանձին ոգեւորութեամբ եւ կարծես բարկացած՝ ծե-
ծում եւ կռում էր երկաթը։

Երկինքը արդէն ծածկուած էր աստղերով, երբ Ֆիլիպպը
զարկեց Բլանշոտոի դուռը։ Նա հագած ունէր հանդի-
սաւոր տօն օրերի խոտակ շապիկ, եւ նորա միրուքը սանդ-
բած էր սովորականից դուրս ուշքով։

Մատաղ աղջիկը երեւեցաւ իւր տան շէմքի վերայ եւ
տխուր սկսեց խօսել։

—Դա ձեր կողմից շատ վատ է, պարոն Ֆիլիպպ, որ
դուք գալիս էք իմ մօտ՝ Համարեա գիշերով։

Նա կամենում էր պատասխանել։ Մի բան փնթփնթաց
եւ կանգնեց նորա առաջ բոլորովին շուարած։

—Դուք լաւ իմանում էք, որ հարկաւոր չէ թոյլ տալ
ինձ վերայ վատ խօսելու, շարունակեց Բլանշոտոը։ Այդ
խօսքի վերայ Ֆիլիպպը նորից կենդանացաւ եւ ասաց.

—Այդ ոչինչ, եթէ դուք կամենաք իմ կինս լինել։

Նա ոչ մի պատասխան չ՝ստացաւ. բայց մութ սենեա-
կում նորան թուեցաւ, թէ Բլանշոտոը կամաց գետնի
վրայ ընկաւ. Ֆիլիպպը շուտով ներս մտաւ։ Սիմոնը, որ ար-
դէն պառկած էր անկողնում, բայց դեռ չէր քնել՝ լսեց
համբոյրի ձայն եւ իւր մօր փսփսոցը։ Յետոյ յանկարծ
նա զգաց, որ զօրեղ ձեռքեր բռնեցին նրան անկողնում,
բարձրացրին վեր եւ նորա բարեկամի ձայնը ասաց. «Դու
կասես նրանց՝ քո ընկերներին, թէ քո հայրդ Ֆիլիպպ
Բէմի դարբինն է եւ թէ նա սաստիկ կ՝քաշէ նրանց ա-
կանջները, որոնք կ՝համարձակուին քեզ նեղացնել։

Առաւօտը, դասից առաջ, երբ բոլոր աշակերտները
հաւաքուած էին, փոքրիկ Սիմոնը վեր կացաւ իւր տեղից
բոլորովին գունատութիւն եւ նրա շրթունքները դող-
դողալով արտասանեցին.—Իմ հայրը, ասաց նա սուր
ձայնով, Ֆիլիպպ Բէմի դարբինն է. նա խոստացաւ պինդ
քաշել բոլորի ականջները, որոնք կ՝համարձակուին ինձ
նեղացնել։

*Այս անգամ ոչ ոք էլ չ՝ծիծաղեց, որովհետեւ Ֆիլիպպ Բէմի դարբնին ամենքն էլ լաւ գիտէին եւ դա այնպիսի հայր էր, որով ամեն մարդ կարող էր պարծենալ։*

Տ. ՄԱՏՈՑԵԱՆ.

Պետրովսկայա Ակադեմիա:

---

## ԳԵՂՋՈՒԿԻ ՅՈՅՍԸ

Գեղջուկի սայլն ալինդ ճռռում է
Ծանր բարձած բեռան տակին,
Եւ եզները կմախք դարձած,
Քաշում, տանում են սայլակին։

Սայլում նստած քաջ գեղջուկը,
Ձիպոտ բռնած կապտած ձեռին,
Նփում է իւր ջուխտակ եզանց
Ասելով երգ ծանր ու խորին։

«Դէհ... տնքացէք, կտրուկ եզներ,
Կրենք աւազ, քար ու գերան.
Տանենք, շինենք մեծ մեծ տներ,
Որ բնակի Հարուստ աղան...

«Բայց տեսնում էք այն տները
Շքեղ կերպով զուգած, կոկած,
Ի՞նչպէս փայլում, պսպղում են,
Կարծես ոսկուց լինին ձուլած...

«Մենք շինեցինք նրանց նոյնպէս
Մեր կորովի, արի ջանքով,
Մենք կանգնեցինք այն մեծ շէնքեր
Մեր աննկուն զօրեղ կամքով...

«Արիւն-քրտինք հոսեցնելով
Զարչարվեցինք նրանց վերայ,
Բայց մեր վարձի կէսը կտրեց
Նրա անխիղճ տէրն անզգայ...

«Բայց, սիրելիք, չվհատուինք,
Գործենք, տքնինք միշտ անդադրում.
Ամեն արգելք կործանելով
Անյաղթ լինենք մեր գործերում...

«Մեր առաջնորդն է այն լոյսը,
Որի առաջ ամեն չարեր՝
Ոչնչանում, փշրվում են
Որպէս չնչին թոյլ մժեղներ...

«Էլ ինչ ասեմ, աչքիս լոյսեր,
Մեր ոյժերը քաջակորով
Ոչ մի բոպէ չյապաղին,
Այլ միշտ մնան հալալ յուսով...

«Ցոյս ունենանք, տոկուն եղներ,
Կը բացուի մեզ օր բաղդաւոր,
Երբ մեր ջանքին գին կը դնուի
Եւ չենք լինի միշտ սգաւոր...»

ՍՐԻՆԳ

# ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ

## ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՄՕՐԻՍ—ԲԼՕՔ. Ձեռնարկ Գործնական տնտեսութեան, թարգմանեց զանազան փոփոխութիւններով Ս. Պալասանեան. Թիֆլիս, 1881 թիւ. Հրատարակութիւն Թ. Հ. Գ. Հ. ընկ.

„Դրամասլուխը կազմվում է խնայողութեամբ։"

էջ 78.

Ամենքին յայտնի է, որ բնական գիտութիւնները վերջին 30—40 տարիների ընթացքում հսկայական յառաջադիմութիւն և զարգացում են ունեցել. ուստի և այն ինչ որ առաջ նկատվում էր իբրև զուտ ճշմարտութիւն, այսօր ընդունվում է իբրև սխալ։ Այսօր ո՛չ ոք այլ ևս չի ասի թէ՝ կենդանական և բուսական օրգանիզմների մէջ չկայ ոչ մի ներքին կապ, յարաբերութիւն։ Այժմ ինչ կասէիք դուք, ընթե՛րցող, եթէ մէկը կամենալով բնագիտութեան դասագիրք յօրինել կամ թարգմանել՝ դիմէր 30—40 տարիներից առաջ եղած աղբիւրներին։ Հարկաւ դուք կը պատասխանէիք՝ որ այդ անձը կամ այնքան տգէտ է, որ ծանօթ չէ բնական գիտութեան արած յառաջադիմութեան կամ թէ ծանօթ լինելով հանդերձ նա այդ անում է դիտմամբ, հակառակ լինելով այդ գիտութեանց վերաբերմամբ տիրապետող նոր վարդապետութեան կամ նոր դպրոցի ուսման։

Դուք առաւել կը ցաւէիք, ընթե՛րցող, եթէ մի այդպիսի գործի ձեռնարկում է, այսինքն կամ իր տգիտութիւնն կամ իր յետադիմութիւնն է ցոյց տալիս։ Մի անձ, որ դպրութեան կամ գրականութեան որ և է մի ճիւղում պատուաւոր տեղ է բռնել կամ մի գրականական հաստատութիւն, որ իրեն նպատակ է դրել ազգի մէջ լուսաւորութեան տարածելուն օժանդակել՝ կրթիչ և օգտակար գրքերի հրատարակութեամբ։—

Այս բոլոր ասածս այժմ կարելի է վերաբերել այն գրքին, որի մակագիրը յիշուած է վերևում, այն անձին, որը թարգմանել է այդ գիրքը և այն հաստատութեան, որ հրատարակել է նրան։

Եւ որովհետև այդ գրքի ընտրութիւնը արել է ընկերութեան Խմբագրական Մասնաժողովը և ապա յանձնել պ. Պալասանեանին թարգմանելու, ուստի ընդունել առաջին կարծիքը՝ այսինքն թէ Մասնաժողովը այնքան տգէտ է եղել, որ չէ իմացել թէ իսկապէս Մորիս-Բլոքի պէս բուրժուա-էկոնոմիստների այն գրուածները ինչ տեղ են բռնում գիտութեան մէջ, որ կոչվում է „Քաղաքական տնտեսութիւն“ կամ ծանօթ չէ եղել թէ այժմ ինչ նոր վարդապետութիւն է տիրում այդ գիտութեան մէջ՝ մեզ համար անկարելի է։ Անկարելի է, որովհետև մենք գիտենք՝ թէ Մասնաժողովի անդամների մեծ մասը կրթութիւն և բարձր ուսում ստացած մարդիկ են, մանաւանդ որ այդ գրքի վերջնական խմբագրութիւնը եղել է ընդ հսկողութեամբ „Փինանսների մագիստրոս“ պ. Ղամբարեանի, ինչպէս վկայում է բարձրաձայն „Արձագանք“ լրագիրը (1882 թիւ № 1)։ Հասկանալի է ուրեմն, թէ տգիտութիւնն չէ պատճառը, որ հայ գրականութեան մէջ մի յետադէմ և վնասակար գիրք է դուրս գալիս և այն էլ ընծայվում է հասարակութեան՝ իբրև դասագիրք մի այնպիսի գիտութեան, որի վերջնական նպատակն է ընդհանուր մարդկային երաւանց և պարտաւորութեանց հաւասարութիւն քարոզել, մարդկային վշտերը ամոքել, արդարութիւն սփռել։ Մինչդեռ այդ դասագիրքը իր ուղղութեամբ և ոգուով հակառակ է այդ նպատակին։—Որքան մենք յիշում ենք, առաջին անգամն է, որ հայ գրականութեան մէջ քաղաքական տնտեսութեան վերաբերեալ ձեռնարկ է հրատարակվում։ ուրեմն առաջին անգամն է որ փորձ է լինում այդ գիտութիւնն էլ տարածել հայ հասարակութեան մէջ։ Եւ այդ նպատակին հասնելու համար, ինչ է անում Խմբագրական Մասնաժողովը „Փինանսների մագիստրոս“, ապա ուրեմն և քաղաքական տնտեսութեան մէջ մասնագէտ պ. Ղամբարեանի հետ։ Նա ընտրում է մի այնպիսի հեղինակի աշխատութիւն, որի վարդապետութիւնը հնացած և փտած է արդէն, որի մտքերը անհեթեթ և ծաղրելի են համարվում այդ գիտութեան ամենապայծառ և ամենահանճարեղ ներկայացուցիչների աչքում, որի տեսութիւնը վերջապէս, յետադէմ, բուրժուազական և վնասակար է համարվում։

Ուրեմն հասկանալի է, որ Մորիս-Բլոքի գրքի ընտրութիւնը արուած է դիտմամբ, նպատակով։ Այդ գրքի ուղղութիւնը և ոգին համապատասխան է մեր ներկայ „ազգային ասպարիզում“ գործող անձանց ոգուն և ուղղութեան։ „Նման զնմանն սիրէ“, ասում է հասարակաց առածը և մեր Թիֆլիսի գործողները, չը նայելով որ պատկանում են ըստ մեծի մասին բարձր ինտելլիգենտ դասակար-

գին։ Մորիս—Բլոքի գրքի ընտրութեամբ և պաշտպանութեամբ ցոյց տուին, որ իրենց յետագէմ նեղ հայեցուածքով պատկանում են բուրժուազիային, որպէսի ուղղութիւնը նոքա հետամուտ են մտցնել և մտցնում են հայ մամուլի և գրականութեան մէջ։ Ունենալով մինչև անգամ սեպհական օրգան—„Արձագանք" լրագիրը, իր բանկի դիրեկտոր, խմբագիր Արգար Յովհաննիսեանի հետ։ Եւ ասպարէզը այժմ այդ մարդկանցն է։ „Այժմ բուրժուան ամեն տեղ յանդուգն է", ասում էր Մեղուի թղթակիցներից մինը, եւ ամենայն իրաւամբ։ Բուրժուան զգում է գիտութեան զուտ և անարատ ճշմարտութիւնները իր մասնաւոր նպատակներին։ Նա հրատարակում է լրագիր, որպէս զի դորանով միջոց ունենայ բանկերում, դումաներում կամ որ և է ուրիշ հիմնարկութեանց մէջ դեր խաղալու։ Նա պաշտպան է հանդիսանում ազգային դպրոցներին, որպէս զի այդ միջոցով գրաւելով այդ դպրոցների համակրութիւնը, իր մասնաւոր գրավաճառութեան գործը ծաղկեցնէ։ Բուրժուային յատուկ չէ անկեղծ, անշահասէր, անխարդախ գործունէութիւնը՝ յանուն ճշմարտութեան, մարդասիրութեան։ առանց որ և է մասնաւոր ակնկալութեան։ Եւ որպէս զի իր դրութիւնը անխախտ և անսասան պահէ, իր արարքը և գործը արդարացնէ ժողովրդեան առաջ, որին նա ծառայեցնում է իր շահերին և նպատակներին՝ նա գիտմամբ մոլորեցնում է ժողովուրդը, հրատարակելով իր հետ համբաշխ և իր ուղղութեան ջատագով հեղինակների գրուածները։ Եւ նա յաջողում է։ Այսօր մեր բոլոր ազգային հիմնարկութեանց գլխին կանգնած են ըստ մեծի մասին (շատ քիչ բացառութեամբ) բուրժուազական դասի ներկայացուցիչները։ վերառէք Մարդասիրական, Բարեգործական, Գրքերի Հրատարակութեան ընկերութիւնները, դպրոցների հոգաբարձութիւնները, որոց նախագահները և անդամները վաճառականներ են, բանկի, ակցիոնէրական ընկերութեանց դիրեկտորներ և այլն։ Ընորհիւ այդ հանգամանքի, գրականութիւնն ևս սկսվում է վարակուել բուրժուազական ոգւով և մինչև անգամ այն անձինք, որոնք իրենց պաշտօնով և ուղղութեամբ պէտք է հակառակ լինէին բուրժուազականութեան, ընդհակառակ, ծառայում են նոցա շահերին։ օրինակ՝ ուսուցիչ և մեր գրականութեան մէջ պատուաւոր տեղ բռնած պ. Ս. Պալասանեան, Մորիս-Բլոքի գրքի թարգմանիչը։ Բուրժուազական ուղղութեան զարգանալուն նպաստում է և այն հանգամանքը, որ մեր գրականութիւնը և մամուլը զուրկ է բոլորվին քննադատական ոգուց։ Ուրիշ լուսաւորեալ երկիրներում թէև ծաղկում է նոյնպէս բուրժուազիան, բայց մամուլի անկեղծ, անաչառ քննադատութիւնը չլաւում է նորան և նորա պատճառած վնասների առաջը մասամբ առնում։ Եթէ մեր գրականութիւնը և մամուլը զուրկ չը լիներ անաչառ, անկեղծ և խիստ կրիտիկայից, անկարելի էր որ Մորիս-Բլոքի պէս

գերքը երևան գար առանց պախարակութեան և ընդդիմութեան հանդիպելու. անկարելի էր, որ „Արձագանքի" պէս բուրժուական-նութեամբ տոգորուած լրագիրը այնքան ստորացնէր իր, ուրեմն և մամուլի նշանակութիւնը, որ առաջնորդող յօդուածով գովաբանէր մի մասնաւոր անձի, յանձնարարելով նրան հասարակութեան՝ իբրև լաւ փաստաբանի, որպէս զի այդ հասարակութիւնը նորան դիմէ և ոչ ուրիշներին, կամ աւելի պարզն ասած՝ նորա ջիբերը լցնէ և այդ նորա համար, որ այդ փաստաբանութիւն սկսող անձը իր պաշտօնական ծառայութեան ժամանակ ազնուութեամբ է կատարել իր պաշտօնը. O temporas, o mores. միայն նորա համար, որ մի մարդ բարեխղճութեամբ է կատարել իր պարտաւորութիւնները, միայն նորա համար, որ նա անաղնիւ չէ եղել, դորա համար նորան բուրվում է խունկ և կնդրուկ եւ այն ևս առաջնորդող յօդուածով։ Առաջնորդող յօդուածով կարելի է գովաբանել մի անձ, միայն այն ժամանակ, երբ նա մի առանձին, արտաքոյ կարգի ծառայութիւն է մատուցել հայրենեաց, ազգին և եկեղեցուն։ Պ. Գ. Եւանգուլեանցի պէս իրենց պարտաւորութիւնները ազնուաբար և խղճով կատարող անհատներ շատ կան մեր հայրենեաց զանազան անկիւններում. ինչի՞ ուրեմն նոցա ևս խունկ չը ծխել։

Այս բոլորից յետոյ, այժմ գանք բացատրելու, թէ ինչի՞ մենք յետադէմ և վնասակար ենք համարում այն ուղղութիւնը, որ արտայայտվում է Մօրիս—Բլօքի գրքի մէջ և որն է այն թարմ, նոր վարդապետութիւնը քաղաքական տնտեսութեան մէջ, որի լոյսից փախչում են մեր բուրժուաները, որպէս զի մեր բոլոր ասածը չը լինի առանց փաստի և հաստատութեան և մեր, գուցէ փոքր ինչ խիստ յարձակումն, անտեղի և անարդար չը նկատուի։

Բայց նախ և առաջ խօսենք Մօրիս—Բլօքի գրքի հայերէն թարգմանութեան մասին(¹)։

Մի բան միայն, որ կարելի է այդ գրքի մէջ գովել—այդ լեզուն է։ Եւ ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, քանի որ թարգմանիչը պ. Պալասանեանն է։ Այնուհետև մենք հրաժարվում ենք որ և է մի բան խօսել գրքի բովանդակութեան մասին։ Գրքի բնագիրը դժբախտաբար մեր աչքի առաջ չունեինք. միւս կողմից գրքի յառաջաբանի մէջ ասուած է, որ "թարգմանիչը այս աշխա-

(¹) Երբ անցեալ տարի մենք Մշակի միջոցաւ քննադատեցինք Թ. Հ. Դ. Հ. Ը. դործունէութիւնը եւ մասնաւորապէս յիշեցինք Մօրիս-Բլօքի թարգմանութեան աւելորդութիւնը, նկատել տուինք, որ ընկ. խուսափում է հաշիւ ներկայացնելուց, ահա նորածին "Արձագանք" լրագիրը հենց իւր I համարում դուրս թողեց մի խայտառակ յօդուած՝ մեր դէմ "Մի վնասակար միջատ,, վերնագրով։ Եւ մեր քննադատութեան ճշտութիւնը ու խստութիւնը կամեցաւ հայհոյանքով մեղմացնել ու ցրել Բայց ,,Արձագանք" աւելի իրեն վնասեց։ Նա նկատեցաւ իբրեւ այդ լրագրի profession de foi։ Արհամարհանք դէպի ստորին ժողովուրդը։

տութիւնը հայ ընթերցողներին օգտակար անելու համար՝ հարկաւոր համարեց մի քանի նշանաւոր փոփոխութիւններ անել նորա մէջ՝ նա ստիպուեցաւ շատ տեղ զանազան յաւելուածներ ու յապաւումներ անել (տ. էջ 5)։ Մենք կարծում ենք՝ որ հէնց այդ փոփոխութիւններն են պատճառ եղել՝ որ գրքի մէջ այնպիսի տգէտ սխալներ կան՝ որոնք ցոյց են տալիս թէ գրողը որքան բոբիկ է եղել իր աւանդելի գիտութեան մէջ։ Դժուար է հաւատալ թէ Մորիս—Բլոք՝ թէև բուրժուազական բանակին պատկանող՝ բայց այդու ամենայնիւ գիտնական՝ թոյլ տար իրեն չը զանազանելու "վաճառականութեան„ գաղափարը "արտադրութեան„ (производство) գաղափարից։ Այսպէս օրինակ՝ խօսելով վաճառականութեան մասին՝ նա խօսում է մի և նոյն ժամանակ և գործարանների՝ ֆաբրիկների մասին (տ. էջ 138)։ Բերած օրինակները շատ տեղ բոլորովին անյաջող են։ Կարդացողը այդ գիրքը հեշտութեամբ կը նկատի սխալները՝ եթէ փոքր իշատէ ծանօթ է քաղաքական տնտեսութեան հետ։ Մեր կարծիքն է՝ որ պ. Պալասանեան զուր տեղն է վնասում իր համբաւին՝ ձեռնարկելով այնպիսի գործի՝ որը նա բոլորովին լաւ կերպով չէ ուսումնասիրած։ Իսկ մենք այժմ փոքր ինչ երկարօրէն կը բացատրենք այդ գրքի ընդհանուր ոգու և ուղղութեան վնասակարութիւնը՝ որով բացատրած կը լինենք մի և նոյն այն երկու հակառակ վարդապետութիւնները՝ որոնք տիրապետում են քաղաքական տնտեսութեան մէջ։ Ընթերցողը եզրակացութիւնն կարող է ինքն անել։

(Կ-բանակ-ի) Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ.

---

արհամարհանք դէպի այն համբաւ ուսանողները, որոնք փոխանակ „Արձագանքի" պէս ուրիշ մտաւոր վասատակով փայլելու, կամենում են աշխատել յօդուտ հասարակ ժողովրդեան՝ վերջապէս ոտից մինչ ցգլուխ բուրժուազական սգաւոր արտայայտութիւն։ Ահա ինչ որ ընթերցողները տեսան այդ յօդուածի մէջ եւ չը կարողացան իրենց զզուանքը չը յայտնել։ Մշակ, Մեղու, Պատկ նկատեցին այդ յօդուածի յանդգնութիւնը եւ վատ տպաւորութիւն թողնելը։ Բայց ուսանողները իհարկէ չէին կարող այդպէս մեղմ վարուիլ։ Նոքա չէին կարող բուրժուայ անունով չը վնաբել այն անձին, որ տալրելով փառաւոր տան մէջ։ վայելելով ամեն օր համադամ խորտիկներ, շամպանիայ գինի, կամենում է յանդգնաբար՝ որ հայ ժողովուրդը իրեն տղդասէր նկատէ։ երախտապարտ լինէ։ մինչ դեռ նա չէ կարողանում իր խորին արհամարհանքը ծածկել դէպի այն ժողովուրդը որ տալրում է "նեղ եւ խոնաւ բնակարանների„ մէջ։ արջերի հետ միասին։ Ուսանողութիւնը չէր կարող իր խորին զզուանքը չը յայտնել եւ նա յայտնեց. տպագրեց Մեղուի մէջ տպած Մոսկուայից եւ Փարիզից գրած ուսանողների նամակները։ Պ. Ա. Յովհաննիսեան, որ այդ յարձակումները չէր սպասում, ճարը կտրած սկսեց մխիթարել իրան նրանով, որ ինքն պատիւ է համարում իւր համար՝ երբ իրան դասում են Մորիս—Բլոքի շարքում։ Ի հարկէ ոչ ոք ցանկութիւն չունէր այդ պատիւը նրանից խլելու։ թէ եւ ոչ ոք նրան այդ պատուին էլ չէր արժանացրել. որովհետեւ նրան անուանել էին "Բուրժուայ„ իսկ Մորիս—Բլոքին "Բուրժուա—էկոնոմիստ. եւ միամիտ խմբագիրը ոչ մի զանազանութիւն չէր դտել այդ երկու բառերի մէջ։

# ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

«Տասն ինն երորդ դարը Հայոց եկեղեցականների մէջ բացի Ներսէս Ե. չէ ծնել մի այլ՝ որոյ կեանքը լի լինէր այնքան բազմատեսակ անցքերով, որպէս եղել է Խրիմեանինը»։—Ահա ինչ է ասում պ. Մելիքզադէն, սորանից շատ տարի առաջ, երբ դեռ ոչինչ խօսակցութիւն չկար Խրիմեանի կաթողիկոսութեան մասին (Տե՛ս Մշակ 1873 թ. № 49)։ «Եւ այդ բազմատեսակ անցքերի մէջ, Խրիմեան Հայրիկը միշտ մնացել է մի եւ նոյն՝ բարի քրիստոնեայ, անկեղծ հայրենասէր եւ տոկուն գործող, ամբողջապէս նուիրուած իւր եկեղեցու եւ ազգի շահերին։ Նա սխալուել է երբեմնապէս—բայց երբէք չի արել մի բան՝ խղճմտանքի եւ ճշմարտութեան ընդդէմ»։

Ծանօթանանք այդ առաքինի մարդու կեանքի հետ։

Խրիմեան Հայրիկը բուն Հայաստանցի է. նա ծնուել է Վանի մօտակայ Ալիւր կոչուած գիւղում։ Խրիմեանի տարիքը ճիշտ յայտնի չեն, բայց պէտք է որ նա ծնուած լինի 1824—25 թուականներին—ուրեմն մօտ 60 տարեկան պէտք է լինի, բայց նա այժմ էլ առոյգ է եւ զուարթ ինչպէս մի երիտասարդ։ Նրա մանկութիւնը անցել է Հայաստանում, ուր եւ նա ստացել է իւր սկզբնական ուսումը այնտեղի Լիմ եւ Կտուց անապատներում։ Բայց այդ նեղ եւ սահմանափակ վանական ուսումը չէր կարող բաւականացնել մի եռանդուն, բանաստեղծական բնաւորութեան՝ որը միշտ ձգտում էր դէպի բարին, դէպի կատարեալը։ Այդ կատարեալը այն ժամանակ համարվում էր Տաճկաստանի մայրաքաղաքը—Պոլիսը, ուր եւ ուղեւորուեցաւ երիտասարդ Մկրտիչ Խրիմեանը։ Այդտեղ նա ինքնակրթու-

թեամբ հասել էր զարգացման բարձր աստիճանին եւ արդէն դասատուութիւններ էր անում շատ ընտանիքներում։ Նիւթական միջոցների պակասութիւնը արգելք եղան նրան Եւրոպա գնալու եւ այնտեղ շարունակելու իւր ուսումը։ Միւս կողմանէ, Խրիմեանին հայրենիքը մագնիսի պէս դէպի ինքն էր քաշում։ Խրիմեանն զգում էր՝ որ Պոլսում ինքն իւր տեղը չէ եւ նա վերադարձաւ Հայաստան՝ նրան նուիրելու իւր ոյժերն եւ եռանդը։ Տուն դառնալով՝ երիտասարդ Խրիմեանն իւր եղբօր թախանձանօք ամուսնանում է, որից եւ ունենում է մի զաւակ — աղջիկ։ Արդէն ընտանիքի հայր՝ նա մի ճանապարհորդութիւն է անում Ռուսաստանում։ այցելում է Արարատեան Աշխարհը, Նիրակայ նահանգը, Գողթան գաւառը. տեսնում է Անւոյ աւերակները եւ Հայաստանի փառքերի բեկորները։ Այս ճանապարհորդութեան հետեւանքն էր՝ նրա յօրինած գեղեցիկ բանաստեղծական գրուածքը — «Հրաւիրակ Արարատեան»։ Հնադարեան աւանդները, Հայաստանի սրբավայրերն եւ աւերակները ներշնչել էին նրա գրքին ոյժ եւ գեղեցկութիւն։ Գիրքը տպագրուեցաւ Պոլիս 1850 թուականին եւ բոլորի ուշադրութիւնը գրաւեց երիտասարդ գրողի վրա։ Սորանից յետոյ Խրիմեանը Պոլսոյ ազգայիններին օգնութեամբ կարողացաւ եւ քրիստոնէութեան սրբավայրը՝ Երուսաղէմը այցելել։ Այս ճանապարհորդութեան հետեւանքն էր նրա միւս բանաստեղծական գրուածքը «Հրաւիրակ Աւետեաց Երկրի», որ տպագրուեցաւ 1851 թուականին։ Այս երկու չափաբերական շարադրութիւնները Խրիմեանի գրականական եւ բանաստեղծական հանճարը միանգամայն հաստատեցին։ Առաջին գրուածքին ոգեւորել էին հայրենիքի բեկորները, երկրորդին՝ ներշնչել էին քրիստոնէութեան վեհ ու սուրբ յիշատակները։ Խրիմեանի այդ երկու զգացմունքն էլ վառ էին եւ նոքա փայլուն կերպիւ արտայայտութիւն ստացան՝ երբ ճանապարհորդական տպաւորութիւնները նրան ոգեւորութիւն եւ ներշնչումն տուին։ Իւր այդ իզձը կատարելուց յետոյ՝ Խրիմեան Հայրիկը նուիրում է իրեն դպրոցական գործին։ Նա ուղեւորվում է Կիլիկիա եւ այնտեղ

Սոյ վանքի մէջ դպրոց է բաց անում: Բայց չկարողանալով տանել Սոյ Կիրակոս կաթողիկոսի վարմունքը, վերադառնում է Պոլիս—տոկուն ցանկութեամբ շարունակել ուսումնարանական գործը: Պոլսում նա Խաս գիւղի օրիորդաց դպրոցն է մտնում ուսուցչութեան: Եւ հէնց այդ միջոցներին, մի բրօշիւր է հրատարակում Հռոմայ Պապի կղերական եւ փառամոլ ընթացքի ընդդէմ: Խրիմեան Հայրիկը բուն քրիստոնեայ է եւ ի հարկէ նրա սիրտը խոցոտվում էր, երբ տեսնում էր որ Արեւմտեան եկեղեցու գլուխը՝ ներկայացուցիչը՝ թողած քրիստոնէական խոհեմ, միամիտ եւ եղբայրասէր ընթացքը, ընկել էր նիւթական շահերի եւ քաղաքական գերիշխանութեան ետեւից: Եզուիտներն ամեն տեղ տարածում էին պապականութիւնը եւ նեղացնում էին Արեւելեան եկեղեցիները. պապականութիւնը մոռանալ էր տալիս եկեղեցու հետ միասին եւ ազգայնութիւնը: Խրիմեան Հայրիկի այդ եռանդուն գրուածքը մի հզօր բողոք էր պապականութեան այդ միապետական ինտրիգների ընդդէմ:

Բայց հէնց մի առ ժամանակ հանգիստ է առնում Հայրիկը Պոլսում թէ ոչ, նորից զգացմունքը խօսում է նրա մէջ: Հայրենիքի ձայնը նորից հնչում է նրա սրտի մէջ քաղցրաձայն քնարի պէս—նրան նորից իւր մօտ հրաւիրելով: Խրիմեանը նորից լսում է իւր սրտի ձայնին եւ կրկին վերադառնում է հայրենիք: Նորա կինը եւ զաւակը արդէն վախճանուած էին, եւ ինքը մենակ էր մնացած: Հայրենասիրական եւ քրիստոնէական զգացմունքը նրան վճռել տուին ամբողջապէս նուիրուել հայ եկեղեցուն եւ ժողովրդին. եւ Խրիմեան Հայրիկը 1854 թուի փետրվարի 14-ին, վարդապետ ձեռնադրուեցաւ: Խրիմեանը Քրիստոսի բուն աշակերտ լինելով, ի հարկէ չէր լռում, այլ բարձրաձայն քարոզում էր Աւետարանի ճշմարտութիւնները, որ իւր շուրջը շատ քիչ իրագործուած էր տեսնում: Քրիստոսին—նրա սիրոյ եւ եղբայրութեան քարոզների համար, մարդիկ ի խաչ բարձրացրին, նրա աշակերտներին չարչարեցին ու հալածեցին:—Խրիմեանը՝

ինչպէս Քրիստոսի ճշմարիտ աշակերտ, ինչպէս Նրա խօսքերի անկեղծ եւ հաւատացող քարոզիչ—ի հարկէ նմանապէս հալածանքներ կրեց։ Նրան հալածեցին իւր հայրենիքից եւ նա նորից դիմեց Պոլիս՝ ուր աւելի շատ կային զարգացած մարդիկ, եւ ուր աւելի լաւ կարող էր գնահատուել Խրիմեանի պէս մի վեհ անձնաւորութիւն։ Այս տեղ նա Իսկիւտարու Ս. Խաչ եկեղեցու քարոզիչը դառաւ։ Բայց Խրիմեանի գործունեայ բնաւորութիւնը չէր կարողանում դորանով միայն բաւականանալ եւ նա 1855 թուականին ձեռնարկում է Պոլսում «Բիւզանդիոնի Արծիւ» թերթը հրատարակելու։ Այժմ նրա դրութիւնը բաւականին հաստատ էր եւ նա սիրելի էր ամենին։ Նա կարող էր հանգստութեամբ շարունակել իւր քարոզչութեան պաշտօնը եւ գրականական գործերը, բայց մագնիսն էլի քաշեց նրան։ Հայրենիքի սէրն էլի խօսեց նրա մէջ եւ նա էլի լսեց այդ սուրբ ձայնին, թողեց Պոլիսը եւ դիմեց դէպի հայրենիք։ Ահա՛ ինչով է մեզ համար թանգ Խր. Հայրիկը։—Իւր անարատ հայրենասիրութեամբ, քրիստոնէական անձնամոռացութեամբ, սրտագին զգացմունքով... բարի... հայրենասէր... անկեղծ... անկեղծ... անկեղծ... մի թշուառ առաքինութիւն, որ մեր ներկայ նենգաւոր եւ խաբեբայ հասարակութեան աչքում ոչի՞նչ գին, ոչի՞նչ նշանակութիւն չունի։ 1857 թուին, Խրիմեան Հայրիկը ստանալով Յակոբ Պատրիարքից կոնդակ եւ Բարձր Դռնից հրովարտակ՝ Վարագայ Վանքի վանահայր է նշանակվում, եւ տպարանն, «Արծիւը» այնտեղ է տեղափոխում։ «Բիւզանդիոնի Արծիւը» դառնում է «Վասպուրական Արծիւ»։ Հայրիկն վանքում «Ժառանգաւորաց» գիշերօթիկ դպրոց է հաստատում։ «Առաջին տնգամն է, ասում է պ. Մելիքզադէ, որ մի հայոց վանքում աշակերտներն սկսան սովորել կրօնագիտութեան հետ զանազան լեզուներ եւ գիտութիւններ, որպիսի են՝ բնական պատմութիւն, աշխարհագրութիւն, ազգային պատմութիւն եւ այլն»։ Բայց Խրիմեան Հայրիկին էլի սկսում են հալածել. ի՞նչու։—Վարագայ Վանքը բաւականին եկամուտներ ունէր։ Մինչեւ այժմ այդ եկամուտները բոլորն էլ Վա-

նայ ամիրաների եւ էֆէնդիների ջիբերն էր մտնում, այժմ այդ եկամուտները յատկացուել էին դպրոցին։ «Կլանողները» այս պատճառով սատանիկ թշնամացել էին Հայրիկի հետ եւ մինչեւ անգամ ուզում էին նրան սպանել, եւ այդ նպատակին հասնելու համար՝ աւազակներ էին վարձել։

«Մի անգամ՝ պատմում է պ. Մելիքզադէ՝ Խրիմեան Հայրիկը Վան քաղաքից ոտքով Վարագ էր գնում՝ երբ ճանապարհին հանդիպում է նրան մի քուրդ։ Զարագործի դէմքը գունատվում է՝ նրա ձեռքերը սկսում են դողալ»։

—Բարեկամ՝ ինչո՞ւ շփոթեցար դու՝ հարցնում է «Հայրիկ»։

—Ես ուզում էի քեզ սպանել՝ պատասխանում է քուրդը։

—Ապա՝ ինչո՞ւ չսպանեցիր՝ անխռով կերպով շարունակում է Խրիմեան իւր խօսքը։

—Աստուած չթողեց՝ ասում է քուրդը և ընկնում է նրա ոտքերը ներողութիւն խնդրելու։

«Այստեղ երեւում է Խրիմեանի ընաւորութեան բոլոր վեհութիւնն՝ որ նա այդ դէպքի առիթով ոչ միայն յանդիմանութիւն չի անում իւր թշնամիներին՝ այլ իւր բարեկամներին անգամ անփոյթ է լինում յայտնելու»։

Այս դէպքը մի եւ նոյն ժամանակը ցոյց է տալիս՝ թէ ինչքան պատկառելի եւ աղդու է Հայրիկի դէմքը։

Այնու ամենայնիւ Ժառանգաւորաց դպրոցի եւ ամնագրի նիւթական միջոցները սուղ էին՝ ուստի Հայրիկը 1860 թուականին (նոյեմբերին) գալիս է Ռուսաստան եւ ուղղակի գիմում է Էջմիածնայ Մատթէոս կաթողիկոսին եւ նրանից կոնդակ է ստանում Կովկասեցի հայերից Ժառանգաւորաց դպրոցի անունով նուիրատուութիւններ ժողովելու։ Գալով Թիֆլիս՝ նա սկսում է գեղեցիկ քարոզներ կարդալ՝ մխիթարել ժողովուրդը՝ յիշեցնել նրան իւր պարտաւորութիւնները դէպի եկեղեցին եւ ազգը՝ քարոզել սէր դէպի հայրենիք եւ դէպի համեստ աշխատաւորի կեանքը։ Խրիմեան Հայրիկը բուն քրիստոնէական պարզութիւն սիրող մի անձնաւորութիւն է եւ իւր քարոզների մէջ շատ անգամ խօսում էր եւ նախատում փառասիրութեամբ մոլորուածներին։ Նրա քարոզները միշտ մեծ տպաւորութիւն էին անում ժողովրդի վրայ։ Այսպիսի պարզ քրիստոնէութիւն յիշեցնող քարոզները ի հարկէ դուր չէին գալիս այն

ժամանակուայ մեծամիտ եւ գոռոզ Հայ-բիւրոկրատներին, որոնք մի մեծ համարում ունէին իրենց պաշտօնի եւ դրութեան վրայ։ Դոքա լսած լինելով Հայրիկի մեծահամբաւ անունը, թէեւ սկզբում սիրով ընդունեցին նրան՝ բայց վերջը տեսնելով որ նորա քարոզածը միանգամայն ընդդէմ է իրենց փառամոլ գործքերին—սառեցան դէպի նա։ Իսկ ժողովուրդը... նա ի հարկէ ամէն օր Հայրիկի քարոզից ուրախ եւ մխիթարուած էր տուն դառնում։ Հայրիկը միանգամայն գրաւեց Թիֆլիսի ժողովրդի սէրը։ Հայ-բիւրոկրատները սկսել էին լուրեր տարածել, իբր թէ Կառավարութեանը դուր չէին գալիս Խրիմեանի քարոզները։ Մինչեւ այժմ էլ ժողովրդի մէջ դեռ շատերը կարծում են՝ թէ Կառավարութիւնն է եղել Հայրիկի Ռուսաստանից գնալու պատճառը. բայց դա սխալ է։ Թիֆլիսից յետոյ, նա շրջել է Կովկասի շատ քաղաքներ՝ ամեն տեղ մխիթարելով ժողովուրդը. նա եղել է Շուշի, Գանձակ, Երեւան եւ նրան ոչ մի տեղ ոչ ոք մի բան ասող չի եղել։ Ճշմարիտ է, այդ ժամանակը Կովկասում բիւրոկրատիքական ձգտումները շատ սաստիկ էին։ Երկրի փոխարքան իշխան Վ.օրոնցովը, որ այնքան սիրում էր Կովկասը եւ Կովկասեցիներին, Հայրիկի Ռուսաստան գնալուց դեռ 6 տարի առաջ—1854 թուականին, պատերազմը սկսուելուն պէս՝ թողել էր Կովկասը։ Պատերազմի ժամանակ երկրի կառավարութիւնը Մուրավիովի ձեռին էր։ Սորանից յետոյ երկրի փոխարքայ էր նշանակուած Իշ. Բարեատինսկի։ Ահա հէնց այդ ժամանակ էր քարոզում Խրիմեան Հայրիկը։ Նորա պարզ քրիստոնէական քարոզների մէջ ի հարկէ արտայայտվում էին այնպիսի իդեալական ձգտումներ, որոնք տեղական շրջանների բիւրակրատիկական ոգւոյն չէին համապատասխանում։ Խրիմեանի քարոզներից բարձր Կառավարութիւնը անբաւական լինելու տեղիք եւ պատճառ չունէր, եւ չը գիտենք ինչպէս է այդ սխալ կարծիքը մինչեւ այժմ կենդանի մնացել հասարակութեան յիշողութեան մէջ։ Ինչպէս յայտնի է 60—ական թուերի սկզբում, ներքին Ռուսաստանի կառավարութիւնը ղեկավարող անձինք—ազատամիտ, ժողովրդական մարդիկ էին. նոքա միայն

ուրախանալ կարող էին Խրիմեանի ժողովրդասէր, աւետարանական քարոզների վրա։ Բայց հայն միշտ իւր շուաքիցն էլ է վախենում եւ միշտ իւր թշնամիները դրսումն են պատռում, այն ինչ նոքա ըստ մեծի մասին տանն է գտնվում։ Ընդհակառակն, եթէ Խրիմեան Հայրիկն մի մեծ սխալ է գործել այդ ժամանակներին՝ դա այն է եղել որ նա չէ գնացել Մոսկվա ու Պետերբուրգ։ Մենք դա ահագին սխալ ենք համարում... Ռուսաստանը, 60-ական թուականների Ռուսաստանը, եթէ ճանաչէր Խրիմեանին, Տաճկա-հայոց խնդիրը ուրիշ ընթացք կստանար։ Բայց այդ սխալը միայն Խրիմեան Հայրիկի սխալը չէր. դա ամբողջ մի ազգի սխալ էր։ Միայն վերջին պատերազմից յետոյ պարզուեցաւ, թէ ինչքան անհիմն եւ անտանելի է եղել հայերի այդ երկիւղը եւ կասկածը Ռուսաստանից եւ Խրիմեան Հայրիկը՝ որը հայ ժողովրդի, կարելի է ասել—բազկերակն էր՝ այժմ Ռուսաստանի վրա նայում է համակրանոք եւ յուսով։ Իսկ 60-ական թուականներին՝ Խրիմեանը եւ առ հասարակ Տաճկաստանի հայերը Ռուսաստանի մասին եւրոպական տեսակէտ ունէին։ Նոքա շփոթում էին յետադէմ ռուսացնողների կուսակցութիւնը ամբողջ Ռուսաստանի եւ ռուս ժողովրդի հետ։ Մանաւանդ Տաճկա-Հայաստանցիներին զայրացրել էր այն լուրը՝ որ իբր թէ Ռուսաստանը կամենում է հայերին կրօնափոխ դարձուցանել եւ օրտոդոքս շինել։ Շատ չհեռանանք մեր նիւթից, բայց յոյս ունենք՝ որ ընթերցողն տեսնում է թէ ինչքան անտեղի է այն զրպարտութիւնը՝ իբր թէ Կառավարութիւնն է Հայրիկին այս տեղից հեռացրել։

Ուրեմն ի՞նչն էր Խրիմեանի Ռուսաստանի նահմանը շուտափոյթ թողնելու պատճառը։ Պարզենք։ Խրիմեանին Ռուսաստանից հեռացնողը ինքը Մատթէոս Կաթողիկոսն էր։ Հայրիկը այնպիսի մի հոգեւորական չէր, որ լռութեամբ անցուցանէր իւր դասի պակասութիւնները։ Պատմում են՝ որ Հայրիկը Մատթէոսի կաթողիկոսութեան ժամանակ, խօսելով հոգեւորական դասի պակասութիւնների մասին՝ մօտաւորապէս հետեւեալ մի քանի խօսքերն է ա-

սել։—Դա՛, Ժողովուրդ, չգիտես թէ ինչ պակասութիւններ կան ծածկուած այս փարաջայի տակը. բայց է անում փարաջան եւ կարգում է—կեղծաւորութիւն, արծաթասիրութիւն, սիմոնականութիւն, զօշաքաղութիւն, սուտ խօսել, չարամտութիւն եւ այլն,—այս պակասութիւնները մեր ամենիս մէջ էլ կայ, սկսած փոքրից մինչեւ ամենամեծը—մինչեւ ամենայն Հայոց Կաթողիկոսը։—Այսպիսի ճշմարտախօս քարոզները ի հարկէ դուր չէին գալիս Մատթէոս Կաթողիկոսին էլ։ Արդեօք Հայրիկի փառքի նախանձից դրդուած, թէ երկիւղից եւ փոքրոգութիւնից՝ որ հետեւանք կարող էր լինել ազիտութեան եւ Ռուսաստանի քաղաքական գործերի հետ անծանօթ լինելուն՝ Մատթէոս Կաթողիկոսն հրամայեց Խրիմեանին շուտափոյթ թողնել Ռուսաստանը։ Հաւանական է, որ այդտեղ աւելի մեծ դեր խաղացած լինին Մատթէոսի անձնական զգացումները. թէ չէ ինչու պէտք էր նա այդպէս անվայել կերպիւ վիրաւորէր Խրիմեանին՝ որ մինչեւ անգամ թոյլ չէր տուել նրան էջմիածնայ Վանքը մնալու եւ Վանպուրակեան Արծիւը ստիպուած է եղել միայն էջմիածնայ պատերից հեռանալով՝ թողնել Վանքը եւ Ռուսաստանը։ Վայելել է էջմիածնայ Վանքին, գոնէ այժմ քաւել իւր հին մեղքերը եւ լայն քանալ իւր դռները այդ առաքինի եւ հայրենասէր հոգեւորականի առաջ... Խրիմեանը Ռուսաստան էր եկել իւր կեանքի ամենապայծառ եւ ոյժերի ամենաառոյգ ժամանակը. նրա քարոզները հատու սրի պէս՝ կարուկ էին, լուսոյ պէս՝ պայծառ ու գարնան արեգակի պէս՝ ջերմ եւ կենսատու։ Այժմ Խրիմեան Հայրիկը աւելի փորձառու, աւելի շրջանկատ է դառել. նրա լեզուն չի կորցրել իւր առաջուայ դիւթիչ եւ համոզիչ զօրութիւնը, բայց նա աւելի է ենթարկուել մտածողականութեան եւ հեռատես ու փորձառու շրջանկատութեան։ Նրա ճանաչողները պատմում են, որ նրա վերայ մանաւանդ մեծ ազդեցութիւն է արել իւր 4 տարուայ պատրիարքական կեանքը եւ վերջի ժամանակներս Հայկական խնդրի առթիւ Եւրոպա այցելելը։ Բայց առաջ չվազենք։

Ռուսաստանից Հայրիկը Պարսկաստան է անցնում,

ուր նմանապէս մխիթարում է ժողովուրդը եւ նուիրատուութիւններ է ժողովում յօգուտ Վարագայ ժառանգաւորաց դպրոցի։ Տաճկաստան դառնալով՝ նա ամբողջապէս նուիրվում է իւր գործին։ Կանոնաւորում է դպրոցը եւ նորից սկսում է «Վասպուրական Արծուի» հրատարակութիւնը, որն այժմ աւելի նիւթառատ էր եւ ճոխ եւ աւելի մեծ ազդեցութիւն ունէր եւ տարածուած էր՝ թէ Ռուսաստանում եւ թէ Տաճկաստանում։ Այն ժամանակ սահմանադրութեան խնդիր կար եւ Վասպուրական Արծիւը միշտ եղել է սահմանադրական եւ ապակենդրոնացման սկզբունքին ամենաջերմ պաշտպանը։ Բայց մատնութիւն եւ չարամտութիւն ճրբ է պակաս եղել Հայերիս մէջ։ Մի հայ եպիսկոպոս (ի՞նչ մեծ ամօթ) ամբաստանում է Խրիմեանին եւ ահա ի՞նչ է ասում մեր յայտնի գրող պ. Մերենց իւր նորերումն հրատարակած «Կաթողիկոսութիւն եւ Խրիմեան» վերնագրով գեղեցիկ գրուածքի մէջ.—

«Թէև Խրիմեանի համբերութիւնն և խոհեմութիւնը վերջապէս յաղթող եղան այդ մարդուն բանսարկութեանց՝ և նա թողուց գնաց՝ բայց իւր «Արծիւին» թեւերը կտրուեցան և արգելուեցաւ Տէրութեան հրամանաւ»։

Այդ ժամանակ Հայրիկի համբաւն արդէն մեծ էր. նրա աշխատութեանց արդասիքն ամենքն էլ տեսնում էին։ 1862 թուին նա, Ազգային վարչութեան եւ պատրիարքի տնօրէնութեամբ, ընտրվում է առաջնորդ Տարօնայ (Մուշ) եւ Ս. Կարապետայ Վանքի Վանահայր է նշանակվում։ Հայրիկ իւր մամուլը տեղափոխում է Ս. Կարապետայ Վանքը եւ 1862 թուականից իւր աշակերտ Սրուանձտեանցի խմբագրութեամբ սկսում է հրատարակել մի շաբաթաթերթ «Արծուիկ» անուամբ. բարեկարգում է Վանքի դպրոցը եւ կանոնաւորում է նրա եկամտները եւ հէնց այս պատճառաւ նրա հետ այստեղ էլ պատահում է նոյնը՝ ինչ որ պատահել էր առաջ—Վանում։ Մուշի ամիրաները եւ էֆէնդիները սկսում են հալածել նրան։—Յայտնի է՝ որ Մշոյ Սուլթան Ս. Կարապետը քրիստոնեայ հայի համար մի մեծ սրբատեղի է, նրա ուխտաւորներն աւելի են քան նոյն իսկ էջմիածնինը։ Վանքը մեծ եկամտներ ունի, որ

կլանում էին տեղական այդ «ազգային գործիչները», իսկ Խրիմեանը արգելում էր այդ անելու, ուստի Հայրիկին այդ «գործիչները» սրտով ատեցին։ Ահա ինչ է ասում պ. Ծերենց Հայրիկի գործունէութեան այդ շրջանի մասին։

«Եւ աւելի լայն և մեծ ասպարէզ իրեն կրացուէր, բայց ինչ-չափ դժուարութեանց, դարևոր վատ սովորութեանց, մարդկային չարակամութեանց հետ պէտք էր կռուել։ Եւ իւր կենաց վտանգաւ մտաւ այդ պայքարին մէջ։ Ժողովրդական նախապաշարմունք, կղերական խարդախութիւնք, ուխտատեղեաց մէջ շատ տեղ զանազան զեղծմունք, անիրաւ պահանջ՝ մեծ թշնամի մը գտան ի Խրիմեան։ Ռամիկ ժողովուրդը իւր բարեկամ և բարերարը ճանաչեց, բայց շահասէրները՝ ոչ միայն իւր վարկն ոչնչացնելու ջանացին, ոչ միայն իրենց ընութիւն եղած սեղանակապտութեամբ զինք աղտեղել ժպրհեցան, խաչագող և աւետարանագող հռչակելով, այլ նաև յանդգնեցան պաշտօնեայք սեղանին Աստուծոյ վանքին դռները իւրեանց վանահօր և առաջնորդին դէմ փակել և վրան հրացան արձակել։—Եւ ի՞նչու։—Որովհետև այդ Խրիմեան՝ որ չգիտէր գողնալ, յափշտակել, հարստահարել, բռնանալ, չէր թողուր գողնալ, հարստահարել յանուն Քրիստոսի խեղճ աղքատ ժողովուրդը՝ որ Մշոյ դաշտին մէջ հաղար յափշտակութեանց և բռնութեանց մատնուած էին և են մինչև այսօր»։ (Կաթ. և Խրիմեան. երես 17—18)

1868 թուականին Հայրիկը գալիս է Էջմիածին եւ եպիսկոպոս է ձեռնադրվում։

«Եպիսկոպոսութեան աստիճան, որ ամեն վարդապետի փառասիրութեան մեծ փափագն է, ասում է պ. Ծերենց, զինք չի փորձեց. և մի առաքինի և հեռատես սրբազան անձի յորդորանքը զինքը համոզեցին ձրիաբար խնդրելու և ընդունելու այդ աստիճանը»։

Հետեւեալ 1869 թուականին Հայրիկը ընտրվում է Կ. Պոլսոյ Պատրիարք։ Նշանաւոր էր այդ ընտրութիւնն. դա սահմանադրականների կատարեալ յաղթութեան մի ապացոյցն էր։ Բանն այն է՝ որ թէեւ դեռ 1860 թուականին էր ընդունուել ժողովրդի կողմից ազգային սահմանադրութիւնը, այնուամենայնիւ այդ ինն տարուայ ընթացքում, մինչեւ Խրիմեան Հայրիկի ընտրուելը, սահմանադրականները եւ հակասահմանադրականները մի ահեղ եւ վերջին պատերազմի մէջն էին։ Սահմանադրութեան ամենաջերմ պաշտպանի պատրիարք ընտրուիլը սահմանադրա-

կանների կատարեալ յաղթանակին էր... Բայց դու աշխարհիս բաներն տես, ընթերցող, որ Խրիմեանի անկման ժամանակ կաշառուած հրապարակախօսները նրան հակասահմանադրական էին հռչակել... Թշուառ հրապարակախօսներ, խեղճ եւ թշուառ ժողովուրդ՝ որ այդպիսի ակներեւ ստերը կարդում ու նրանց հաւատում էր։ Ի՞նչ էր Խրիմեանի հակասահմանադրականութիւնը՝ այդ մենք փսքը ինչ յետոյ կտեսնենք։

Մեր նպատակից դուրս է Խրիմեան Հայրիկի մանրամասն կենսագրութիւն գրելը,—դա աւելի հմուտ գրչի գործն է։ Խրիմեանի հէնց միայն 4 տարուայ սքանչելի պատրիարքութեան բարեխիղճ պատմութիւնը մի ահագին հատոր կարող է կազմել։ Այստեղ մենք կնշանակենք միայն նրա գործունէութեան մի քանի կէտերը։ Դժուար բոպէ ընդունեց Հայրիկ իւր պաշտօնը. պատրիարքարանի եկամտները քիչ էին՝ ծախքերը շատ, եւ ինքը պարտքերի մէջ խրուած։ Խրիմեան Հայրիկ նախ եւ առաջ աշխատում է այդ պարտքը մի քիչ թեթեւացնել եւ հասնում էլ է իւր նպատակին։ Զարմանալի հակասութիւններ կան աշխարհիս երեսին.—Խրիմեանին շատերը տնտեսագէտ մարդ չեն համարում, բայց նա իւր տնտեսագէտ չլինելովը կարողացաւ ազգային պարտքի մի մասը վճարել։ Պ. Ծերենց շատ լաւ պարզել է իւր բրօշիւրի մէջ, թէ ինչ է ծածկվում մեր «տնտեսագէտների» այն խօսքերի մէջ, թէ «Խրիմեանը տնտեսագէտ չէ»։ Մի «տնտեսագէտ» պարոն Խրիմեանի այդ ոչ-տնտեսագիտութեան հետեւեալ դիպուածն է առաջ բերում։

«Պատմում են, թէ նրա պատրիարքութեան ժամանակ, Հայաստանի կողմերից մէկ աղքատ հայ քահանայ գիմում է Կ. Պոլիս և Խրիմեանից օգնութիւն է խնդրում։ Սրբազանը՝ փող չունենալու պատճառով, իւր միակ նոր փարաջան տալիս է քահանային, իսկ ինքը երկար ժամանակ մնում է հին, մաշուած փարաջայի մէջ»։ «Կաթողիկոսական ընտրելիներ». գրեց Արմենակ Սիւնի. Թիֆլիս. 1884 թ.

Թէ ինչքան ճշմարիտ է այս անեկդոտը—դա դեռ խնդիր է. Խրիմեան պատրիարք լինելով, միթէ երկու փա-

բաջայ էլ չունէր, բայց այս առթիւ այդ «տնտեսագէտ» պարոնը իրեն թոյլ է տալիս Խրիմեանին «Հինաւուրց աշխարհատեաց» անուանել, իսկ մեզ համար՝ սուրբ է Խրիմեանի այս բուն քրիստոնէական վարմունքը. ուրիշ մրտքով աշխարհասէր եւ տնտեսագէտ լինելը—նիւթապաշտութիւն է եւ ազնիւ ու անկեղծ կրօնաւորին անվայել։ Խրիմեանն, ասում են, տնտեսագէտ չէ։ Այո՛, եթէ բուրժուական, եսամոլ աչքով նայենք, նա տնտեսագէտ չէ, որովհետեւ «երբէք իւր միշտ դատարկ քսակը նորա (ազգի) աղքատիկ քսակէն որոշած չէ»։ Տնտեսագիտութեան վրա ամեն մէկն իւր կարծիքն ունի։ Զամբախովները եւ Թախթախեանները ի հարկէ Խրիմեանին տնտեսագէտ չեն անուանիլ—բայց ճշմարիտ, արդար, աւետարանական տնտեսագիտութիւնը հէնց նրանումն է բաղկանում—տալ իւր ընկերին իւր երկու հանդերձից մէկը։ Մենք բոլորս էլ՝ անունով քրիստոնեայ ենք. յանդգնութիւն ունենք՝ մեզ «Հայաստանեայց եկեղեցւոյ շահերին նախանձախնդիր» համարել, «ճշմարտութեան հեզ զինուոր» ձեւանալ, բայց երբ տեսնում ենք մէկին՝ որ իրագործում է կեանքի մէջ այդ քրիստոնէական սկզբունքները—նրան աքացի ենք տալիս, նրա վրան ծաղրում ենք, նրան «աշխարհատեաց» ենք անուանում։ Ո՞հ, կեղծաւոր դատ, կեղծաւոր մարդիկ։

«Խրիմեան դանդաղ էր իւր պատրիարքութեան ժամանակ»։ Իրո՞ք այդպէս է։

«Երբ 800 տարիներէ ի վեր ոչ ոք չէր համարձակիլ ճիկ հանել, ակնարկութիւն մը անգամ ընել Հայաստանի հայոց հարստահարութեանց համար՝ Խրիմեան պատրիարք ինք առաջին մի մանաժողով կհաստատէր, հարստահարութեանց խնդիր կհարուցանէր քննելու համար, ճար ճարակ ընելու համար վիճակին և տեղեկագիր մը տպել կուտար և Օսմանեան Դրան կը ներկայացնէր։ Այդ պատրիարքը՝ որ իւր անձին դէմ նախատանաց անզգայ էր, երբ ազգին վնասակար բան նկատէր՝ անզսպելի էր»։ (Ծեր. երես 20—21)

Հապա ի՞նչու անկաւ Խրիմեան։ Անկաւ այն պատճառաւ՝ որ բարոյական մարդ էր։ Մի մարդ՝ որ բարձր պաշտօն է յանձն առնում եւ խոչընդոտների հանդիպելով չի կարողանում իւր նպատակին հասնել, պէտք

է թողնէ իւր պաշտօնը։ Դլադստոններն եւ Գամբետաներն են անկել այդ եղանակով եւ այդպիսի հրաժարականը միայն պատիւ կարող է բերել հրաժարուողներին. դա ապացոյց է նոցա իրենց համոզմունքի վրա հաստատ լինելուն։ Դժբաղդաբար, մեզանում այժմ քչերն են այդպէս վարվում, այժմ ընդհակառակն ստրկութիւնը եւ համոզմունքներից զուրկ լինելն է քաղաքագիտութիւն եւ ազնուութիւն համարվում... Իսկ Խրիմեանի խոչընդոտները շատ էին, նոքա թէ ներքին էին եւ թէ արտաքին։ Խրիմեանի անկման գլխաւոր աշխատողներից մէկն էլ ինքը—ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ IV էր. Գէորգ IV գոնէ իւր գահի պատիւը չպահպանեց եւ ստորացաւ այնքան, որ ոչինչ միջոց չէր խնայում իւր նպատակին հասնելու համար։

«Եւ Էջմիածնայ անպաշտօն նուիրակը Պետրոս Եպիսկոպոս իւր աշխատութեանց վրայ խօսելով՝ «Խրիմեանի անկումը 22,000 բուբլի եղաւ մեզի», կըսէր։ Պէ՞տք է բացատրել այս խօսքը՝ թէ Սսոյ Եպիսկոպոս մը (Ներսէս Վարժապետեան) պատրիարքութեան արժանի անձ մը պատրաստելէն վերջ, ինչ ասոիճանի կմասնակցէր զԽրիմեանը տապալելու համար. պէ՞տք է բացատրել՝ թէ այս 22,000 ռուբլիներն օրագրութեան և փողոցի սրիկաներն գրգռելու և կաշառելու համար էին»։ (Ծեր. երես 22)

Ընթերցողը տեսնում է՝ որ քաղաքագիտութիւնից զուրկ լինելը կամ դանդաղութիւնը չեն եղել Խրիմեանի պատրիարքութիւնից հեռանալու պատճառը։ Պօլսոյ կաշառուած թերթերն Խրիմեանին տապալելու համար՝ նրան հակասահմանադրական էին հռչակել։ Ահա ինչպէս է պարզում այդ ժամանակուայ գործերի դրութիւնը պ. Մելիքզադէ։

«Խրիմեանը՝ հիմնուելով իւր չորս տարուայ պատրիարքութեան փորձերի վրա՝ տեսնում է՝ որ սահմանադրութեան արդի կանոնադրութիւնները և նոցա վարչական ձևի գործադրութիւնը անգոհացուցիչ է ազգի այժմեան պիտոյքներին՝ և պահանջում է նորից վերաքննել սահմանադրութիւնը և լրացնել նորա թերութիւնքը։ Իւր մի այդպիսի առաջարկութիւնը ապացուցանելու համար՝ նա բերում է ժգ. յօդուածով զանազան խնդիրներ՝ որոնց սահմանադրութիւնը իւր տասն և երեք տարուայ ընթացքում՝ չէ կարողացել որ և է հոգ տանել։ Եւ դորա պատճառը Խրիմեանը

գտնում է նոյն իսկ սահմանադրութեան թերութիւնների մէջ։»

Մենք այստեղ առաջ ենք բերում այդ յօդուածների միայն մի քանի գլխաւորները։

«Ա. Ազգային Վարչութիւնն իրապէս կենդրոնական և հանրային դրութեան վերածել և Կ. Պոլսոյ համար առանձին տեղական վարչութիւն մը կազմել»։

«Զ. Եկեղեցականաց ներկայ անկերպարան վիճակն և ընթացքը կերպաւորել և կանոնաւորել համաձայն Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ նախնի ոգւոյն, օրինաց և ուղղութեան»։

«Է. Առաջնորդական պաշտօնավարութեան և համարատուութեան օրինաւոր և անխուսափելի եղանակ սահմանել»։

«Ը. Ազգային վանօրէից և եկեղեցեաց կալուածներն ու եկամուտներն ապահովել և ազգի բարոյական օգտին ծառայեցնել»։

«Թ. Հայաստանեայց եկեղեցւոյ անկախութիւն հաստատուն պահելու և քրիստոնէական ճշմարիտ գիտութեան լոյսն ազգին մէջ ծաւալելու համար՝ ամեն կարևոր միջոցները ձեռք առնել և ջանալ՝ ազգին մէջ պատահած կրօնափոխութեան առաջն առնուլ»։

«ԺԱ. Ազգային դաստիարակութեան համար դրամագլուխ հաստատել»։

ԺԲ. Նախակրթական ուսումն ընդհանրացնելու դիւրութիւններ գտնել և քանի մի կրօնական բարձր ուսումնարաններ բանալ»։

«ԺԳ. Հայոց ազգային ընտանեկան կեանքն՝ այն է ամուսնական և բարոյական կապերն՝ ամրապնդել՝ զեղծումները բառնալ՝ պանդխտութեան առաջն առնուլ և ազգը մի հանրական ընտանիք կազմելու դրութեան վերածել։ Ներքին և արտաքին հարստահարութիւնները բառնալու համար՝ բարեխնամ Տէրութիւնէն աւելի զօրաւոր միջոցներ խնդրել՝ գաղթականութիւնը արգելուլ՝ ազգային անհատական իրաւունքները պաշտպանել՝ որով և ազգի ամրողջութիւնն ապահովել» (1873 թ. Մշակ. № 40)։

Ո՛ւմ մտքով կարող էր անցնել այսպիսի մի լայն պրոգրամմայով գործել ցանկացող մարդուն հակասահմանադրական անուանել՝ միայն այն պատճառաւ՝ որ սա կամեցել է սահմանադրութեան մի քանի թերութիւններն լրացնել, կամեցել է նրան աւելի սպակենդրոնական, աւելի ժողովրդական կերպարանք տալ, որ Պոլսոյ սեղանաւորները եւ էֆէնդիները չլինեն ամբողջ հայութեան վիճակի կարգադրողը։ Բայց ինչ ասես չի կարող անել կաշառքը մի սորուկ եւ անբարոյական հասարակութեան

մէջ։ Թէ ինչ խաւար սիրող մարդիկ էին Հայրիկի թշնամիները, լաւ երեւում է, ի թիւս այլոց, հէնց նորանից, որ նոքա ցանկանում էին որ Խրիմեանի հրաժարման խնդիրը քննուի Ազգային ընդհանուր ժողովի փակ նիստում, այն ինչ Խրիմեանի կողմնակիցները պահանջում են եղել՝ որ այդ նիստը բաց լինի։ Ճշմարիտը եւ գեղեցիկը երբէք լուսից չեն փախչում։

Պ. Երիցեան՝ որ Փորձի մէջ գեղեցիկ կերպով քննել է Տաճկաստանի Սահմանադրութեան պատմութիւնը, ահա, ի թիւս այլոց ինչ է ասում Խրիմեանի հրաժարման մասին.

«Պէտք է ասել՝ որ Խրիմեան Հայրիկ իւր մօտ 4 տարուայ պատրիարքութեան մէջ՝ որքան սիրելի էր հասարակ ժողովրդեան՝ այնքան չկարողացաւ շահել և գգուել այն մի քանի հոգևորական և աշխարհական անձանց՝ որոնք ազգային գործերի մէջ մտած էին իրանց անձնական շահերը առաջ տանելու համար։ (Ի՞նչպէս էք կարծում՝ պ. Երիցեան՝ ձեր պաշտպանած նախկին Սսոյ եպիսկոպոս Ներսէսն էլ դորանց թւում էր՝ թէ ոչ։) Հայրիկի պատրիարքական օրից սկսած՝ նորա դէմ մի կուսակցութիւն երևեցաւ՝ որ վերջի ժամանակներում Գալաթիայի Օլախ անունը ժառանգեց։ Այդ կուսակցութիւնը Խրիմեանին տապալելու համար՝ ոչինչ միջոց չէր զլանում՝ մինչև որ կարողացաւ իսկ» *։

Խրիմեանը իւր վերջնական հրաժարականը տուաւ 1873 թ. հոկտեմբերի 3-ին։ Պ. Ծերենց հետեւեալ կերպիւ է խօսում այդ հրաժարականի մասին.

«Պէտք է՝ որ Խրիմեան աթոռէն իջնայ. չորս տարի շատ և երկար ժամանակ էր և ամեն անզգամութիւնք պէտք էր դաշնակցէին այդ մեծ գործն 'իզլուխ հանելու համար՝ բայց ժողովուրդը չվայրացնելու և չդայթակղեցնելու համար՝ արժանաւոր յաջորդ պէտք էր գտնել և մէկ երիտասարդ մը միայն կար ու կ'երևար՝ և այդ նաև Սսոյ թեմի Եպիսկոպոս էր Ներսէս Վարժապետեան՝ և պատրիարք չէր կարող լինիլ. ուստի ամեն ջանք ու հրապոյր 'իգործ դրուեցաւ զինք տանելու համար Էջմիածին և նոյն միաբանութեան անդամ ընելու (յարգելի պ. Ծերենց Ներսէս Սրբազանին՝ կարծես թէ ուզում է միամիտ Աղաւնի ձևացնել. միթէ Ներսէս Սրբազանը չգիտէր՝ թէ երբ և ինչ նպատակով է Էջմիածին

*) Տաճկաստանի հայոց իրաւունքները և սահմանադրութիւնը. «Փորձ». 1877 թ. գիրք IV։

գնում՝)։ Եւ երբ այս յաջողեցաւ, հասաւ յ'Էջմիածնայ արեւմուտք Եպիսկոպոս մը՝ իւր բոյնը դրաւ Պրուսա և սկսաւ զարմանալի և խաւար ղրդուութիւն մը ընդդէմ Խրիմեանի։ Դալաթիոյ Օճախը, մամուլի անարգ ու շահասէր ներկայացուցիչը, քանի մը ամիրաներու ղածածք, Ռուբինեան Ամբրոսիոսի և նորա նման քանի մը եկեղեցականաց հետ քանի մը երեսփոխանք՝ սկսան ձայն բարձրացնել թէ ժողովուրդը գոհ չէ վարչութենէն և Պատրիարքէն։ Եղած գանգատներն այնչափ յիմար և այնչափ անհիմն էին՝ որ և ոչ յիշողութեան և յիշատակի արժանի են։

Գեղեցիկ եւ մեծ համակրանքը էր խօսում Հայրիկի մասին՝ իւր հրաժարման առթիւ այն ժամանակուայ աղատամիտ մամուլը։ Մշակի 1873 թ. 43 №-ի մէջ, բերուած է Մասիսի մի համակրական առաջնորդողը։ Բայց առանց այն էլ չսիրից դուրս շատ է երկարում մեր յօդուածը, ուստի ստիպուած ենք այդ յօդուածն այստեղ չբերել։

Խրիմեան, հանգիստ խղճմտանքով թողեց իւր պատրիարքութիւնը, թէեւ ժողովուրդը եւ հասարակութեան լուսաւոր դասն աղաչում էին նրան պատրիարք մնալու։ Պատրիարքութիւնը թողնելուց յետոյ, Խրիմեան Հայրիկը ընակվում է Պոլսում եւ նուիրվում է գլխաւորապէս քարոզչութեան, դասատուութեան եւ գրականական գործունէութեան մինչեւ վերջին պատերազմի ժամանակները։ Այդ ժամանակամիջոցին դուրս է գալիս նրա «Մարգարիտ Աբքայութեան երկնից» (1876 թ.), որ մի գեղեցիկ փոքրիկ կրօնական գրքոյկ է։ Նոյն թուին լոյս է տեսնում նրա «Դրախտի ընտանիք», որը նրա գրուածներից ամենից հասունն եւ մտածածն կարող է համարուիլ եւ վերաբերվում է քրիստոնէական ընդանիքի կազմակերպութեան խնդրին։ Այս երկու գրքերը, ինչպէս եւ Վասպուրական Արծիւն, գրուած են աշխարհաբար լեզուով, այն ինչ «Հրաւիրակներ»-ը մաքուր, գեղեցիկ գրաբառով։ Հայրիկն՝ ինչ ասել կուզէ՝ որ հմուտ հայկաբան լինելով, հիմնաւորապէս ծանօթ է երկու բարբառներին էլ, բայց ներկայումս նա իւր գրութեանց մէջ աւելի աշխարհաբառն է գերադասում։

Խրիմեանի ամեն մի տողի, ամեն մի խօսքի մէջ երեւում

է նրա քրիստոնէական ներողամիտ լայն եւ ազատ ոգին եւ մարդասիրական զգացմունքը։ Ահա ինչ է ասում օրին. նա իւր «Դրախտի ընդանիքի» մէջ, խօսելով ամուսնական կապերի վրա. նոյնպէս յաւում ենք՝ որ ստիպուած ենք այսպէս կրճատուած հատուկտոր առաջ բերել Հայրիկի գեղեցիկ խօսքերը։

«Կին ամուսնոյն ազատ ընկեր և հաւասար լծակիցն է ամենայն իրաւամբ։ Ուստի, կին աղախին չէ, այլ տանտիկին և թագուհի, թէպէտ և այր թագաւոր լինի, իշխան լինի, տէր և գլուխ լինի, բնաւ իրաւունք չունի և կարող չէ այնպէս իշխել, ինչպէս կ'իշխեն աշխարհիս այլ և այլ տիրող գլուխներն իշխանական գաւազանով, վասն զի ընտանեկան կեանքին և վարչութեան մէջ իշխանական սուր և գաւազան չկայ, այլ միայն սէր, խնամք և միութիւն։»

Խրիմեան իւր պատրիարքութեան ժամանակ առիթ ունեցաւ 'ի մօտոյ ծանօթանալ հայ ընտանիքի մէջ պատահող զեղծմանց եւ թուլութեանց հետ եւ ահա այդ առթիւ էր գրուած իւր «Դրախտի ընտանիք»։ Գրքի մի ուրիշ տեղը նա ասում է.—

«Որչափ անբնական է և մեծ խիղճ, երբ բռնութիւն, կամ հրապոյր, և կամ թէ շահ կը ջանան իրարու հետ պատուաստել երկու ամուսիններ, որ մին գալար նորատունկ է և միւսն, հինաբուց հաստացեալ ծառ, որ աշնան մատ է, իւր տերևներ գեղնած պիտի թոթափեն, բունը փտած է և ստեղունք գօսանալ սկսած են»։

Այսպիսի խորհրդածութիւնները անելու տեղիք են տուել 'ի հարկէ կեանքի զիպուածները, որոնց ականատես էր եղած Հայրիկ իւր պատրիարքութեան եւ առաջնորդութեան ժամանակները։

1876 թուին Վանում հրդեհ է պատահում, Վանայ մեծ մասը մոխիր է դառնում, քաղաքը ահագին վնասներ է կրում; շատերը խեղճանում են եւ աղքատանում։ Խրիմեան Հայրիկ՝ որ մի զարմանալի զգայուն սրտի տէր է, 'ի հարկէ չէր կարող այս տխուր արկածը տեսնելով լռութեամբ անցկենալ մօտովն։ Եւ ահա նա հրատարակում է իւր «Վանգոյժ»-ը։ Դա մի կաթիլ ջուր էր՝ որ Հայրիկ սրսկում է իւր այրուած բոցավառ Հայրենիքի վրայ։

«ՎամոՀ մամոՀ, ասում է Հայրիկը, որ քան զ'արծիւ արագաթև ես, ա՛ռ և տար մորմնջող սրտիս ցաւն ու հառաչանք և աչքիս աղեկտուր կաթիլները. տա՛ր, ցո՞ղէ այն իմ այրած Հայրենեաց փո-

շնացեալ աւերակներուն վերա, ցո՞ղէ վառուած և մրկած սև սիրտերուն վերայ»

Հայրիկը միսիթարում է ժողովուրդը, եւ խրատում է՝ չյուսահատուիլ, այլ նորից գործի կենալ։

«Կոխեցէ՛ք և անցէք, ո՛վ աշխատաւոր եղբնք, մի՛ թափառիք ու հեռանաք ձեր աւերակ ագարակէն, ելէ՛ք դարձեալ ղոյգ-ղոյգ լծուեցէք. ձեր սամոտիք պինդ կապեցէք ընկերական սերով. հեծելով, փնչալով փորեցէ՛ք ու պատռեցէք այդ տառապանաց ակոսն. մշակներ, գոգնոց կապեցէք, լի յուսով ցանեցէք ձեր վաստակասէր քրտանց սերմն. պահ մի եւս սպասեցէք, զի ձմեռ է, ձիւն ու սառնամանիք ծածկել են աշխարհ»։

«Գարուն մօտ է, Հայոց աշխարհ, և պիտի դայ ծիծեռնակ բեզ աւետիս տայ. . . . . և այլն»։

Էլի տոկպուած ենք ընդհատելու։ Եթէ առաջ բերելու լինինք, պէտք է Հայրիկի ամբողջ գրքերը նորից հրատարակենք. . . . . : Ընթերցողը տեսնում է՝ թէ ինչպէս սրտագին յուսատու եւ միսիթարական է Հայրիկի ամեն մի տողը, ամեն մի խօսքը։

Հասաւ վերջին Ռուս-Թուրքական պատերազմը իւր հետը բերելով հային համար վիշտ եւ տառապանք։ Հայրիկ իւր դիւթիչ լեզուով Պոլսում սկսում է քարոզներ կարդալ, հրաւիրելով Հայաստանի թշուառ դրութեանը կարեկցել։ Այդ քարոզները մեծ դպաւորութիւն էին գործում Պոլսոյ հասարակութեան վրայ եւ կիւրակիները Հայրիկի քարոզած եկեղեցին լիք էր լինում ժողովրդով։ Հէնց այդ իսկ ժամանակներին է դուրս գալիս եւ Հայրիկի «Հայգուժ»-ը, որ մի ողբ էր Հայաստանի հասած դառնութեանց վրայ. նա գրուած էր Բագրեւանդայ եւ Ալաշկերտի հայոց կոտորածների առթիւ։ Այսպէս ամեն մի հայրենիքի վիշտ նորա զգայուն սրտի մէջ արձագանք է գտնում։

Ապա հասնում է Բեռլինի Կոնգրեսի ժամանակը։ Խրիմեան Հայրիկ շրջում է ամբողջ Եւրոպան. Հռոմ, Փարիզ Լոնդրա եւ Բերլին եւ ամեն տեղ ազգային դատն է պաշտպանում Եւրոպական կառավարութեանց մօտ։ Պատմում են՝ որ ամեն տեղ Եւրոպացիները սքանչած էին մնացել այդ պատկառելի հոգեւորականի շարժուածքին, դէմքին եւ վարվողութեան վրայ։ Բենտերբերի Արքեպիսկոպոսը եւ

Գերմանիայի թագուհին հիացած էին Հայրիկից, թէեւ Հայրիկ խօսել չգիտէր ոչ մի Եւրոպական լեզու։ Պ. Մինաս Զերազ հետեւեալն է պատմում Հայրիկի ճանապարհորդական անցքերից, երբ ինքը ուղեկցում էր նրան իբրեւ թարգմանիչ։

«Այցելեցինք Ս. Ղուկասի նկարչական ճեմարանն։ Տեսուչն ինձ մօտեցաւ և յայտնեց թէ ուսանողներն շատ հետաքրքիր էին լսել ընկերիս (?) անունը, ազգութիւն և կարգն, զի շատ ախորժած էին իւր պատկառելի կերպարանէ և իւր վայելուչ համազգեստէ»։ (Հայաստան և Իտալիա. Մին. Զեր. երես 44)

Բայց ինչո՞ւ եմ ընթերցող, հեռու գնում։ Դու եթէ նրա պատկառելի եւ սիրալիր դէմքը տեսել ես, անշուշտ զգացած կը լինես, թէ ինչքան պարզ եւ մի եւ նոյն ժամանակ հրապուրիչ է նա։ Ես այդ դէմքը չեմ տեսել։ Ես տեսել եմ նրա լուսանկարը միայն։ Դու էլ անկասկած տեսած կլինես, ընթերցող, նայիր այժմ այդ դէմքին։ Ցիծաղում է նա, թէ հանգիստ եւ անխռովել է . . . . . Անխռով է, բայց բարի ժպիտը այդ երեսից չի հեռանում. . . . . Հոգեկան անդորրութեան եւ բարեսրտութեան է նշան։

Ասում են, Հայրիկ քաղաքագէտ չէ եւ ճշմարիտ են խօսում, որովհետեւ քաղաքագիտութիւն ասելով՝ մեզանում ոչ թէ իսկական քաղաքագիտութիւն են հասկանում, որից զուրկ չէ Հայրիկ, այլ այն հնացած, սորբկական պարսկական քաղաքագիտութիւնը, որ սովորեց Վարդագէսին Ա.ժդահակ թագաւորի նեռաձգութիւնը գովել, երբ սա հարուածել՝ մեռցրել էր իւր որդուն։ Բայց բանտաւորապէս ժամանակիս ոգին փոխուած է դէպի լաւն ու ազնիւը։ Այժմ սոսելը եւ խաբելը ոչ ոք քաղաքագիտութիւն չի անուանում։ Գլադստոն կամ Բրայս նշանաւոր քաղաքագէտներ են, բայց նոյն մտքով քաղաքագէտ է եւ Խրիմեան։ Բրայս եւ Խրիմեան։ Դու զարմանում ես, ընթերցող, որ ես այդ երկու անձնաւորութեանց այսքան մօտ եմ դնում։ Մի զարմանար. նոքա իսկապէս շատ սոսիկ են, երկուսն էլ բարի են եւ ժողովրդասէր, երկուսն էլ անկեղծ են եւ անշահասէր, երկուսն էլ չգիտեն՝ թէ ինչ ասել է սոսել, խաբել։ Եթէ նոցա մէջ զանազանութիւն էլ կայ՝ այդ զանազանութիւնը արտաքին է եւ ոչ թէ ներքին։

Զանազանութիւնը նրանումն է միայն՝ որ մէկը ստիպուած է եղել իւր ոյժերը սպառել՝ Արեւելքի անբարոյական բրոնապետութեան դէմ պատերազմելով, միւսը՝ գտնուելով Անգղիայի պէս ազատ երկրում՝ աւելի օգնութիւն, աւելի համակրութիւն է գտել եւ ուստի կարողացել է աւելի մեծ գործեր տեսնել։ Բայց անապատում ընկած վարդն՝ էլի վարդ է մնում, թէեւ աւազի շատութիւնից, արեգակի այրող ջերմութիւնից եւ ջրի պակասութիւնից նա դեղնած եւ թառամած էլ լինի։—Տար նրան իւր բնական տեղը—մի հով պարտէզ, ուր առատ լինի ջուրը՝ պարարտ՝ երկիրը եւ զով՝ օդը եւ վարդի տերեւներն էլի կկանաչեն, նրա կոկոններն էլի կբացուին եւ նրա վարդից էլի անուշահոտութիւն կը բուրէ։ Բայց հազուագիւտ է վարդն, որ ջրպակաս անապատումն էլ ծաղկում է եւ անուշահոտ վարդեր տալիս։ Անապատում մի մի զուարթ վարդն աւելի սքանչելի է, քան դրախտանման պարտիզի հարիւրաւոր ծաղկեայ փնջերը։ Ահա ինչու մեզ համար թանգ է Խրիմեան Հայրիկ։ Երկաթէ բնաւորութիւն, անհուն սիրոյ զգացմունք եւ անսահման ներողամտութիւն պէտք է ունենալ, որ այնքան մարդկային վատութիւններն տեսնել, որ Հայրիկն է տեսել ու էլի հաւատ ունենալ ազգի եւ հայրենեաց վրա. ահա՛ ինչով է մեզ համար թանգ Խրիմեան Հայրիկ։ Ասում են՝ Խրիմեան քաղաքագէտ չէ։ Ընթերցող, կարդացի՞ր ես Մինաս Զերազի «Հայաստան եւ Իտալիա» գրքոյկը. եթէ ոչ՝ կարդա՛ եւ տես, ինչպէս տեղին եւ ժամանակին է ասուած Խրիմեան Հայրիկի ամեն մի խօսքը. ինչպէս նա իւր ժամանակին մոտաբերել է ամեն բան. եւ Մխիթարեան Վանքը եւ Հռոմայ նշանակութիւնը եւ Կիլիկիոյ յարաբերութիւններն Հռոմայ հետ եւ աղօթքը թագաւորի ընտանիքի մասին եւայլն։

„Մի յետին բառ ալ, պարո՛ն Կոմս, յարեցինք. (*) Իտալիայ կարող է ըմբռնել թէ ո՛րքան պիտի ծաղկի հայ ազգն, երբ

(*) Թէեւ դուցէ անտեղի է այստեղ, բայց չեմ կարող չյիշել՝ որ պ. Մինաս Զերազ չափից դուրս շատ և համարեա ամեն տեղ իւր լրագիրներում խոկումէ իւր անձը՝ ուր պէտք չէ։ Խրիմեան Հայրիկը խօսումէ, իսկ պ. Զերազ ասումէ՝ յարեցինք։

ստանայ այն ընտիր և արդար վարչութիւն՝ զոր կպահանջէ այսօր. զի Իտալիան փառապանծ դրօշին տակ կպատսպարուի այժմ Վենետիկի Մխիթարեան Ճեմարանն, որ համբաւ ծանօթ է գիտուն աշխարհին և զոր Եւրոպայ կը գնահատէ արժանապէս։ Այդ վանքի նման հարիւրաւոր վանքեր կան Օսմանեան Հայաստանի մէջ՝ ուր համախմբուած են հայ կրօնաւորներ, ցեղակից Ս. Ղազարի կրօնաւորներին. այլ անժխտելի է՝ որ մեր վանքերէ ոչ մին կրցած է հաւասարել Վենետիկի հայ մենաստանին։ Պատճառն է այն յոռի վարչութիւն՝ որ կաւերէ Հայաստանն։ Հայաստանի մենաստաններն կեղեքում և յարձակում կկրեն անգութ։ Ձեր Վսեմութիւն քաջ գիտէ՝ թէ մեաւոր մշակումն երկրորդական խնդիր է մի երկրի մէջ, ուր չկայ ապահովութիւն։ Տուէք մեզ վարչական ինքնօրութիւն և Հայաստան կծածկուի Ս. Ղազարի Ճեմարանին պէս Ճեմարաններով՝ որք եւրոպական քաղաքակրթութիւն կը ծաւալեն ասիական աշխարհին մէջ։ Մեզ կը թուի թէ, Եւրոպա նիւթապէս և բարոյապէս կը շահի, երբ Ասիայն ունենայ այնպիսի պէտքեր, զորս նա միայն պիտի կարենայ հոգալ»։ (Հայաստ. և Իտալիա. Մ. Ձեր.)

Այսպէս տեղին խօսել Մխիթարեան Վանքի մասին եւ մատնել Հայաստանի խեղճ մնացած վանքերը՝ կարող էր միայն Խրիմեան Հայրիկ, որ երկար տարիներ տոչորուել էր Հայաստանի վանքերում եւ գիտէր նրանց թշուառ դրութիւնը։ Զգացմունքն էր նրան խօսել տալիս. ահա ինչու տպաւորութիւն էին անում ամենի վրա նրա խօսքերը։

«Սրտի քաղաքագիտութիւնը մեզ համար մի միայն ճշմարիտ քաղաքագիտութիւն է եւ պէտք է լինի», ասում է պ. Ներենց։

Եւ այդ սրտի քաղաքականութեան մեր մէջ ամենահզօր ներկայացուցիչն է՝ Խրիմեան Հայրիկ։

Կոմս Կորգիին ասած Հայրիկի խօսքերի (մենք ամբողջապէս չենք բերում այստեղ նրանց խօսակցութիւնը) մէջ չկայ ոչինչ կեղծիք, ոչինչ սուտ, ոչինչ շողոքորթութիւն։ Հայրիկը խօսել է՝ ինչպէս իրեն վայել էր, իբրեւ իւր հայրենիքը սիրող եւ նրա պատիւը ճանաչող քաղաքագէտ կրօնական։ Միեւնոյն ժամանակ Հայրիկը իւր այդ ճանապարհորդութեան ժամանակ, միշտ մնացել է բուն հայ հոգեւորական իւր աղօթքով եւ կրօնականութեամբ. նա կապկի աղատամտութիւններ չի արել, այնու-

ամենայնիւ կարողացել է գրաւել ճշմարիտ աղատամիտների համակրութիւնը։

Վերջանում է պատերազմը. Հայրիկ վերադառնում է Պոլիս եւ ապա նշանակվում է Վան առաջնորդ։ Սկսեցին երեւալ պատերազմի ուրիշ թշուառ հետեւանքները. սարսափելի սովը տիրել էր ամբողջ Հայաստան, բայց փառք Աստծուն, Վասպուրականի հովանաւորն այն տեղ էր։ Նա իւր բոլոր ջանքերը գործ դրաւ սովի ազէտների առաջն առնելու. բայց թող այս անգամ էլ ս. Ծերենց խօսի, նա աւելի լաւ է խօսում։

„Նոքա որ գրական զօհաբերութեամբ իրենց ազգակցաց օգնեցին, լաւ մի գործ կատարեցին. ի՞նչ որ նաև լինի իրենց զոհողութեանց շարժառիթը, կրնան իրենց խղճմտանքը գոհ ընել, երբ յիշեն եղած օգնութիւն այն խեղճ մարդկանց, որ մահուան դրոներէն ետ դարձուցին։ Բայց պէտք է նաև գիտնան թէ այդ գործին մէջ Խրիմեան ազգասիրութեան պարտքն մինչև մարդասիրութեան տարաւ, ըստ ներելոյ վիճակին. Հայոց Առաջնորդարանն ի Վան՝ լի էր բազմութեամբ այր ու կին, ծերք և տղայք, Հայն ու Թուրք, Քուրդ և Եզիդ խառն ի խուռն հաց կը խնդրէին։ Հայրիկին ոչ սիրտը կարծր էր և ոչ միտքը նեղ. ինք գիտցաւ քրիստոնէական ողորմածութիւնը քաղաքագիտութեան հետ լծորդել և այն աստիճանի՝ որ Վանայ կուսակալին անհամբերութենէն այս խօսքը կըրցաւ փախիլ՝ ուղղեալ թրքաց մեծամեծաց. „Ի զուր դուք զհայս կպարսաւէք, պէտք է ամաչիլ. դուք՝ մեծատունքդ ի՞նչ ըրիք ձեր աղքատաց համար, մինչ նոքա ոչ միայն իրենց՝ այլ և ձեր սովելոց նաև հաց կուտան“։

Հայրիկի այս մարդասէր վարմունքի հետեւանքն այն եղաւ, որ սովի վերջանալուց յետոյ քրդերի շեյխերն եւ մեծամեծները եկին Խրիմեանի մօտ եւ խորին շնորհակալութիւն ու հայ եկեղեցոյն գիրկը մտնելու ցանկութիւնը յայտնեցին։

Հենց այդ միջոցին, Խրիմեան Հայրիկ որ առանձին սէր եւ համակրութիւն է զգում դէպի գիւղական աշխատաւոր դասը—նորանց դրութիւնը բարւոքելու համար՝ Վարագայ Վանքի մէջ գիւղատնտեսական մի դպրոց է հիմնում (Խրիմեան տնտեսագէտ չէ), ուր հրաւիրում է Ներսոպայում իւր մասնագիտական ուսումն եւ պատրաստութիւն ստացած մի երիտասարդ։ Իւր մեղքիցը չէ, եթէ

այժմ այդ դպրոցը ծաղկեալ դրութեան մէջ չէ։ Հայ հասարակութիւնը, որ զանազան Սալ'երի եւ խաբեբայ Ամբրոսիոսներին 1000 եւ 10,000-ով էր բաժանել, Վարագայ Երկրագործական Դպրոցին զլացել էր իւր օգնութիւնը հասցնել։ Մեր «տնտեսագէտ» եւ «քաղաքագէտ» հայ հասարակութիւնը եւ ինտէլիգենցեան 'ի հարկէ ոչինչ մի կարեւոր գործ չէն համարում իրենց թշուառ Հայաստանցի եղբարցն օգնելն—իսկ պ. Սալլին կաշառք տալն՝ օ, դա ուրիշ բան է, դա՛ կարեւոր է՝ դա . . . . . «քաղաքագիտութիւն» է։

Խրիմեանի հակառակորդները աշխատել էին չափից դուրս ուռեցնել եւ մեծացնել Նորերումն նորա սրած մի չնչին աննշան սխալը։ Ինչո՞ւմն է բանը։ Վանայ կուսակալը 'մի թուղթ է կարդում Հայրիկին՝ ուր գրուած է եղել գոլասանիք կառավարութեան եւ գոհունակութիւն Վասպուրականի հայ ժողովրդի կողմից, բայց կուսակալը գրածի հակառակն է կարդացել՝ Խրիմեանից ստորագրութիւն գողանալու նպատակաւ։

«Եւ Խրիմեան, ասումէ պ. Ծերենց, որ այդչափ փոքրոգի այնչափ բարձր պաշտօնի վրայ՝ Տէրութեան մը ներկայացնողին վրայ չէր կարծեր՝ ստորագրեց, և Պոլսոյ վարչութիւնը և Պատրիարքարան (կարդա՛ Ներսէս Պատրիարք) յարմար առիթ սեպեցին սխալմունքը խաբէութիւն հռչակել, իսկ բանին էութիւնը ծածկել. բնական էր, թէ այս մարդիք որ Խրիմեանի Պատրիարքութեան անկմանն աշխատած էին, և որ այսօր վարչութեան գլուխը կը-կանգնէին, չ'էին կրնար հաշտ աչօք տեսնել յանկարծ նրա բարձրանալը Կաթողիկոսական գահին վերայ»։ (Ծեր. երես 28.)

Խրիմեանն մի քանի անգամ բողոքներ էր գրել 'ի Պատրիարքարան՝ կուսակալի խաբէութիւնը բացատրելով, բայց Պատրիարքը կարեւոր չէր համարել նրան հրատարակել։

«Ի՞նչ անուն տալու է այդ վարմունքին եւ այսպիսի վարչութեան», հարցնում ենք մենք պ. Ծերենցի հետ 'ի միասին։

Բայց նոյն իսկ Եւրոպան էլ գիտէ՝ որ Հայութեան սիրտը եւ հոգին Խրիմեանն է։ Նորերումն 'ի պատիւ Խրիմեանի տուած ճաշի ժամանակ, ներկայ էր եւ անգլիական հիւպատոս պ. Էյրզ։ Դա մի յարմար առիթ էր Անգլիական կառավա-

բութեան կողմից նորից յայտնելու իւր համակրութիւնը Հայոց գաղին եւ հաւատացնել հայերին՝ որ նա նշանակութիւն չի տալիս Թուրքաց քաղաքականութեան ներկայացուցչ Մուխտար—Փաշայի ստախօսութիւններին։ Պատահական չէ՝ լ հարկէ՝ որ Անգղիայ Խրիմեանի միջոցով է յայտնում Տաճկահայերին իւր համակրութիւն եւ քաջալերութիւնը։

Աղգի հոգեւոր Պետի Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան խնդիրը կայ։ Յանկանանք որ այդ ընտրութիւնը կատարուի ընտրողների ազատ խղճմտանաց եւ սրտի զգայմանց համեմատ։

Մենք ասացինք՝ ինչ որ մեր խիղճը եւ զգայմունքը մեզ թելադրեց։ Մնացածը՝ պատգամաւորների խղճի վրա է մնում։

Ց. ՏԷՐ—ՄՈՎՍԷՍԵԱՆ։

Թիֆլիս.

10-ին Ապրիլի 1884 ամի.

# ԱՆՁՆԱԶՈՀ ՆԱՊԱՍՏԱԿ

(ՇՀԵԴԻՆԻՑ)

Մի անգամ նապաստակը գայլի դէմ մեղանչել էր և ահա ինչպէս։ Նապաստակը գայլի որջի մօտով վազում էր մի տեղ, գայլը յանկարծ նրան տեսաւ և ասաց. «նապաստակ սիրելիս, սպասիր»։ Բայց նապաստակը ոչ միայն չ'սպասեց, այլ և աւելի արագացրեց իր քայլերը։ Գայլը տեսնելով որ նա չ'կատարեց իր հրամանը՝ վազեց նրա ետևից, ճանկեց և ասաց. «Ինչպէս համարձակվեցիր չը կատարել իմ առաջին խօսքը, դէ որ այդպէս է լսիր ուրեմն։ Ես վճռեցի վերջ դնել քո կեանքին պատառ պատառ անելով քեզ։ Բայց որովհետև այժմ ես կուշտ եմ, իմ ամուսինն էլ կուշտ է և որովհետև դեռ մի հինգ օրվայ համար էլ պաշար ունինք, այդ պատճառով դու կ'նստիս ահա այս թփի տակ և կ'սպասես քո հերթին։ Բայց ո՞վ գիտէ շատ կարելի է ես քեզ ողորմիմ էլ ...հա հա հա...»

Ահա նապաստակը անշարժ նստած թփի տակ մտածում է թէ՝ այսքան օրերից և այսքան ժամերից յետոյ կ' հասնի նրա մահը։ Նայում է նապաստակը այն կողմ, ուր գտնվում է որջը, գայլի փայլուն, հսկող աչքը ընկնում է նրա աչքին։ կամ մի ուրիշ անգամ նայում է նա և տեսնում, որ գայլը ամուսնու և ճտերի հետ դուրս են եկել իրանց որջից։ Գայլը իր բարբառով կնոջը մի ինչոր բան է ասում և երկուսն էլ սկսում են հրահրալ հա՛ հա՛ հա՛։ Իսկ նրանց ճտերը խաղալով, ոստոստալով վազում են նապաստակի մօտ, փաղաքշում են, իրանց ժանիքները կըրճտում և խեղճի սիրտը հալ ու մաշ անում։

Երբէք նապաստակի համար կեանքը այնչափ քաղցր չէր որչափ այդ ժամանակ։ Նա կարգին մարդ էր և մտադիր էր շուտով պսակվել մի որբևայրի նապաստակուհու աղջկայ

վրա և հէնց նոյն րոպէին երբ ընկաւ գայլի ճանկերը՝ նա վազում էր իր հարսնացուի մօտ։

Ի՞նչ է մտածում արդեօք այժմ նրա հարսնացուն։ Երևի կարծում է որ նշանածը խաբեց իրան կամ ո՞վ գիտէ գուցէ նա երկար սպասելուց յետոյ համբերութենից դուրս է եկել և մի ուրիշի հետ սիրահարվել։ Շատ կարելի է թիթերի մէջ խաղալու ժամանակ նրան էլ գայլը ճանկել է և պատառ պատառ արել։

Մտածում էր մտածում խեղճ նապաստակը և արտասուքը խեղդում էին նրան։ Ահա՛ ինչով վերջացաւ իմ ցնորքը, ասում էր նա ինքն իրան։ Պատրաստվում էի պսակվելու հեշտաեռ էլ գնել էի և երևակայում էի թէ երիտասարդ ամուսնուս հետ թէյ կ'խմեմ։ Բայց ահա այդ բոլորի փոխարէն ինչ վիճակի հանդիպեցի։ Արդեօք քանի ժամ է մնացել մինչև իմ մահը։

Դիշեր էր։ Նապաստակը այդ հոգսերից յաղթված նընջում էր թիթերի տակ նստած։ Նա երազում տեսնում էր թէ իբր գայլը նրան նշանակել է իր մօտ առանձին յանձնարարութիւններ կատարող պաշտօնեայ (чиновникъ особыхъ порученій)։ Իբրև գայլը զբաղուած է վերաստուգողական գործերով և վազվզում է այս ու այն կողմ, իսկ ինքը նապաստակը օգտվելով գայլի բացակայութենով, իբր շտապում է իր հարսնացուի մօտ հիւրասիրվելու։ Բայց այդ ժամանակ յանկարծ նապաստակը լսեց մի ինչոր ձայն և մի և նոյն ժամանակ կարծես թէ մէկը բոթեց նրա կողքին։ Նապաստակը աչքերը բացեց և տեսաւ որ իր հարսնացուի եղբայրը ահա դէմ ու դէմ կանգնած է։

—Փա՛հ քո տունը տէրը չինի. հարսնացուդ լսելով քեզ հետ պատահած դժբաղտութիւնը մի ժամի մէջ հալումաշ եղաւ և մեռնում է։ Այժմ նա միայն քեզ վրա է մտածում «մի՞թէ, ասումէ, ես կմեռնեմ առանց տեսնելու իմ թանկագին նշանածին։

Լսելով այդ չարագուշակ լուրը, դատապարտված նապաստակի սիրտը սկսեց մաս մաս կտրատվել։ Ինչո՞ւ, ի՞նչ յանցանքի համար նա արժանացաւ այդպիսի դառն վիճակի։ Նա խոշ ապրում էր խաղաղ, յեղափոխութիւններ չէր անում ոչ ոքի դէմ

զէնքը ձեռին չէր դուրս գալիս։ Իսկ թէ վազում էր, կարևորութիւն ունէր վազում էր, մի՞թէ սրա համար նա արժանի է մահու։ Մա՛հ, մտածեցէք թէ ինչ խօսք է այդ, մա՛հ, որին դատապարտվում է ոչ թէ միայն ինքը, այլ և նրա սիրելի հարսնացուն, որը նրանով է միայն յանցաւոր որ բոլոր սրտով սիրում է նրան։ Ա՛խ, ինչպէս նա կը թռչէր այդ ժամանակ հարսնացուի մօտ և իր առաջին թաթիկներով բռնելով սիրեկանի ականջներից, շոյելով նրա փոքրիկ գլուխը՝ մի րոպէում բոլոր ցաւերը մոռացնել կտար։

—Փախչենք—ասաց լրաբեր նապաստակը։

Լսելով այդ խօսքը դատապարտվածը կարծես թէ մի րոպէ ոգևորվեց։ Նա կուչ եկաւ, ականջները դրաւ մէջքին. մի ոստում—և ահա նա ազատված է, նրա հետքն էլ չի մնայ։ Բայց այդ րոպէին հարկաւոր չէր նայել գայլի որջին; իսկ նապաստակը նայեց, նայեց և նրա սիրտը թուլացաւ։

—Չեմ կարող—պատասխանեց նա, գայլը իրաւունք չի տուել։

Իսկ գայլը այդ միջոցին բոլորը տեսնելով և լսելով՝ ամուսնու հետ ծածուկ խօսում էր իր բարբառով։ Երևի նա գովում էր նապաստակի ազնուութիւնը։

—Փախչենք—դարձեալ ասաց լրաբերը։

—Չեմ կարող—կրկնեց դատապարտուածը։

—Է՛յ, ի՞նչ էք այդտեղ քչփչում, ի՞նչ էք չարամտում, մրոռաց յանկարծ գայլը։

Երկու նապաստակները սարսափից քարացան։ Լրաբերը ևս ընկաւ գայլի ճանկերը։

«Օրէնքի համեմատ արդեօք ի՞նչ պատժի են արժանի այդ չարամիտները—մտածեց իսկոյն գայլը։»—Հա գտայ։ Նապաստակուհուն զրկել իր նշանածից և եղբօրից, սրանց երկուսին էլ ես և ամուսինս անուշ կանենք—վճռեց նա նոյն րոպէին։

Այդ ժամանակ նապաստակները ուշքի եկան և ահա գայլը իր ամուսնու հետ կանգնած դէմ ու դէմ իրանց ժանիքները կրճտումեն, երկուսի էլ աչքերը գիշերային խաւարի մէջ փայլում են իբրև լապտերներ։

—Ո՛չինչ, ձերդ ազնուութիւն, հէնց էնպէս խօսում ենք դէսից դէնից, հայրենակիցս եկել է ինձ տեսնելու—թոթովեց դատապարտվածը սարսափից դողդողալով։

—Ո՛չինչ, հը՛մ, ես ձեզ ճանաչում եմ, գիտեմ, ձեր բերանը մատ դնել չի լինի. ասացէք ի՞նչ էիք խօսում։

—Ձերդ ազնուութիւն—մէջ մտաւ հարսնացուի եղբայրը—քոյրս, սրա հարսնացուն, մեռնում է և ձեզ խնդրում է որ դուք եթէ կարելի է արձակէք նշանածին։

—Հը՛մ, այդ լաւ է որ հարսնացուն այդպէս սիրում է իր նշանածին—ասաց գայլուհին։ Այդ կ՚նշանակէ որ նրանք կարող են շատ ճտեր ծնել և գայլերի պաշարը աւելացնել։ Մենք էլ մարդ ու կին իրարու սիրում ենք, մեզ էլ ճտեր շատ ունենք։ Քանիսը ազատ թափառում են, իսկ չորսն էլ մեզ հետ են ապրում։ Գա՛յլ, ա՛յ գայլ. արձակել թէ՞ չէ նշանածին, որ գնայ իր հարսնացուին տեսնի։

—Ախար նշանակված է՝ որ նրան վաղը չէ միւս օրը ուտենք։

—Ձերդ ազնուութիւն, մի վայրկեանում ես կը վազեմ և իսկոյն կ՚վերադառնամ, Աստուած վկայ ճշմարիտն եմ ասում—շտապեց հաւատացնել դատապարտվածը։ Բայց որպէս զի աւելի համոզի գայլին թէ մի վայրկեանում կարող է հասնել իր հարսնացուի մօտ, նա այնպէս զօչաղ ձևացրեց իրան, որ գայլի քէֆը եկաւ։ «Ա՜յ թէ ես այդպիսի զինուորներ ունենայի»—մտածեց նա։

Իսկ գայլուհին զղջալով ասաց.

—Մտիկ արա՛, ինքը նապաստակ է, բայց ինչպէս է սիրում իր հարսնացուին։

Ծարահատեալ գայլը համաձայնվեց բաց թողնել դատապարտվածին, միայն այն պայմանով որ նա ուղիղ նշանակած ժամանակին վերադառնայ։ Իսկ հարսնացուի եղբօրը, լրաբերին, պահեց իր մօտ ամանաթ։

—Թէ որ երկու օրից յետոյ, առաւօտեան մինչև վեց ժամը չը վերադառնաս—ասաց նա—քո փոխարէն նրան կուտեմ, իսկ թէ վերադառնար՝ երկուսիդ էլ կուտեմ, բայց կարելի է.... ողորմեմ էլ.. հա՛ հա՛ հա՛.....

Նապաստակը բաց ընկաւ ինչպէս մի նետ աղեղի բերա-

նից և փախաւ այնպէս որ երկինքն էր դողում նրա ոտի տակ։ Սար էր հանդիպում-նա անցնում էր թռչկոտելով, գետ էր հանդիպում—քաջութեամբ լող էր տալիս միւս եզրը մէջքը քորելով, լիճ էր հանդիպում-ոստոստալով էր անց կենում։ Մի խօսքով ոչ մի արգելքից մեր նապաստակը չէր խորշում։ Հեշտ բան չէ, երկու օրվայ ընթացքում նա պիտի համ տեղ հասնէր, համ բաղնիս գնար լուացվելու, սրբվելու, համ էլ պսակվէր (անպատճառ կ՚պսակվեմ—ամեն բոպէ կրկնում էր նա ինքն իրան)։ Իսկ այդ ամենից յետոյ նա պիտի անշուշտ մինչև առաւօտեան վեց ժամը վերադառնար գայլի մօտ՝ անպատճառ նրա նախաճաշիկին հասնելու։

Թռչունները անգամ զարմանում էին նրա արագընթացութեան վրա։ «Նզբայը, Московскія Вѣдомости լրագիրը բաս ինչու է գրում թէ իբր նապաստակները հոգի չունին, թէ իբր հոգւոյ փոխարէն նրանց մէջ շոգի է խաղում, չէ որ սա էլ նապաստակ է, բայց տեսէք ինչպէս է թռչկոտում»։

Վերջապէս մեր նապաստակը տեղ հասաւ։ Թէ ինչ ուրախութիւններ զարթեցին—այդ ոչ գրչով կարելի է գրել և ոչ էլ լեզուով պատմել։ Հարսնացուն հէնց որ տեսաւ իր թանգագին սիրականին թէ չէ՝ իսկոյն մոռանալով իր հիւանդութիւնը կանգնեց յետքի թաթիկների վրայ, թմբուկը քարշ տուեց վզովը և սկսեց առաջի թաթիկներով մի ասպետական եղանակ հնչել։ Սա մի սիւրպրիզ էր, որ նա պատրաստել էր նշանածի համար։ Իսկ որբևայրի նապաստակուհին ուրախութիւնից էլ չը գիտէր թէ ինչ անէր, որտեղ նստեցնէր թանգագին փեսացուին, ինչով կերակրէր։ Ամեն կողմից հաւաքվեցին բարեկամներ, քոյրեր, մօրաքոյրեր, խնամիներ, ամենքը, որ փեսացուին տեսնեն, էհ, գուցէ մի քանի ախորժալի պատառներ էլ անուշ անեն։

Ամենքը ուրախ են, ամենքը գուարճանում են, միայն փեսացուն է տխուր, նա ինքն իրան կորցրել էր։ Մի քանի սիրահարական խօսքերից յետոյ, նա իսկոյն ասաց հարսնացուին։

—Հարկաւոր է անյապաղ բաղնիս գնալ* և շուտով պսակվիլ։

---

Ռուս գիւղացին բաղնիսը շատ է սիրում. գրեթէ ամեն գիւղական տան առաջ բաղնիս կայ։ Ծ. Թ.

—Տեսէք, ինչպէս է վռազում սիրելի փեսաս—պատասխանեց հանաքով հարսնացուի մայրը։

—Պիտի կրկին վերադառնամ, գայլը ինձ ժամանակով է արձակել։

Նապաստակը արտասուքը աչքերին մանրամասնօրէն պատմեց բոլորը աւելացնելով թէ ինքը շատ կ՝ցանկանար յետ չ՝վերադառնալ, բայց չի կարող, որովհետև խօսք է տուել, իսկ նապաստակը իր խօսքի տէրն է։

Բարեկամները երկար ու բարակ խորհրդակցեցին և ասացին միաբերան—ճշմարիտ է, առածը ասում է. խօսք չը-տուած պինդ կաց, խօսք որ տուիր՝ կատարիր։ Մեր նապաստակային ցեղը երբէք ոչ ոքի չի խափել, մենք էլ չ՝պիտի խաբենք։

Շատ շուտ է պատմվում պատմութիւնը, բայց նապաստակների մօտ գործը աւելի արագ է կատարվում։ Առաւօտեան նապաստակը պսակվեց, իսկ երեկոյեան արդէն նա հրաժարական էր տալիս իր ամուսնուն։

—Անպատճառ գայլը ինձ կուտի—ասաց նա։ Լսէր ամուսինս, դու ինձ հաւատարիմ կ՝մնաս։ Եթէ զաւակներ ծնես որքան կարելի է նրանց լաւ կրթիր կամ աւելի լաւն է նրանց տուր կ՝ուսուցանեն, այդտեղ նրանց ոչ միայն թմբակահարութիւն այլ և թենդանօթի դէմ սիսեռներով պատերազմել կ՝սովորցնեն։

Այդ ասելով նա յանկարծ, կարծես մոռացութեան մէջ (անշուշտ գայլին մտաբերելով) աւելացրեց։

—Բայց կարելի է գայլը ինձ . . . հա հա հա . . . ողորմի էլ։ Այդ նրա վերջին խօսքերը եղան, նա անհետացաւ։ Մինչ նապաստակը զբաղուած էր իր հարսանիքով՝ դէպի գայլի որջը տանող ճանապարհում պատահել էին մեծամեծ դժբաղդութիւններ։ Մի տեղ սաստիկ անձրևներ գալով՝ այն գետը, որը նախնթաց օրը մեր նապաստակը խաղալով անցաւ, դուրս էր եկել եզերքից և մօտ քսան վերստաչափ տարածութիւն հեղեղել։ Միւս կողմում Արօն թագաւորը Նիկիտա թագաւորին պատերազմ էր յայտնել և նապաստակի

ճանապարհում արդէն սարսափելի կռիւ կար։ Երրորդ կողմում՝ խօլերայի պատճառով կարանտինան մօտ հարիւր վերստ տարածութիւն շրջապատել էր։ Բացի այս ամենից՝ ամեն մի քայլում թափառում էին գայլեր, աղուէսներ, բուեր և ուրիշ գիշակերներ։

Խելօք էր մեր նապաստակը։ Նա վազօրօք իր ճանապարհորդութեան համար երեք ժամ աւելորդ պաշար էր թողել, որպէս զի անակնկալ դէպքեր պատահելիս չ'ուշանայ գայլի որոշած ժամանակին տեղ հասնելու։ Սակայն երբ նրա առաջ դուրս եկան արգելքներ արգելքների ետևից՝ նրա սիրտը բոլորովին սառաւ։ Նա վազում էր երեկոյեան, վազում էր կէս գիշերին, ժայռերը մաշում էին նրա ոտերը, թփերի փշերից նրա մորթին պատռտվել, ընկեր էր կողքերքին, նրա բերանից հեղում էր արիւնախառն փրփուր։ Բայց նրա առաջ դեռ ահագին ճանապարհ էր մնացել։ Նա մտաբերում է իր բարեկամ ամանաթ նապաստակին։ Ահա խեղճը թփի տակ կանգնած գայլի առաջ մտածում է. «այսքան ժամերից յետոյ իմ սիրելի փեսաս կ'հասնի և ինձ կազատի»։ Մտաբերում էր մեր նապաստակը այդ և իր քայլերին ոյժ տալիս։ Ո՛չ լեռների, ո՛չ դաշտերի, ոչ անտառների, ոչ լճերի ոչ մի դժուարութեան վրա նա ուշադրութիւն չէր դարձնում։ Բանի քանի անգամ նրա սիրտը ուզում էր տրաքուել, բայց նա քաջութեամբ յաղթում էր իր սրտին և ասս, որպէս զի անօգուտ յուզմունքը նրան չի խանգարի հասնել գլխաւոր նպատակին։ «Վշտալու և արտասվելու ժամանակ չէ, միայն թէ կարողանամ ազատել իմ բարեկամիս գայլի ժանիքներից—մտածում էր նա և աւելի ու աւելի արագութեամբ վազում։

Իրիկնադէմ էր։ Եղանակը զովացել էր, բուերը, բուէճները, չղջիկները պատսպարվում էին իրանց բներում, ամեն ինչ խաղաղ էր, իսկ մեր խեղճ նապաստակը շարունակում էր վազել ստէպ ստէպ կրկնելով—«Մի թէ, մի թէ ես չեմ կարող ազատել բարեկամիս»։

Արևելքը շառագունեց, հորիզոնի վրա երևեցաւ արեգակը և հետզհետէ բարձրանալով սկսեց շողշողեցնել ցողաթաթախ խոտերը, կանաչազարդ ծառերի տերևները։ Թռչունները զարթեցին քնից, մրջիւնները, որդները դուրս սողա-

ցին իրանց ընկերից, հաճարը և վարսակները կարծես թէ շշնչեցին։ Բայց մեր նապաստակը ոչինչ չէ տեսնում, ոչինչ չէ լսում և միայն անդադար կրկնում է. «սպանեցի ես խեղճ բարեկամիս, սպանեցի»։

Բայց ահա վերջապէս սարը։ Այդ սարի յետքումն է լիճը, որի մէջ գտնվում է գայլի որջը։ «Ուշացար նապաստակ, ուշացար»։ Նա վերջին ոյժերը ժողովեց որ բարձրանայ սարի գագաթը և բարձրացաւ էլ։ Բայց նա այլ ևս չէ կարողանում վազել, յոգնածութենից ընկնում է. «միթէ, միթէ նա տեղ չի հասնիլ»։

Ահա գայլի որջը նրա առաջն է, հեռուից լսվում է մի զանգակի ձայն, որը զարկում է վեց ժամը։ Զանգակի ամեն մի զարկը իբրև մուրճի մի մի հարուածներ խրվում է վշտացեալ կենդանու սրտին։ Վերջին զարկի ժամանակ գայլը բարձրացաւ իր որջից ճմռտելով և պոչը ուրախութիւնից շարժելով։ Ահա նա մօտեցաւ ամանաթին, հաւաքեց նրան իր թաթերի մէջ և իր մագիլները խրեց նրա փորը որ երկու պատառ անի՝ մէկը իրա միւսն էլ ամուսնու համար։ Իսկ գայլիկները հաւաքված իրանց հօր—մօր շուրջը փոքրիկ ժանիքները կրճտելով դաս են առնում։

—Այստեղ եմ ես, այստեղ որոտաց մեր նապաստակը։ Կարծես թէ հարիւր նապաստակներ գոռացին միասին։ Գոռաց նա և սարից թաւալվեց լիճը։

Գայլը նրան գովեց։

—Տեսնում եմ—ասաց նա, որ նապաստակներին կարելի է հաւատալ։ Ահա իմ վճիռը. երկուսդ էլ նստեցէք այս թփի տակ մի առ ժամանակ, յետոյ ես ձեզ . . . . հա, հա հա . . . կ'ողորմիմ։

Թարգ. ՇԻՐՎԱՆԶԱԴԷ։

5 Ապրելի 1884 թ.

Թիֆլիզ։

# ՆԱՄԱԿՆԵՐ ԻՄ ԸՆԿԵՐԻՆ.

## Ա.

### Սիրելիդ իմ.

Այս բոպէին երբ ես քեզ գրում եմ, դուրսը փչում է սարսափելի քամի, մի վայրկեան ես դուրս եկայ, անհնարին եղաւ ինձ կանգնել օդի այդ հզօր հոսանքի դէմ, բայց որքան դուրսը հողմը սաստկանում է կարծես այնքան աւելի հանգստանում եմ ես ներքուստ, այնքան իմ հոգին թեթեւանում է։ Իմ միջի հողմը այնքան սաստիկ է, որ ամենավեհափառ արհամարհանքով ծիծաղում է օդային հողմի վրայ։ Մինչդեռ հողմը դադարում է, մինչդեռ տարերքը լռում են, լռում է և բոլոր բնութիւնը, խաւարի հետ ընդհանուր թմբութիւնը տիրում է ամենքի վրայ, ես դուրս եմ գալիս ու չորս կողմս նայում տեսնում—մութ, խաւար, լուռ, հանգիստ, խաղաղ։ Յանկարծ սաստկանում է ներքին հողմը, ուռչում է կուրծքս, քունքերս սկսում են արագ զարկել, երակներիս դողը մինչև ուղեղս է հասնում, աչքս անսահման մութի մէջ կորչում է և ապա առատութեամբ ծծած օդս դուրս է թռչում կրծքիցս հառաչանքի հետ, տարածվում է ինձ շրջապատող մթնոլորտի մէջ, եւ սոլունդի նման ծծելով իրեն մէջ ամենայաւ, հոգ, նեղութիւն, այդ մթնոլորտից կրկին մտնում է դատարկ կուրծքս և ուռեցնում նրան, կրկին դուրս գալիս, կրկին մտնում։ Դու, սիրելիս, երևի գիտնական ես դառել, թթուածին ես ծծում, բայց ես չեմ կարողանում, ես ծծում եմ այն, ինչ որ մթնոլորտի մէջ կայ։ Ի՞նչ ասես որ չլինի մթնոլորտում. ցաւ, վիշտ, հառաչանք, սուտ, ճշմարտութիւն, կոծ, բոլորը միմեանց խառնուած, այդ ով ծծի ու հանգստանայ։ Բայց նորից սկսում է հողմը, ահռելի հոսանքով մինչև ինձ է հասնում ու-

սթափեցնում՝ ես մտնում եմ սենեակս, նստում սեղանի առաջ, ձեռս դնում ճակատիս։ Քամին դուրսը աւերածներ է անում. ես լսում եմ ինչպէս դրացու և մեր կտուրի տախտակները իրար են խփվում, դռան ճեղքով շվայնելով վազում է քամին ներս. այդ բանից շատ անհանգիստ են լինում և դժգոհ մնում իմ ճրագս, թղթերս ու մազերս, բայց կուրծքս անսասան է դորա դէմ և ներսիս հոգմը արհամարհանքով է պատասխանում մթնոլորտի հոսանքի այդ ապստամբ կտորին։ Ահա այդ ժամանակ ես հանգիստ եմ, ես երջանիկ եմ և խաղաղ, այդ ժամանակ ես յիշում եմ այն օրերը, երբ քեզ հետանց էի կացնում ուսումնարանում, այն պատանեկան անհոգ, ազատ լուսաւոր օրերը երբ մեր հոգին մեզնից ու մեր ապագայ փառքից աւելի ոչինչ չէր տեսնում աշխարհի երեսին։ Յիշում ես մեր նորատունկ պարտէզը, որի յատակագիծը մենք էինք շինել (որ ինժիները մեզ հետ կարող էր մրցել)։ Յիշում ես նորա միջի կուչ եկած դափնիները, նորատունկ երկու տերև ունեցող ուռենիները, պանդուխտ կիսաթոշոմ ծաղիկները, հապա առունները՝ որ մենք փորել էինք, հապա բլրակները որոնց մէջ մեծ մեծ մկներ էին կենում, հապա բոզկը, տակը, գազարը։ Յիշում ես այդ պարտիզի ծայրում դրուած մեծ քարը, նրա վրայի սուր սուր բևեռագրերը, թշուառ, որքան նա փոքրիկ ու չնչին էր երևում Մասիսի առաջ, որի սպիտակափառ գագաթը ամպերի հետ պայման էր կապում մեր պարտէզը չորացնելու։ Յիշում ես լճակը նրա փոքրիկ ձկներով, ով էր մեզանից աւելի լաւ քար ձգում, հասցնում լճի մի ծայրից մինչև միւս ծայրը։ Աչքիդ առաջ գալիս է երբևիցէ այն երկայն ծառազարդ ուղին, որի վրայով մենք գնում էինք անտառ։ Տեսնես մնում է այն բարդի գեղեցիկ ծառը որի կեղևի վերայ մեր անունները գրեցինք։ Կարած կ'լինես նորան։ Մթագդ է ինչպէս ժամերով պառկում էինք նորա տակ հովանում կամ նստում ու զրոյց անում։ Ի՜նչ լաւ խօսակցութեան առարկաներ ունէինք։ Մենք մտաբերում էինք այն հերոսներին, որոնց հետ ծանօթացել էինք գրքերի մէջ, ինչպէս սիրում էինք ազնիւներին և ատում ցածերին, և այդ որքան հոգեկան զուարճութիւն էր պատճառում մեզ։ Ինչպէս ուրախ երգում էինք մենք ու թրչն-

դացնում անտառը, մանաւանդ երբ քեզ յայտնի օրիորդները գալիս էին անտառ մանդալու, կամ ճեմարանը տեսնելու։ Յիշում ես դու այն փոքրիկ, ի՞նչ փոքրիկ, այն ահագին կռիւը որ մեր մէջ պատահեցաւ այն օրիորդի մասին, դու ի՞նչպէս էիր համարձակվում պահանջել ինձնից, որ ես քեզ զիջանեմ նորան սիրելը, դու չգիտէիր որ ես նախանձոտ եմ։ Ես այժմ կարմրում եմ որ միտքս է գալիս, ով գիտէ նա մեզ վրա մտածում էր՝ թէ չէ։ Մի՞թէ դ՞ է հարցաքննութեան ժամանակ, որին այն օրիորդն էլ ներկայ էր, երբ ինձ հարցրին թէ Ռուս բանաստեղծ Պուշկին ինչ նշանաւոր գրուածունի, ես պատասխանեցի „Евгеній Онѣгинъ“, իսկ երբ բովանդակութիւնը հարցրին, ես բոլորովին այլայլուած ու դողացող շրթունքներով պատասխանեցի Евгеній обнялъ влюбленъ въ Онѣгина (Եվգենիյ սիրահարուած էր Օնեգինի վրայ)։ Ի՞նչ խայտառակութիւն, ինչ տարտարելի ծիծաղ բարձրացաւ։ Արդեօք մէկը նկատեց որ ես ուզում էի ասել թէ ես սիրում եմ այստեղ նստած օրիորդին, միթէ չ՚տեսան որ ես այդ խօսքերը ուղղակի նրա ճակատին խփեցի ամենաքնքոյշ նայուածքով։ Որքան բարի էր նա, մինչդեռ ամենքը ամենախայտառակ քրքիջ էին բարձրացրել, նա իրեն զսպելով միայն գեղեցիկ թաշկինակը հանեց ու գեղեցիկ քիթը սրբեց. նա այժմ կին է դառել. ես երկու տարի առաջ նորան տեսայ և իսկոյն լեզուիս ծայրը եկաւ Евг. . . . Բայց յանկարծ թողեցի փախայ, ու ամօթից չգիտէի ուր գնամ. ինձ այնպէս թուաց թէ նա շփոթուեց ինձ տեսնելով։

Ես որը յիշեցնեմ քեզ ու որը թողնեմ. լինում են դրպէներ երբ երևակայութիւնը այնքան սաստկանում է որ պատկերները բոլորովին կենդանանում են աչքի առաջ, այժմ ես այդ դրութեան մէջ եմ և գրիչս մտքիս չէ կարող հասնել։ Պատմական անունները երբ բաժանում էինք, կարծեմ քեզ Անուշուանն ընկաւ, Հայկը, Ադամը, Հերակլեսը, Հեկտորը, մինչև անգամ Արամազդը մտաբերում ես թէ չէ։ Հապա Ռոդէնը, այն չալուճճի մուկը միտքդ է, որից վախենալով անունը Ռոդէն էինք դրել։ Լէօ անունը ով ժառանգեց. . . . Յիշում ես այն կամանոզ-ժիշկին որ մի օր մեր դասատնում ճառ խօսեց, պատ որ մենք երևելի

մարդիք ենք դառնալու, քնչպես յափշտակուած էինք մենք նրա ճառով։ Ապա այժմ էլ լսիր նրա ճառերը, նա այլ ևս համալսարանում չէ՝ այլ կեանքի մէջ է։ Ես այս կեանք բառը ՝ իզուր մտաբերեցի, որովհետև դա կտրում է իմ նամակիս թելը։ Ընկեր, չէոր մենք ազնիւ էինք, մենք մաքուր էինք խղճով, չէոր մեր իդեալները եթերի պէս պարզ էին ու լուսակ, այն քնչ եռանդով մենք լափում էինք գրքերից սէր լոյս և գիտութիւն։ Որքան աւելանում էր մեր գիտութեան շրջանը, այնքան աւելի խորարմատներ էին ձգում մեր մէջ մեր իդեալները, ընդարձակվում էին մեր նախագծերը։ Մեր միտքը կամաց սկսում էր թանձրանալ, մենք ոգևորվում էինք անմահ Շեկսպիրի, Շիլլերի, Գէօթէի, Տուրգենեվի գրուածներով։ Կարդում և քննադատում էինք փիլիսոփայական և քաղաքատնտեսական հեղինակութիւններ և նրանց սաածից աւելին մենք երևակայում էինք։ Է՜հ, ինչ և իցէ մենք շատ երջանիկ էինք։ Եկաւ այնտեղ, երբ մենք մեզ կատարեալ էինք համարում ամեն կողմից։ Ես երբեք չեմ մոռանում այն օրը, և կարծեմ ոչ ոք չի մոռանալ կեանքի այդ մի օրը։ Այն օրերը յիշում ես, մենք յաճախ կրկնում էինք մեր սիրելի Ռուս բանաստեղծ Некрасовъ-ի ոտանաւորը, որ նրա մահուան օրը բերան տրինք և միշտ կրկնում էինք։

Հողմը դադարեց։ Կրկին ծանրացաւ ինձ համար մթնոլորտը. այլ ևս ոչինչ չեմ կարող գրել քեզ։ Սլացաւ աչքիս առաջից անցեալ պատանեկան կեանքը և եկաւ աչքիս առաջ այժմեան իսկական կեանքը իրեն ամեն յատկութիւններով։ Դու Եկատերինոսլաւումն ես և ոչինչ չես գրում։ Արդեօք այդ տեղի մթնոլորտն էլ այստեղինի նման է, այդ տեղ դու մաքուր օդ ես ծծում։ Այդտեղ էլ կեանք ասած բանը կայ։ Հանդամանքներ կան։ Ինչպէս են կարծում այդտեղ, արեգակը լոյս է տալիս թէ՝ չէ։ Ծովի ջուրը դառն-աղի է՝ թէ քաղցր։ Պատահում է որ մէկ օրուան մէջ քո կացած քաղաքում ամենքն էլ հարբած լինեն։ Գուցէ մի օր ինձ էլ յաջողուի դէպի այդ կողմերը գալ։ Ես եկայ մինչև ծովի ափը, և ծիծաղում էին ինձ վերայ, որ ես եկել եմ ծովի մօտ միայն ծովը տեսնելու։ Համարը Ողորմելինեբ։ Անշուշտ դու կ՚համա-

ձայնուիս որ ես ծովի մէջ շատ բան եմ տեսնում. ապա այն ալիքն ու փրփուրը, այն ըմբոստ ջրային լեռները, որ վիշապի նման գալարուած բարձրանում են և ահագին դղրդոցով իջնելով՝ պատռում անսահման ջուրը։ Իրենք պատռում են և իրենք էլ միլիոնաւոր կաթիլներ դառնում ու ցրվում ամեն կողմ։ Սատիկ ցանկութիւն է ծագում մէջդ մտնել այդ անսահման ջրային աշխարհի մէջ, ալիքի հետ բարձրանալ մինչև նորա գագաթը, բռունցքով ցրուել նորան և հետը իջնել մինչև անդունդը ու անդադար լողալ ու մրցել, բայց դու ինձ կասես որ ջուրը կ՚խեղդի։ Հապա ի՞նչպէս էիր ուզում, որ չխեղդէ։ Միամիտ ընկեր, մարդու հետ խօսում ես նա քեզ խեղդում է՝ ուզում ես որ ջուրը ազատ թողնի քեզ։ Այդ անկարելի է։ Բայց գուցէ քո տեղդ այդպէս չէ։ Նամակս երկարացաւ և դու նեղացած կլինես որ ես մեր առօրեայ կեանքից ոչինչ տեղեկութիւն չտուի. դու անշուշտ նիկարանկլինես։ Միշտ ուզած ժամանակներս պառկում ենք և վեր կենում։ Տօլմա, փլաւ, մլաւ ի՞նչ որ ուզենք ուտել, ընտրութիւնը մեզանից է կախուած։ Մեզանում այժմ ամենաէին ձիւն չէ գալիս, որովհետև անտառները բոլորը ամենայն խնամքով կտրտուել են։ Ոչինչ, եթէ հացը փոքր ինչ թանգանում է. փայտը, ածուխն էլ ճարուածը մի քիչ թանդ է բայց վնաս չունի, լաւ բուլկի ու պերոժնի ճարվում է։ Մեր քաղաքացի մի հարուստ մարդու 18,000 բուբլին Սկոպինսկի բանկում մեռաւ, ասում են բանկի շինութիւնը մեծացնելու համար ծախքի պատրաստութիւններ տեսնելու համար թեթև ծախքեր են կամեցել անել. բայց դա էլ նշանակութիւն չունի, որովհետև միայն նորանը չէ կորել, ուրիշ շատերինն էլ է կորել, գոնէ նրա սիրտը գորանով կմխիթարուի։ Եթէ գրականական զբաղմունքների համար հարցնես՝ մի խօսքով պէտք է պատասխանեմ— որ մենք այժմ այդպիսի դատարկ բաներով չենք զբաղվում։ Ուտել, խմելու, հագնելու կողմից ազատութիւն, քիթ ու պռունկ չարդելու կողմից—եղբայրութիւն և անգործութիւն կողմից, հաւասարութիւն ամենակատարեալ։ Ո՛ղջ լեր—։

Քո ընկեր.

# ՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ

(Արևելեան Մամուլի մէջ «Գործի» մասին տպուած յօդուածի առիթով։)

Զմիւռնիայում հրատարակուող «Արևելեան Մամուլ» ամսագրի յունիս ամսեան (1882 թ.) տետրակում տպագրուած է մի յօդուած՝ «Իմ նամակները» վերնագրով։ Յօդուածագիրը բարեհաճել է զբաղուել իմ անձնաւորութեամբ ու «Գործ» ամսագրով։ Յօդուածի ստորագրութիւնն է «Յարոյ»։

Սկզբում ես չէի հասկանում՝ թէ ինչն է ստիպել պ. Յարոյին ուշադրութիւն դարձնել մի ամսագրի վրա, որ դեռ լոյս չէր տեսել այն ժամանակ (յօդուածը ապրիլի 15-ից է, իսկ «Գործի» I №-ը լոյս է տեսել մայիսին) և չանալ ցեխոտել մի անձնաւորութիւն, որ բոլորովին անծանօթ է իրեն և նոր է ձեռնարկում մի հայասիրական գործի։

Բայց երբ պ. Յարոն սկսում է խօսել մի ուրիշ յայտնի անձնաւորութեան վրա և համեմատում է իմ ստորութիւնը այդ անձի բարձրութեան հետ և իմ հրատարակած ամսագրի վատութիւնը «Փարձ» ամսագրի առաւելութեան հետ, այն ժամանակ ամէն բան բացատրվում է։ Թէև պ. Յարոյի նամակի ձգտումը Ռուսաստանի հայ քաղաքներում, մանաւանդ Տփխիսում, շատերը վաւ կ'հասկանան, բայց այստեղ էլ «Գործի» հետ ծանօթ չեղողներին կարող են արդար երևալ նորա խօսքերը՝ հեռաւաբար և վնասել, առանց էն էլ վնասուած... մի հայ ամսագրին։ Անցնենք նորա նամակին։

—...«Ահա տեղիս լրագիրները բաւական ժամանակ է, որ յայտարարում են, թէ... (քնչ են նշանակում այս կէտերը, պ՝արոն Յարոյ) այս տարի կսկսուի հրատարակուել «Գործ» ամսաթերթը... (էլի կէտեր !) Շու-

շի քաղաքում, Սիմէօն Հախումեանց անուանեալ անյայտ մի երիտասարդ պարոնի խմբագրութեամբ «Փորձին»—գործ դառնալ բարեմաղթող բարեկամս բոլորովին ապահով է որ իւր ցակութեան և բարեմաղթութեան հետ ոչինչ կապ և նմանութիւն չունի այս նորածին կոչուելուն, որ մինչև այսօրուայս աշխարհ չ'տեսաւ (պատճառը չ'դիտէք, պ. Յարոյ։ միամիտ էք, թէ՞ պարծենում էք)։ Եւ իրաւ, ինչ նմանութիւն (ինչ ասել կուզէ) կարող է ունենալ։ Եթէ «Փորձ» ամսագրին բարեմաղթութիւններ էին անում և այժմ էլ անում են, եթէ փափագում էին (ինչ քնքոյշ բառեր էք գործածում Փորձի համար), որ նա իբրև ազգային հանդէս՝ կարևոր ուշադրութիւն նուիրէ առաւելապէս մեր ներկայ կեանքին ու կացութեանը (գոնորարի մասին) պատճառը այն է, որ յիշեալ ամսագրի մտաւոր (չաւ սիրտ ունիք, ճշմարիտ) և նիւթական ունևոր վիճակը (ձեզ ամենակարևորը) կարող էր կատարել ժամանակիս այդ պահանջը։—Իսկ այդ նոր հրատարակուելի «Փորձի» նկատմամբ, ի հարկէ անկարելի է միևնոյնը ասել (ի-հարկէ), վասն զի որքան պ. Աբգար Յովհաննիսեանը (հանելուկը բացատրվում է) իր բոլոր հմտութեամբ, իր ուսումով և փորձառութեամբ, իր աշխատակիցների գրական առաւելութեամբ (Յարոյ) համեստ մի վերնագիր էր տուել իր հանդիսին «Փորձին», նոյնքան վերոյիշեալ Հախումեան անուանեալ պարոնը, որ զարգացմամբ ամենևին չի կարող համեմատուել պարոն Աբգար Յովհաննիսեանի հետ (ճրաւ), մեծամիտ և գրեթէ յանդուգն (ինչու էք քաշվում, ուղղակի ասացէք յանդուգն) անունով է իջանում հայ գրականութեան ասպարէզ, ուր ինչպէս ինքն էլ խոստովանում է իւր «նամակ «Մշակի» խմբագրին» ծանուցման մէջ—անսովոր մի հիւր է և մի խամ պատանի»։

Այս տողերի հեղինակի մէջ իսկոյն ճանաչվում է գրականակաս պրիկաշչիկներից մէկը, որոնք մեր մէջ սկսեցին երևալ «Փորձը» հրատարակուած օրից։ Այժմ դիմում ենք պ. Յարոյին՝ մի քանի խօսք ուղղելու նորան։

Մենք արդէն սկզբում նկատեցինք, թէ ինչպէս անմարդասիրութիւն է խօսել մի անձնաւորութեան վրա, որին ամենևին չէք ճանաչում և ձեր խօսքերը մէջ բերինք, որ ընթերցողը կարդալով հանկարծ այն շարժառիթը, որը ձեզ թելադրել է գրել մի այդպիսի նամակ: Ով չի տեսել յարձակողական նամակներ, կրիտիկա, պոլեմիկա, բայց դաքա ամենքն էլ, ի հա[illegible] արժանաւորները, իրենց օրինաւոր պատճառներն են ունեցել: Իսկ այստեղ, յանկարծ մութ անկիւնից դրականութեան մի անկոչ պաշտպան դուրս է գալիս, գոռում է մեր երեսին. «Դու ով ես, որ ամսագիր ես հրատարակում. չգիտես որ այդ իրաւունքը միայն Աբգար Յովհաննիսեանին է պատկանում. դու վկայական ունիս և այլն»:

Հարցնում ենք ձեզ, ա: Յարոյ. ով տուաւ ձեզ դրականական մոնոպոլիան. կամ ով տուաւ ձեզ իրաւունք չափել իմ գիտութիւնը, քանի որ դուք նորան ծանօթ չէք: Դուք գիրծնական մարդ էք, լաւ ըմբռնել էք որ ծառան իրեն տիրոջը պէտք է պաշտպանէ; բայց ինչու էք ինձ վրա յարձակվում՝ միայն նորա համար, որ ես «յանդգնում եմ» ամսագիր հրատարակել:—Դուք կարծում էք որ պ. Ա. Յովհաննիսեանը առելի զարգացած պէտք է լինի, քան թէ Ս. Հախումեանը: Իմ երևսը երբ էք տեսել, ինձ երբ էք քննել: Ինչ նշանակութիւն ունի իմ և Աբ. Յովհաննիսեանցի արած ձեր համեմատութիւնը. ինչու համար մի նշանաւոր հրապարակախօսի չէիք առաջ բերում իմ ոչնչութիւնը առելի պարզ ցոյց տալու համար: Օրինակ: դուք գիտէք՝ որ եղել է Պրոֆէսսոր Ստ. Նազարեանց, կան այժմ Արծրունի և Մամուրեան. ինչու անպատճառ «Փորձն» ու «Գործն» էք հակադրում միմեանց և ոչ դրանցից մէկի «Հիւսիսափայլի» կամ «Արևելեան Մամլոյ» հետ. դուք եթէ Տաճկատանցոց խաբէք, Ռուսատանցոց էլ խօ չէք կարող խաբել, պարոն:

Դուք լսել էք՝ որ մի ամսագիր պէտք է հրատարակուի Շուշում, չէք ճանաչում նորա ոչ մի աշխատակցին և ոչ էլ խմբագրին (այնպէս է երևում ձեր խօսքերից) և յանկարծ թոյլ էք տալիս ձեզ յարձակուել ամսագրի ազնիւ, նրա աշխատակիցների և խմբագրի անձնաւորութեան վրա:

ենթադրենք թէ, լսած լինէիք որ ես 20—25 տարեկան երիտասարդ եմ և դրանից եզրակացնէիք, որ պէտք է անպատճառ 40 տարեկան դառնամ և յետոյ իրաւունք խնդրեմ զրականութեամբ պարապելու։ Լաւ, բայց պարոն, «Գորձի» աշխատակիցների վրայ ինչ դաղափար ունէիք որ շոշափում էիք նորանց պատիւը։ Դուք կարող էիք շատ մօտ ճանաչել «Գորձի» մշտական աշխատակիցներին, որոնց անունները մեզ էլ յայտնի են, բայց դուք ճանաչում էիք կամ այժմ ճանաչում էք «Գորձի» աշխատակիցներին։ Կրկնում ենք։ Դուք ճանաչում էիք դոցա, որ ասում էք թէ «Գորձի» աշխատակիցները զրական առաւելութիւն ունին (դրանց վերայ)։ Եթէ ճանաչում էիք, ասախօսութեան նախատինքը ձեզ ընաական է։ իսկ եթէ չէք ճանաչում (ձեր խօսքերից այդպէս է երևում) ինչպէս էիք նրանց դատում ու քննում։ Պարոն, չէ՞որ մարդիկ կան, որոնք պատուոյ զգացմունք ունին։ Բայց Փարիզում այնքան էլ չ՝սովորեցիք թէ ազիտութեան և վատութեան նշան է յարձակուել անծանօթ, խաղաղ և զբաղուած անձինքների վրայ։

Դուք, պարոն, ամենայն տեսակ խորամանկութիւններ բանեցնելուց յետոյ ասում էք. —«Յարմար առթին կարող եմ օգուտ քաղել ընթերցողին ներողամտութիւնից և խօսել նրան իմ ասելիքը։ Ուրեմն ապասենք (լաւ սպասեցիք, շատ) վերոյիշեալ ամսագրի առաջին տեսրի հրատարակուելուն, որ ինչպէս լսելէի շուտով լոյս պիտի տեսնէ։. . »(Ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրում ենք պարոն Յարոյի գործածած բաղմակէտերի վերայ)։ Թոյլ տուէք պ. Յարոյ, որ ձեր վերջին խօսքերը կապենք ձեր հետևեալ խօսքերի հետ։. . կարող է պատահել, որ մի վայրկեան յաջողութիւն ունենայ («Գործ») և այդ վայրկեանը լինի լուսաւոր վայրկեաններից (moments lumineux)։

Պարոն, դուք զարմանալի գուշակութիւն էք արել. դուք ինձանից առաջ էք իմացել, որ «Գործը» միայն մի լուսաւոր վայրկեան է ունենալու։ այդ գուշակութիւնը ինձ սորպում է ձեզ վերա փոքր ինչ գործնական աչքով նայել, ինչպէս նայում են բոլոր սրգոտների վերա։ Ի՞նչպէս կ՝բացատրէք հետևեալը, օրինակ՝ եթէ մէկը մի նոր տուն շինի և ես առանձին մէկի

մօտ կամ հրապարակաւ տանտիրոջը հայհոյելով գուշակեմ, որ այդ տունը քիչ ժամանակից յետոյ այրուելու է և իմ այդ գուշակութիւնս հէնց տունը վերջացած օրը կատարուի և տունը այրուի, դուք ինձ ինչ կասէք այն ժամանակ։

Ինձ «անսովոր մի հիւր կամ խամ պատանի» ճանաչելուց յետոյ և մի քիչ ներքև զանազան ածականներ շարելուց յետոյ՝ տալիս էք։ «ամեն աք ազատ համարձակ, ա ռ ա ն ց ա ն ց ա թ ղ թ ի (պ. Յարոյին միանգամայն վայել ոստիկանական ոճ է) կարող է խմբագրի դժուար և փափուկ անունով անցնել և պ ա տ գ ա մ ն ե ր ը ո ր ո տ ա լ Սինա սարից Իսրայէլի տառապեալ ժողովուրդը փրկելու համար»...

Ձեր դատողութիւնները և փիլիսոփայութիւնները ձեզ մնալ, ազատ էք, պահպէք։ Ձեր ածականներին ես վերը պատասխանեցի. միայն ձեր և ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրում եմ ձեր վերջին խօսքերի վրա—«պատգամներ որոտալ Սինա սարից, Իսրայէլի տառապեալ ժողովուրդը փրկելու համար»...

Ես ինչ պատասխանեմ այդ խօսքերին. դուք կարծում էք որ չի հասկացվում ձեր ասածը, դուք որ «Գործի» ոչ մի համարը չէք տեսել (?), այս ինչ էք գրում։ Ասացէք, պ՛ն, դուք ինչ անուն կտաք այդպէս գրողին։ Ի՞նչ էք կարծում, ես կը քաշուիմ ուղիղ յատկանիշ բառն ասելուց։ Ո՛չ։ Բայց մեր է հայերի մէջ հասարակական կարծիք, որի վրա յենուելով՝ դրօշմէի ձեր ճակատին ձեր իսկական անունը։ Ես էլ «կ՛ապասեմ յարմար առթին» և շրջապատողների նեղողամտութիւնը խնդրելով՝ կասեմ ձեզ այն ինչ որ կ՛հաստատուի հրապարակաւ...

Մենք եթէ «Մշակի» խմբագրին ուղղած նամակի մէջ խոստովանել ենք, որ նոր ենք դուրս գալիս գրական լայն ասպարէզ, ճշմարիտն ենք խօսել և կատարել ենք մեր սրսրտքը։ Եւ եթէ դուք կարդացել էք իմ այդ նամակը և հասկացել էք, նրա մէջ անշուշտ տեսած կ՛լինէք թէ սրքան խոր և կծու արհամարհանք կայ դէպի տիրացութիւնից մինչև բուրժուազիայի ծառայի ատիճան բարձրացողները, դէպի նոյն իսկ բուրժուաները և դէպի սուտ ինտելիգենցիան։

Դուք կարծում էք, որ ես պէտք է համաչէի ինձ այնպէս ցոյց տալ, ինչպէս որ կամ։ Դուցէ մինչև անգամ դուք կարծում էք՝ որ ես կամաչեմ ասել՝ թէ մի բուրժուայի ազդեցութեամբ ես մերժումն ստացայ Տփխիսի հայ դպրոցներից և հրաւիրուեցայ օտար դպրոցներ։ Դուցէ կարծում էք թէ պիտի ամաչեմ խոստովանել, որ սովոր չլինելով ստրկանալ, ոտքեր լիզել, ես շարունակ ուզեցի ամիս անգործ և առանց որոշ պարապմունքի մնացի։ Թող ուրիշները ամենափառաւոր կերպով գլուխ տան, ուրիշի կաշուի մէջ ապրեն, ինձնից ինչ իրաւունք ունին միւսնոյնը պահանջելու։

Մենք երջանիկ կլինէինք, եթէ ապրէինք այնպիսի հասարակութեան մէջ, ուր թէև ամեն բան անկարգ և անկանոն լինէր, բայց ամէն մի մասնագիտութեան համար բարեխղճաբար պատրաստուած անձինք այնքան շատ լինէին և այնքան յարգուած, որ բոլոր գործերը նրանց յանձնուէին. այն ժամանակ մենք ձեռները ծալած՝ յետ կ'կանգնէինք, կ'խոնարհէինք և կլսէինք գիտութեան, լուսոյ և եղբայրութեան պատգամը և նրանց կ'գործադրէինք կեանքում։ Իսկ այժմ բաւական չէ ձեր արածը, ուզում էք որ լռենք և ասպարէզը ձեր պատրօններին և ձեզ թողնենք։ Դուք դորա համար միջոց էք գտնում —բարեկամ լինել այն անձանց հետ, որոնք ամենաստոր միջոցներով իրենց ձեռք են ձգում հասարակական հիմնարկութիւնների ու գործերի ղեկը. դուք այդ անում էք ձեր անձնական շահերի համար, մինչդեռ հասարակական շահերին զոհուած անձինք սոսկալուած են ձեռք թափ տալ, թքել ամեն բանի վերայ և հեռանալ անքող քաղցի ու ծարաւի տակ։

Դուք մի առանձին ուրախութեամբ կարծում էք, որ «Գործը» կմեռնի։ Այդ կողմից կարող էք փոքր ինչ անհանգիստ լինել։ «Գործը» չի մեռնիլ. էն փուդով ծախուող ամսագրերն են մեռնում։ Որքան մութ անկիւններից ձայներ լինին, «Գործը» գնալու է իրեն ճանապարհով և նորան հանգամանքները կարող են միայն ժամանակաւորապէս դադարեցնել, բայց երբէք շեղել իրեն ուղիղ ճանապարհից։ Մի-

այն առանձին անակնկալ հանգամանքները կարող են դադարեցնել «Գործը»։ Բայց այս էլ իմացէք, պ. Յարոյ որ հզօր կաղնին մի օր քամու առաջ ճարճատումով կ'կոտրուի. բայց աւելի լաւ է լինել յամառ կաղնի, քան թէ կակուղ եղեգն դառնալ, որ ֆրանտը քեզ կտրի և իր ձեռնափայտը շինի։

Սիմէօն Հախումեանց

---

## ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ։

Այս օրուայ օրս Հայերի մէջ մամուլի տեսութիւն գրել—նշանակում է Կաթողիկոսութեան խնդրի վրայ խօսել.—մենք էլ խոյս չենք տալ մեր պարտականութիւնից և կ'խօսենք այդ մասին։ Կաթողիկոսական հարցի առթիւ, իսկապէս երեք խնդիրներ յարուցվեցան—առաջին, Պոլսոյ Ժենիայի փոփոխութեան խնդիրը։ Կովկասի մամուլը անտեղի երկիւղից, թէ գուցէ մի այլ պատճառով—չէր քննում այդ խնդիրը. նորան արծարծել էին միայն Պոլսոյ և եւրոպական թերթերը—մասամբ և մայրաքաղաքի ռուսաց մամուլը։ Բայց վերջը ամենքն էլ, կարծես այն մտքի եկան՝ որ Պոլսոյ Ժենիայի խնդիրը չպէտք է շփոթել կաթողիկոսի ընտրութեան խնդրի հետ և եթէ հարկաւոր էլ է այդ Պոլսոյ Ժենիայի մի քանի կէտերի փոփոխութիւն, դա պէտք է թողնել ապագային—երբ կաթողիկոսն ընտրուի։ Լաւ ու խելացի կաթողիկոսը կարող կը լինի ներկայացնել Կառավարութեանն, փոփոխելու Պոլսոյ Ժենիայի մի քանի դրութիւնները, որով եկեղեցւոյ և Կառավարութեան յարաբերութիւնները աւելի կը պարզուէին և կհամապատասխանէին թէ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ ոգւոյն և թէ աշխի առաջ ունեցած կը լինէին Տաճկա-Հայերի և Պարսկա-Հայերի շահերն և օգուտները։ Վերջ ի վերջոյ Պոլսոյ Ժենիայի խնդիրը այժմ, կարծես թէ թողուած է։ Աւելի կարևոր էր երկրորդ խնդիրը—ընտրութեան եղանակի մասին։ Այս խնդրում Տաճկաստանի մամուլը զարմանալի անիրաւաբար է վարվում մեզ՝ Ռուսաստանցիներիս հետ։ Նա, բացի միայն «Արևելեան մամուլ», որը խոստովանել էր թէ՝ կաթողիկոսութեան ընտրութեան խնդրում Ռուսաստանցիներին պէտք է աւելի նշանակութիւն և ձայն տալ—միւսներն ամենքն էլ սկզբում 66-ի ընտրութեան ձևն էին

պաշտպանում։ Դալով մեր Կովկասի հայ մամուլին, այստեղ էլ մենք երկու բանակ ենք գտնում.—պաշտօնական «Արարատը», «Մեղուն» և «Նոր-Դարը» պահանջում են՝ որ ընտրութիւնը կատարուի Էջմիածնում՝ իսկ «Արձագանք» և «Մշակ», թէև 66-ի ընտրութեան ձևի կատարեալ պաշտպան չէին՝ այնուամենայնիւ ցանկանում էին՝ որ ընտրութիւնը Պոլսում կատարուի։ Այստեղ մի քիչ կանգ առնենք։ Ընտրութեանը եղանակը պրինցիպի խնդիր է։ «Հատ Ներսէսներ և Խրիմեաններ կը գան ու կը գնան, բայց Հայաստանեայց եկեղեցին միշտ հաստատուն կը մնայ», ասում է Մեղուն և շատ ճշմարիտ է խօսում։ Կրօնական տեսակէտից—ի՞նչ է Պոլիս՝ եթէ ոչ Էջմիածնի հեռաւոր թեմերից մէկը։ Ի՞նչ է Ազգային Ժողով—եթէ ոչ մի քաղաքական ժողով՝ որի ձեռքն էր անցել նախկին Տաճկաց Կառավարութիւնից հաստատուած Պոլսոյ Պատրիարքի իրաւունքների մի մասը, իսկ Պոլսոյ Պատրիարքը՝ կաթողիկոսից յետոյ, Հայաստանեայց եկեղեցւոյ երարխիայում միայն երրորդ տեղն է բռնում. երկրորդը պատկանում է Երուսաղէմայ Պատրիարքին։ Ի՞նչ յարաբերութիւն ունի Պոլսոյ Ազգային Ժողովը՝ որը Տաճկաստանի մի պետական հիմնարկութիւն է հայ եկեղեցու հետ։ Ի՞նչ կասէիք ընթերցող՝ եթէ մենք Ռուսահայերս—զէմստվօ (տեղական ինքնավարչութիւն) ունենայինք և մէկն առաջարկէր՝ որ այդ զէմստվօներն ընտրէին ամենայն հայոց կաթողիկոսին։ Բայց այժմ մեր մամուլի մի մասը, կարծես թէ, այս հակասութիւնը չէ տեսնում... Չէ՞ տեսնում... Շատ լաւ տեսնում է, ընթերցող՝ բայց պրինցիպներից զուրկ լինելով, ընդունելով՝ որ նպատակը սրբագործում է միջոցները—նա իրեն թոյլ է տալիս պրինցիպը ոտնակոխ անելու։ «Մշակը» և «Արձագանքը» լաւ գիտեն՝ որ Էջմիածնայ ընտրութեան դէմ լինելով նոքա մեղանչում են Հայաստանեայց դարաւոր Առաքելական եկեղեցւոյ կանոններին և օրէնքներին։ Բայց նորանց համար աւելի կարևոր է մոտակայ անցողական նպատակը։—«Մշակը», «ինչ որ ուզում է լինի, մնածում է, միայն թէ Մակարը կաթողիկոս չլինի», «Արձագանքն» էլ մի քիչ ուրիշ տեսակէտ է մնածում. «ինչ որ ուզում է լինի, միայն թէ Ներսէսը կաթողիկոս դառնայ»։ Մենք չենք կարող սրտանց չպախարակել «Արձագանքի» այդ եզուիտական սկզբունքը՝ պրինցիպի բացասելն, որ ընդունել է նա։ Մեզ, ընթերցող, ընտրողական սկզբունքը աւելի է հետաքրքրում, քան թէ ընտրուողի անձնաւորութիւնը, որովհետև դա ժողովրդական իրաւանց խնդիր է։ Հայոց հին եկեղեցւոյ աւանդութիւնը միջոց է տալիս ընտրութիւնը այնպէս կատարել՝ որ ժողովրդի իսկական ցանկութիւնը պարզ յայտնուի և իրագործուի։ Իսկ 66-ի ընտրութեան եղանակը բռնաբարում է թէ Էջմիածնայ և թէ ժողովրդի և գաւառների իրաւունքները։ Խնդիրը միայն նրանում չէ, թէ որտեղ է կատարվում

ընտրութիւնը։ Էջմիածնում թէ Պոլսում։ «Անհասանելի կամքն Աստուծոյ է ընտրում ամենայն Հայոց կաթողիկոսը, ուստի այդ ընտրութիւնը պէտք է Էջմիածնում կատարուի աղօթքներից և մաղթանքներից յետոյ և ոչ թէ Պոլսում»—այսպէս է խօսում «Մեղուն»։ Մի ուրիշ խնդիր էլ կայ. ի՞նչու Տաճկաստանի ամեն մի թեմ ինքը չէ ընտրում իւր ներկայացուցիչը՝ այլ ստիպուած է իրեն ներկայացուցիչ ղրկել իւր կաթողիկոսութեան պատգամաւոր, անպատճառ Պոլսից։ Ահա ինչով է բռնաբարվում ժողովրդի իրաւունքը։ Գուցէ մեզ ասեն՝ որ Պոլիսը աւելի լուսաւորուած է՝ աւելի կենդրոն է՝ այնտեղ լուսաւոր մարդիկ աւելի կան և այլն։ Բայց առաջինը՝ ամեն մի թեմ աւելի հեշտութեամբ կարող է իւր միջից երկու արժանաւոր մարդ գտնել՝ քան Պոլիսը իւր միջից 130 մարդ։ Երկրորդ՝ ոչ ոք չէ արգելում թեմին՝ եթէ իւր միջին արժանաւոր մարդ չեղաւ՝ ընտրել էլի հէնց նոյն իսկ Պոլսեցիներից։ Ահա օրինակ՝ Վարաբաղը իրեն ներկայացուցիչ ընտրել է պ. Պողոս Մելիք-Կարակոզեանին՝ որ ապրում է այժմ Թիֆլիսում։ Ախալքալաքը ընտրել է Թիֆլիսեցի պ. Գր. Արծրունուն։ Բայց բանը նրանումն է՝ որ այդ գաւառներն իրենք են ընտրել իրենց աղատ կամքը և ոչ թէ ստիպուած են եղել այդպէս անելու։ Վերջապէս այստեղ իրաւունքի խնդիր է։ Ի՞նչ անենք՝ որ Պոլիսն աւելի զարգացած է։ Մի-թէ լոկ միայն այդ պատճառաւ նա պէտք է զրկէ գաւառներին իրենց իրաւունքից.—առանց այն էլ գաւառը իրաւազուրկ է և ահա մեր «ազգասէր»-ները իրանք էլ սկսում են մի կողմից բռնանալ գաւառի և ժողովրդի իրաւանց վրա.... Էլ ի՞նչու ենք մենք օտարների մեր վրա գործած բռնութեան մասին խօսում՝ երբ մեր ընտանեկան բռնութիւնն աւելի սաստիկ է։ Ինքնավարչութիւնը միայն կարող է ինքնավարչութիւն սովորեցնել. ի՞նչու մենք զրկում ենք ժողովրդին իւր ինքնավարչական իրաւունքների թոյլ նշոյլներից՝ ի՞նչու ենք բռնանում նրա ընտրողական իրաւունքների վրա։

«Սինոդն իւր կողմից՝ վանքի միաբանութիւնն իւր կողմից կատարելով իրենց պարտականութիւնը և Առաքելական Հայաստանեայց եկեղեցոյ իրաւանց պաշտպան հանդիսանալով՝ հրաւիրել էին Տաճկաստանի թեմերին մասնակցել կաթողիկոսի ընտրութեան ընտանեաց Հայաստանեայց եկեղեցոյ աւանդութեանց։ Մանաւանդ լաւ հոգւով և սիրողարար էր գրուած միաբանութեան 30 ստորագրութեամբ գրած նամակը։ Բայց Պոլսոյ վարչութիւն և Պատրիարքարան յոռի կերպիւ պատասխանել էին և էլի շարունակել էին՝ ինչպէս ասում են՝ իրենց էշը քշել և 66-ի ընտրութեան եղանակը պաշտպանել։ Կաթողիկոսական ընտրութեան եղանակի խնդիրը շատ լաւ երևան են հանում թէ Պոլսոյ պատրիարքի և թէ ազգային վարչութեան ստրկական բնաւորութիւնը։ Նոքա ստրկանում են՝ երբ

գործերն ոյժի հետ են լինում։ Նոքա այսօր պատրիարք են հրաժարեցնում և էգուց էլի նրան միաձայն և ոգևորութեամբ պատրիարք նստեցնում—հէնց որ բարձրից մի նշան, մի էյհամ են լսում, բայց այնտեղ, ուր արտաքին ոյժ չկայ, ուր ճիպոտ չկայ նոցա գլխին, նոքա զարմանալի կամակոր և համարձակ են դառնում։ Այդ յատկութիւնը ստրկութեան ապացոյց է. ուրիշ ոչինչ։ Մենք շատ լաւ գիտենք, որ ներկայումս մամուլի ոյժը և ազդեցութիւնը մեծ չէ. բայց մեր սրբազան պարտականութիւն ենք համարում բարձրաձայն բողոքել Պօլսոյ ընտրողական առանձնաշնորհութիւնների դէմ։ այդ իրաւունքը—գաւառներին և Էջմիածնին է պատկանում։ Մենք անիրաւ և անաղնիւ ենք համարում Պօլսոյ մամուլի բռնած հակագաւառական, հակաժողովրդական ընթացքը։

Նորերումս Պօլսոյ լրագիրները լուր բերին, որ Ազգային Ժողովը ռուսաց դեսպանութեան պահանջին զիջանելով, համաձայնուել է որ ընտրութիւնը միայն Էջմիածնում կատարուի։

Ինչպէս Պօլսոյ լրագիրները հաղորդում են, ազգային Ժողովը խոհեմաբար պատասխանել է Ռուսաց դեսպանութեան, որ ինքը Պոլժենիային ընդդէմ ոչինչ չունի և գոհ կը լինի, եթէ միայն իւր առաջարկած երեք կաթողիկոսացուներն քուէարկուին։ Թէև այս պահանջն էլ սկզբունքով անիրաւացի է, բայց մենք յոյս ունենք, որ այս անգամ Սինոդն և Միաբանութիւնն ազգային ժողովի քէֆին չդիպչելու համար, կը համաձայնին այս պայմանին, մանաւանդ որ չորրորդ թեկնածուն—Մակար Սրբ. ինչպէս լսում ենք, հրաժարական է տուել կաթողիկոսութիւնից։ Այժմ Ս. Էջմիածնի վրայ բարոյական պարտաւորութիւն կայ, Տաճկաստանի թեմերի պատգամաւորների գալը հեշտացնելու համար, իւր վերայ յանձն առնել նոցա ճանապարհածախսը։

Գաւառների իրաւունքը միայն Տաճկաստանում չի բռնաբարվում, այլ և նոյն իսկ մեր երկրում, նոյն իսկ Թիֆլիսի թեմի մէջ, որը միւս թեմերին օրինակ պէտք է լինէր։—Ահա ինչպէս է կատարուել Թիֆլիսի թեմի ընտրութիւնը։ Թիֆլիս քաղաքում կայ 23 եկեղեցի. դոցանից ամեն մէկն ընտրել է 4 պատգամաւոր։ ուրեմն ընդամենը 92 պատգամաւոր կային միայն Թիֆլիս քաղաքից։ այն ինչ ահագին Գանձակը, Ախալքալաքը և միւս վիճակներն իրենց հարիւրաւոր գիւղերով և հազարաւոր եկեղեցիներով, միայն մի-մի ներկայացուցիչ ունէին թեմական պատգամաւորի ընտրութեան ժամանակ!!! Ուրեմն ներկայ ընտրութիւնը եղել է Թիֆլիսի և ոչ թէ թեմի ընտրութիւն։ Թիֆլիսը մենակ ունեցել է 92 ներկայացուցիչ, իսկ մի քանի հարիւր հազարաւոր թեմը միայն 13 ներկայացուցիչ!!! Եթէ ընտրութիւնը կանոնաւոր

լինէր—նա այն կէս չպիտի կատարուէր ինչպէս եղաւ, այլ Թիֆլիսի 92 ներկայացուցիչները պէտք է ընտրէին մէկին։ Եւ ահա այս Թիֆլիսի մէկ ներկայացուցիչը Թէմի միւս 13 ներկայացուցիչների հետ միասին, պէտք է ընտրէին մի Թէմական ներկայացուցիչ։ Այսպէս է կատարուել և ներքին Ռուսաստանի ներկայացուցիչ պ. Ներսիսեանի ընտրութիւնը։ Այսպէս լինելուց յետոյ, մենք փոքր ինչ ծիծաղաշարժ ենք գտնում պ. Ա. Արասխանեանցի հետևեալ խօսքերը. «Թիֆլիսի և սորա հետ միասին մի քանի հարիւր հազար հայ բովանդակող մեծատարած Թէմը իր "օրինաւոր" և ամեն կրքից ազատ ընտրուած պատգամաւորների ներկայացուցչութեամբ մի ընտրութիւն կատարեց" (տե՛ս Մշակ № 40)։ Խնդ՚ Թիֆլիսի Թէմի ժողովուրդ! Այս դո՞ւ ես պատգամաւոր ընտրել պ. Աբգար Յովհաննիսեանցին։ Ի զուր չէ Հէրբինը քո բերանից խօսում. "Да мы не выбырали—мы только шары положили" (մենք չենք ընտրել, մենք միայն գնդակներ ենք գցել)։ Պ. Աբգար Յովհաննիսեանի ընտրութիւնը մենք այս հիման վրայ ի հարկէ անվաւեր ենք համարում։

Բայց անկասկած ամենից շատ զբաղեցնում է մամուլի մի յայտնի մասին «երրորդ» խնդիրը, ընտրուելի կաթողիկոսի անձնաւորութիւնը։ Մամուլի մի յայտնի մասին ենք ասում, որովհետև «Մեղուն» կարծում է, որ ներկայ պարագաներում ճիշտ կենսագրութիւններ գրելն անկարելի է և անյարմար, ուստի կաթողիկոսութեան կանդիդատի անուն նա չէ տալիս և ոչ մէկին չէ պաշտպանում։ Իւր ուղղութեան նա հետևեց մինչև այժմ, և ինչպէս երևում է, պիտի շարունակէ այսպէս մինչև վերջն էլ։ Այդպէս չվարուեց «Նոր-Դարը»։ Նա թէև սկզբում (№ 11, 13) նմանապէս կենսագրութիւններ գրելուն ընդդէմ էր, բայց դա երկար չը շարունակեցաւ, նա սկսեց կամաց-կամաց ակնարկութիւններ անել Ներսէս Սրբազանի դէմ, վերջապէս իւր 25 համարից սկսած կատարելապէս բացաւ իւր պաստը և սկսեց պաշտպանել իւր Թիկնածուին-Մելիքսեդէկ Սրբազանին։ Միւս երկու Թերթերն «Մշակ» և «Արձագանք», ընդհակառակը չափից դուրս բացարձակ օգուտ էին քաղում իրենց հակառակորդների լռութիւնից և իրենց առանձնական դրութիւնից։ Մեր կարծիքով կենսագրութիւններ գրելն շատ կարևոր է և այդ պէտք է անէր նախ և առաջ ինքը, պաշտօնական «Արարատը», որն ամենից աւելի ազատ պէտք է լինի կուսակցական ղգացմունքից։ Ճիշտ կենսագրութիւններ գրելը խնդիրը մեծապէս պարզում է և մեզ ծանօթացնում է անձնաւորութեանց հետ։ մամուլի պարտքն է միշտ պարզել առաջ եկող խնդիրներ և այդպիսով հեշտացնել ընտրութեան գործը։ Մեր խմբագրութիւններից, ի հարկէ ամենից լաւ տեղեակ է ընտրողների անձնաւորութեանց հետ—«Մեղուն» և նա մեծա-

պէս կարող կը լիներ նպաստել խնդրին, եթէ ընդունէր կենսագրութիւններ գրելու սկզբունքը։ Զենք կարող չ՝ափսոսել, որ «Մեղուն» այդպիսի սխալ ընթացքից ձեռք չի ուզում վեր առնել։ Օգուտ քաղելով «Մեղուի» և «Նոր-Դարի» ըռութիւնից, «Արձագանք» և մանաւանդ «Մշակ», բոլոր Մեղուականներին հրատարակեցին Մակարականներ (Մշակ № 19)։ Սորա դէմ բողոքեց պ. Սպանդար Սպանդարեանը (Նոր-Դարի № 21-ի մէջ։) Բայց պ. Սպանդարեանը բաւականացաւ միայն իւր անձի պաշտպանութեամբ, և ոչ թէ առ հասարակ "Մեղուական" անուանուող կուսակցութեան, որին անդամակցի անունից էլ այժմ կարծես թէ ամաչում է... մոռանալով... բայց այժմ սորա ժամանակը չէ։ "Ոչ մէկի թիկնածուութիւն չենք պաշտպանել, չենք էլ պաշտպանում. ով որ ընտրուի, մեզ համար ընդունելի է», ահա "Մեղուի" հայեցակէտը։ Հետևաբար Մշակը սխալվում էր, կարծելով թէ բոլոր Մեղուականները Մակարականներ են։ Այսպէս անուանուած "Մեղուականները" մի յայտնի թիկնածուի պաշտպան չեն։ Եթէ պ. Սիմէոնեանց գուցէ աւելի Մակարին ցանկանար, "Մեղուի" գլխաւոր աշխատակից պ. Յ. Գեղամեանց ջերմ Խրիմեանական է։ Եւ առ հասարակ «Մեղու»-ին մօտիկ եղող անձանց մեծ մասը Խրիմեան Հայրիկի կողմնակիցներ են. այսպէս օրին. պ. Ծերենց, պ. Եւանգուլեանց և այլն։ Մի մասն էլ կայ, որ գուցէ այդ երկուսի մասին (Խրիմեանի և Մակարի) հաւասարապէս ձայն կը տայ, ինչպէս օրին. պ. Գէորգ Աքիմեան, պ. Պետրոս Շանշեանց։

„Մշակն" իրեն համար աւելի պատուաւոր համարեց դաշնակցութիւն կապել բուրժուական "Արձագանքի" հետ։ Մենք գիտենք, թէ ինչպէս է միացել այդ դաշնակցութիւնը։ Դեռ անցեալ տարի "Մշակի" և "Արձագանքի" կողմնակիցներն մի քանի ժողովներ կազմեցին և իրենց համար "Հակամակարական" նշաբան ընտրեցին։ Այդ լրագրներից մէկը, որ աւելի ժողովրդական ազգասէրների բերան էր դարձած, իւր երկար—10—12 տարի գոյութեան ընթացքում—միշտ աւելի Խրիմեանի կողմնակից և պաշտպան է եղել։ Մենք չենք մոռանում, որ Մշակը Խրիմեանի պատրիարքութեան ժամանակ էլ, նրա պաշտպանն էր և յարձակվում էր նրա դէմ ինտրիգներ սարքողների վրայ։ Միւս լրագիրը, որը մի ժամանակ «Փորձ» անունն էր կրում, սաստիկ կողմնակից էր պապական անսխալական սկզբունքին և ջերմ պաշտպան էր Մակար Սրբազանին—բուրժուազիային յատուկ թեթևամիտ և անհաստատ աղատամտութեամբ, մոռանալով իւր հին համակրութիւններն այժմ Ներսէսական է դառել, ով գիտէ թէ ինչ դգացմունքներից դրդուած։ Ահա այդպէս մեր ազգասէրների այդ երկու ճիւղը—բուրժուազական և ժողովրդական, ունենալով ամեն մէկն իւր սեպհական թիկնածուն, հակամակարական մի դաշնակցութիւն կազմեցին և սկսեցին պաշտպա-

նել Խրիմեան Հայրիկի և Ներսէսի թիկնածութիւնն միասին։ Բայց երկու թերթերից ամեն մէկը վարվում էր իրեն յատուկ եղանակով։ «Մշակը» սկսել էր աղնուաբար պաշտպանել երկու թիկնածուներին էլ հաւասարապէս, իսկ «Արձագանքը» այդ դաշնակցութեան ժամանակ էլ երբէք իւր մասնաւոր հաշիւները չի մոռացել։ Նա բոլոր իւր գովասանքները շռայլել է Ներսէսին, մի գովասանական խօսք, մի կենսագրական նկատողութիւն չբերելով Հայրիկի մասին։ Հայրիկի վերաբերութեամբ նա միշտ կեղծել է։

Այսպէս թէ այնպէս, ներկայումս քանի որ Մակար Սրբազանի թիկնածութիւնը ասպարիզից դուրս է գալիս, այժմ այն «հակամակարական» կուսակցութիւնը, որ միացրել էր մինչև այժմ «Մշակին» և «Արձագաքին», այլևս չի կարող գոյութիւն ունենալ։ Այժմ խնդիրը մնում է միայն երեք կաթողիկոսացուների վրա— Ներսէսի, Խրիմեանի և Մելքիսեդեկի։ Վերջինիս կողմնակիցներն էլ, որոնք նմանապէս սաստիկ ընդդէմ են Ներսէսին, զգալով գործերի երկիւղալի դրութիւնը, այժմ իրենց գլխաւոր նպատակ են դրել— Ներսէսի կաթողիկոսութեան առաջն առնել։ Այդ թիկնածուի մեր մէջ միակ պաշտպան այժմ նմանանապէս աշխատում է միայն Ներսէսին ընդդէմ։

Վերջապէս Ներսէս և Խրիմեան—երկու կանդիտատներն են կաթողիկոսութեան։ Խօսք կարող է լինել թէ որի կողմին կմնայ երիտասարդութեան համակրութիւնը։ Մենք չենք կարող կասկածել երիտասարդութեան զգացմանց մէջ։

Այս բոպէիս ո՞վ է Ներսէսի կողմնակից—«Արձագանք» և «Մշակ»։ Ո՞վ է Ներսէսի հակառակորդ—«Մեղու», «Նոր-Դար» և «Գործ»։ Ո՞վ է Խրիմեանի հակառակորդ—ոչ ոք։ Ո՞վ է Խրիմեանի կողմնակից—ամենքը։

ԽՄԲԱԳԻՐ—ՀՐԱՏԱՐԱԿՈՂ ՍԻՄԷՈՆ ՀԱԽՈՒՄԵԱՆ

Дозволено Цензурою, Тифлисъ, 25-го Апрѣля 1884-г.

Тип. М. Вартанянца и К°.

## Մ Ե Ղ Ա Կ

Ամենօրեայ լրագիր քաղաքական եւ գրականական. Տարեկան գինն է 10 ռ. կէս տարուանը 6 ռ. հասցէն՝ Тифлисъ, Редакція „Мшакъ“.

Խմբ. հրատ. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Քաղաքական-գրականական լրագիրը հրատարակվում է Թիֆլիզում. Տարեկան գինն է 10 ռ. կէս տարուանը 6 ռ. հասցէն՝ Тифлисъ, въ редакцію газеты „Мегу Айастани“:

Խմբագիր ՊԵՏՐՈՍ ՍԻՄԷՈՆԵԱՆՑ

## ԱՐՁԱԳԱՆՔ

Գրականական եւ քաղաքական շաբաթաթերթը հրատարակվում է Թիֆլիզում. Տարեկան բաժանորդագինն է 5 ռ. հասցէն՝ Тифлисъ. въ редакцію еженедѣльной газеты „Ардзаганкъ“:

Խմբ. հրատ. ԱՐԴԱՐ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆՑ:

## ՆՈՐ-ԴԱՐ

Ամենօրեայ թերթը հրատարակվում է Թիֆլիզում. Տարեկան բաժանորդագինն է 10 ռ. վեց ամիսը 6 ռ. երեք ամիսը 3 ռ. 50 կ. հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“

Խմբ. հրատ. ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ:

## ԱՂԲԻՒՐ

Պատկերազարդ միամսեայ-հանդէս երեխաների համար: Հրատարակվում է Թիֆլիզում. Տարեկան բաժանորդագինն է 3 ռ. հասցէն՝ Тифлисъ. въ редакцію дѣтскаго журнала „Агбюръ“

Խմբ. հրատ. ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ:

## ԱՐԱՐԱՏ

Ամսագիր կրօնական, պատմական, բանասիրական եւ բարոյական. հրատարակվում է Վաղարշապատում: Բաժանորդագինն է Ռուսաստանում 4 ռ. Տաճկաստանում, Պարսկաստանում եւ Եւրոպայում 5 ռ. Հնդկաստան 6 ռ. հասցէն՝ Эчміадзинъ, въ Типографическій Комитетъ:

## ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ

Պատկերազարդ հաւաքածու բարոյական, քրիստոնէական, պատմական, ուսումնական, աշխարհագրական եւ այլ պիտանի գիտելեաց, մանկական վէպերի, մանրավէպերի եւ զուարճալի խաղերի:

Հրատարակվում է Կ. Պոլսում տետրառ տետր 15 օրը մի անգամ 16 երեսից բաղկացած: Տարեկան գինն է Ռուսաստանի համար 4 ռ.

Բաժանորդագրութիւնը Կովկասում ընդունվում է „Վարժարան“ ամսագրի խմբագրատանը:

Հասցէն՝ Պոլիս. Սուլթան համամ, Հօճա խան փողոց 14.

Հրատարակիչ՝ ՆՇԱՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ եւ Ս. ՏԷՕՎԼԷԹԵԱՆ:

## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԹԵՐԹ

Միամսեայ հրատարակութիւն, տարեկան գինն է 3 ռ. հրատարակվում է Երեւանում: Հասցէն՝ Эривань, въ Редакцію журнала „Гигіеническій Листокъ“

Խմբ. հրատ. ԵՓ. ԼԵՒՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆՑ:

# „ԳՈՐԾ“

## Գրականական, քաղաքական և Ազգային ամսագիր

## 1884 թ.

*Հրատարակվում է նոյն պրոգրամով և նոյն ուղղութեամբ։*

„ԳՈՐԾԻ“ իւրաքանչիւր համարը բաղկացած կը լինի 5—6 թերթից (80—90) երես, եւ դուրս կը գայ իւրաքանչիւր ամսի վերջում:

### Ցանկ.

Ա) Ժամանակագրութիւն. տերութեան կարգադրութիւններ. Ռուսաց, արտասահմանի եւ Կովկասի նորութիւններ:

Բ) Քննական յօդուածներ հայերի եւ նոցա դրացի ազգերի տնտեսական, բարոյական եւ մտաւորական դրութեան մասին:

Գ) Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, նկարագրութիւններ, ճանապարհորդութիւններ—ինքնուրոյն եւ թարգմանական:

Դ) Մատենախօսութիւն.—քննութիւն հայերեն լեզուով տպագրուող գրքերի. նոյնպես այն օտար գրքերի, որոնց նիւթը նայոց ու Կովկասեան կեանքիցն է առնուած:

Ե) Բոպարական տեսութիւն:

Զ) Ներքին տեսութիւն:

Է) Մանկավարժական ժամանակագրութիւն:

Ը) Այլ եւ այլք:

Թ) Իբրեւ յաւելուած—Եւրոպական եւ ռուսաց ընտիր հեղինակների գրուածների թարգմանութիւն:

Յայտարարութիւններ:

Հրատարակութեան (12 տետրակ) տարեկան գինն ամեն տեղ 8 ր.

Վեց ամսուանը . . . . 5 ր.

Երեք ամսուանը . . . 3 ր.

Մի ամսուանը . . . 1 ր.

---

### Վ՞ՈՒՐԸ ԿԱՆԽԻԿ Է.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցեով. Тифлисъ, Редакція армянскаго журнала „ГОРЦЪ“, Головинская. д. Ананова,—ШИРВАНЗАДЭ.

Արտասահմանից Tiflis (Caucase) Redaction de jurnal „Gortz“. Թիֆլիզում կարելի է ստորագրուել Պ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ մօտ:

---

ՆԵՐԿԱՅ ՀԱՄԱՐԻ ԳԻՆՆ Է ՄԻ ՐՈՒԲԼԻ